ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերլուծական տեղեկագիր

№1 (3)

Երևան – 2007

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՄՀԿ-ում տեղի ունեցած ֆնարկման
սղագրություն (Ջավախքի արդի իրավիճակը) 3

ՔՄՀԿ-ում տեղի ունեցած ֆնարկման
սղագրություն (ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ. քրդական գործոն) 10

Դիցագաղափարական համակարգերը հին եվ նոր
աշխարհակարգերի համատեքստում 20

Եվրոպան և հայ ինքնությունը Հայաստանի հանրային
դիսկուրսում, 2000-2007 թթ. 32

Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսությունների վերջին շրջանի
հարաբերությունների վերլուծության փորձ 43

ՌԴ անդրկովկասյան քաղաքականության որոշ դրույթների շուրջ 57

Սիրիան մերձավորարևելյան քաղաքականության գործոն 65

Իրաք 2003-2007
Իրաքյան հարցին նվիրված ամերիկյան նորագույն հոդվածների տեսություն 76

Փխրուն խոստումները և արտաքին քաղաքականության աղբյուրները.
անդամակցության սահմանափակ ազդեցությունը և տեղական ընտրախավի
առաջնահերթությունը 94

ՔՄՀԿ-ում տեղի ունեցած քննարկման սղագրություն
Ջավախքի արդի իրավիճակը

Զեկուցող՝ *Հանրապետական* ամսագրի գլխավոր խմբագիր Մուշեղ Լալայան

Վերջին երկու տարվա ընթացքում Վրաստանում, մասնավորապես Ջավախքում, տեղի ունեցած իրադարձություններն իրենցով պայմանավորեցին նաև հայ-վրացական հարաբերությունների ձևաչափի փոփոխություններ։

Այսօր Ջավախքի վերաբերյալ տեղեկատվության երկու հիմնական աղբյուր կա, որոնցից և ոչ մեկն իրականում օբյեկտիվ չէ։ Առաջինը ռուսական աղբյուրներն են, որոնց տեղեկատվության համաձայն, հայ-վրացական հարաբերությունները լարված են, իսկ ջավախահայության հիմնախնդիրները՝ բավական սրված։ Հետևաբար անհրաժեշտ է երրորդ պետության միջամտությունը վերոնշյալ խնդիրների լուծման համար։ Երկրորդը Դաշնակցության խողովակներով եկող ինֆորմացիան է, որը նորից խոսում է լարված հարաբերությունների մասին։ Վերջինների կողմից իրավիճակի ներկայացումն այս լույսի ներքո միտում ունի հաստատելու սեփական ազդեցության լծակները։ Սակայն նման մոտեցումը վտանգավոր է, քանի որ ադեկվատ տեղեկատվության բացակայությունը կարող է սխալ որոշումների պատճառ հանդիսանալ։

Իրականում Հայաստանի որոշում կայացնող մարմինները երկու աղբյուրի վրա էլ հույս չեն դնում։ Նրանք ընդունում են այդ տեղեկատվությունը, սակայն Վրաստանի հետ հարաբերությունները կառուցում են այլ տրամաբանությամբ՝ որքան թույլ են տալիս նրանց դիվանագիտական հմտությունները։

Վերջին երկու տարում երկու հիմնարար իրադարձություն է ազդել ջավախահայության հոգեբանություն վրա։

1. Մ. Սահակաշվիլիի իշխանության գալը փոխեց բնակչության հոգեբանական վիճակը։ Վստահություն առաջացավ սեփական երկրի նկատմամբ։ Այսօր մարդիկ ավելի պաշտպանված են զգում, նույնիսկ վրացիներից շատ զգուշացող ջավախահայերը գոհ են սոցիալական ոլորտի փոփոխություններից։ Եթե նախկինում կաշառք տալը սովորական էր, այսօր իրավիճակն այլ է։ Ներկայումս հանցավոր աշխարհի հեղինակությունները կա՛մ դուրս են շպրտված երկրից, կա՛մ ընդհատակ են անցել։

Վրաստանում բարձրաստիճան անձի թիկնապահը չի կարող հանցանք գործել ու հանգիստ ապրել: Ջավախահայերը նույնիսկ դժգոհում են, որ վրացիների հետ սկսել են առանց փողի շփվել, իսկ Հայաստանի սահմանն անցնելիս նման խնդիրներն անմիջապես սկսվում են: Այս ամենը գոհունակություն է առաջացնում ջավախահայերի շրջանում ու փոխում նրանց հոգեբանությունը: Նրանք սկսում են մտածել, որ այդ պետության մեջ հնարավոր է ապագա ունենալ. մնում է ինտեգրվել այդ պետությանը:

2. Ռուսական ռազմակայանի դուրսբերումը և Աջարիայի հպատակեցումը խթանեցին Մ. Սահակաշվիլիի հեղինակության բարձրացումը Վրաստանում: Սահակաշվիլին եկավ որպես հաղթող: Ռուսական զորքերի դուրս գալով ջավախահայության շրջանում հոգեբանական բեկում տեղի ունեցավ. նրանք իրենց անվտանգությունն սկսեցին կապել Հայաստանի հետ՝ այն Հայաստանի, որը հաղթել է Ղարաբաղում:

Ամենաբարդ ու լուծում պահանջող խնդիրը լեզվի խնդիրն է: Այսօր Վրաստանը գիտի, որ հայերին չի կարելի ճնշել, որովհետև հայերը նախ՝ պատասխանելու հնարավորություն ունեն, հետո՝ ռուսների հանդեպ դրական վերաբերմունքը դեռ թարմ է, և վրացիները չպետք է առիթ տան, որ հայերն սկսեն «կարոտել» ռուսներին ու լեռնցուն բնորոշ պահվածք ընդունեն (դա բնորոշ է ջավախահային): Ուստի Վրաստանը, իր շահերից ելնելով, չի ուզում էթնիկական հերթական պրոբլեմը ունենալ և փորձում է հայերին ինտեգրելու միջոցով համոզել նրանց, որ առանց ռուսների էլ ամեն ինչ կարող է լավ լինել: Սա այն փուլն է, որ համապատասխանում է Հայաստանի շահերին, ու եթե ինտեգրման գործընթացը ճիշտ ուղղորդվի, Հայաստանը կարող է շահել:

Վրաստանի խորհրդարանում չորս հայ պատգամավորներից միայն մեկը՝ թբիլիսահայը, գիտի վրացերեն: Բայց այժմ նկատվում է իրադրության փոփոխություն: Եթե երկու տարի առաջ հայերը չէին տեսնում վրացերեն սովորելու անհրաժեշտությունը, ապա հիմա գիտակցում են դրա պահանջը (հատկապես ուժային կառույցներում աշխատող հայերը պաշտոնները պահպանելու համար պետք է տիրապետեն վրացերենին): Պետք է հուսալ, որ հաջորդ ընտրություններում հայ պատգամավորներն առավել ադեկվատ կլինեն ընդհանուր դաշտին:

Խնդրահարույց են մնում դասավանդմանն ու ուսուցմանն առնչվող հարցերը՝ լեզվի, դասագրքերի և դասարանների կազմավորման հետ կապված: Վրացական կողմի պահանջները նույնպես կարելի է օբյեկտիվ համարել, քանի որ Վրաստանի հասարակական, տնտեսական կյանք մտնելու ու որոշակի կշիռ ձեռք բերելու համար, անհրաժեշտ է սովորել Վրաստանի պաշտոնական լեզուն՝ վրացերենը:

Ի դեպ, ռուսական որոշակի շրջանակներ ցանկանում են տեսնել ոչ թե խաշնարածի կյանքով ներփակված, այլ Վրաստանի պետական շրջանակներում որոշակի կշիռ ձեռք բերած ջավախահայերի, որոնք հետագայում կարող են օգտակար լինել իրենց իսկ քաղաքական նպատակների իրագործման համար:

* * *

Թբիլիսահայերի և Վիրահայոց թեմի հետ (նստավայրը՝ Թբիլիսի) ջավախահայերի շփման բացակայությունը ջավախահայերի շրջանում հանգեցրել է առանձին թեմ ունենալու գաղափարին: Սա միայն եկեղեցու հարց չէ, ընդհանրապես ջավախահայերն ու թբիլիսահայերը տարբեր են. թբիլիսահայերն արևելահայեր են (մեծամասամբ ղարաբաղցիներ), իսկ ջավախահայերը՝ հիմնականում արևմտահայեր (էրզրումցիներ, մշեցիներ, ալաշկերտցիներ և այլոք):

Իրականում այսօր Ջավախքի համար ինքնուրույն թեմ ունենալը շատ կարևոր է և սա իրականանալի է: Վիրահայոց թեմի առաջնորդը Ջավախք այցելության ժամանակ կողմ էր արտահայտվել այդ մտքին: Վրաստանում կա երկու վիճահարույց եկեղեցի՝ Սուրբ Նորաշենը և Ախալցխայի Սուրբ Նշանը, որոնք, ըստ պայմանավորվածության, պետք է անցնեն հայերի տրամադրության տակ: Իրականում, Սուրբ Նշան եկեղեցու վիճակն այնքան էլ վատ չէ, ինչպես երբեմն ներկայացվում է տարբեր ուժերի կողմից. երբեմն սխալ ինֆորմացիայի տարածումը հակահայկական տրամադրությունների տեղիք է տալիս:

* * *

Վրաստանի զինված ուժերում ջավախահայերը ժամկետային ծառայություն գրեթե չեն անցնում: Նրանց մի մասն օրինական և ոչ օրինական ճանապարհով ազատվում է ծառայությունից, իսկ մյուս մասը ծառայության է անցնում Հայաստան-Վրաստան սահմանի վրա տեղակայված փոքր հենակետերում, որտեղ իրականում ծառայությունը

ձևական բնույթ ունի: Ապագայում վրացական բանակի պայմանագրային հիմունքների անցման դեպքում նրանք ընդհանրապես կարող են ազատվել այդ պարտականությունից:

* * *

Ջավախքում դեռ լուծված չէ ճանապարհների բարեկարգության խնդիրը: Մ. Սահակաշվիլին նոր է սկսել միջոցներ հատկացնել ճանապարհաշինությանը: Այս խնդրին ծանոթանալու նպատակով վերջերս Ջավախք էր այցելել նաև Վրաստանի վարչապետը: «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակում նախատեսվում է 2009թ. բարելավել Բավրայից մինչև Նինոծմինդա ընկած ճանապարհը: Արդեն պատրաստ է Ախալքալաք-Ախալցխա ճանապարհահատվածը: Եթե այս ճանապարհները բարեկարգվեն, որում շահագրգիռ է նաև Վրաստանը, ապա կարող է աճել Վրաստան այցելող հայ զբոսաշրջիկների թիվը (Բավրայից Վրաստան մտնող ճանապարհը, ըստ էության, հեշտացնում է զբոսաշրջիկների շարժը դեպի Քոբուլեթի, Բաթումի, Ուռեկի և այլուր):

1993թ. Հայաստանին հնարավորություն տրվեց Վրաստանում կառուցել Բավրա–Նինոծմինդա ճանապարհը, սակայն շինարարական աշխատանքների անորակ լինելու պատճառով այն մեկ տարի անց արդեն քայքայվել էր:

Ջավախքում չկան գործարաններ ու աշխատատեղեր: Հիմնական եկամուտները ջավախահայության շրջանում Ռուսաստանից եկող տրանսֆերտներն են: Տարեկան կտրվածքով ամեն ընտանիք ստանում է միջինը 3-4 հազ. ԱՄՆ դոլար:

Ջավախահայության կապը Ռուսաստանի հետ իրականում շատ սերտ է, իսկ «խոպան» երևույթը՝ շատ տարածված: Ինչպես նշվեց, թեև Ջավախք մտնող ֆինանսական ռեսուրսների ծավալը բավական մեծ է, դրանք չեն ծառայում գյուղերի վիճակի բարելավմանը: Փոխարենը՝ այդ կապիտալը կամաց-կամաց բերվում է Երևան, ինչն էլ նպաստում է ջավախահայերի հոսքին դեպի Երևան: Եթե այսպես շարունակվի, այդ կապիտալը ջավախահայության հզորությունն ավելացնելու տեսանկյունից ոչ մի նշանակություն չի ունենա: Հարկավոր է ճանապարհներ գտնել այդ կապիտալի ներդրումը Ջավախքում կազմակերպելու համար:

Ակնհայտ է, որ Ջավախքի քաղաքական, մտավոր ընտրանին պետք է ինտեգրվի Վրաստանի հասարակական-քաղաքական կյանքին: Նրանք պետք է վեր կանգնեն հոգեբանական ճնշվածությունից ու գիտակցեն, որ իրենք էլ կարող են ավանդ ունենալ Վրաստանի զարգացման գործում: Երկրորդ՝ կապը Հայաստանի ու Ջավախքի միջև ավելի իմաստավորված պետք է լինի: Անհրաժեշտ է փոխանակման ընդհանուր դաշտ (վերջերս Վրաստանում UNDP-ի անցկացրած հետազոտությունների արդյունքում պարզվել էր, որ Ջավախքի ու Հայաստանի հյուսիսային շրջանների միջև սոցիալ-տնտեսական կապ գրեթե գոյություն չունի):

Թբիլիսահայության հետ պետք է աշխատել եկեղեցական խողովակների միջոցով կամ հարկավոր է այնպիսի բիզնես նախագծեր իրականացնել, որ ֆինանսական ռեսուրսներ ունեցող ջավախահայերը տնտեսական շահերով կապվեն Թբիլիսիի հետ:

Ի տարբերություն ջավախահայերի, Ախալցխայի հայերի շրջանում ինտեգրվելու միտումներն ավելի մեծ են, քանի որ նրանք առավել ակտիվ շփումներ ունեն վրացական շրջանակների հետ: Բացի այդ, Ախալցխան միշտ էլ ավելի ինտերնացիոնալ քաղաք է եղել: Բայց եթե 20 տարի առաջ քաղաքի հիմնական լեզուն հայերենն էր (այստեղ ապրում էին հույներ, հրեաներ և այլ ժողովուրդներ), և նույնիսկ վրացիները շատ լավ հայերեն էին խոսում, ապա այսօր քաղաքի լեզուն վրացերենն է:

Եվ վերջին էական կետն այն է, որ մեր գիտական, լրատվական դաշտի այն անձինք (հատկապես ոչ ջավախյան ծագում ունեցողները), որոնք այսպես թե այնպես գրում և կարծիք են հայտնում վիրահայության մասին, պետք է առաջին հերթին շփում ունենան ու կապեր հաստատեն նրանց հետ:

* * *

Ջավախահայերի շրջանում փոփոխվում է նաև Ռուսաստանի հանդեպ եղած նախկին՝ իբրև ֆիզիկական անվտանգության երաշխավորի ընկալումը: Նույնը չի կարելի ասել տնտեսական կապերի մասին, որոնք նախկինի պես շատ սերտ են: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա ջավախահայերն ամերիկացիների նկատմամբ դեռ հստակ ձևավորված մոտեցում չունեն: Այս պատկերը, սակայն, ապագայում կարող է փոխվել, եթե Ջավախքում ակտիվ գործունեություն ծավալեն ՀԿ-ները և բարեգործական ընկերությունները:

Անվտանգության սպառնալիք է դիտարկվում նաև երկաթգծի անվտանգությունն ապահովելու պատրվակով թուրքական կողմի հնարավոր ռազմական կամ ռազմականացված խարիսխների ներկայությունն այս տարածքներում:

Մեկ այլ սպառնալիք է դիտվում մեսխեթցի թուրքերի վերադարձի հեռանկարը: Մինչև ստալինյան գաղթը մեսխեթցիները հիմնականում բնակվել են Փարվանայի ու Քուռ գետի հատման հովտում, ուր այսօր էլ նրանց բնակավայրերի հետքեր կան: Որքանո՞վ է Վրաստանը շահագրգիռ նրանց վերադարձով: Մինչև վերջերս նրանց վերադարձն արտոնող օրենսդրական բազան բացակայում էր: Ըստ էության, հիմնական եկողները լինելու են Ադրբեջանից, որովհետև Կրասնոդարի մեսխեթցիները մեծ մասամբ գաղթել են ԱՄՆ: Հավանական չէ, որ նրանք գան կոնկրետ Ախալքալաք. նախ՝ բնակլիմայական պայմանները հարմար չեն, հետո՝ դժվար է ասել, թե որքանով է վրաց ժողովուրդը պատրաստ ընդունել նրանց, քանի որ մեսխեթցիների բնակավայրերում այսօր վրացիներ են ապրում: Այսօր դեռ պարզ չէ, թե մեսխեթցիներն ինչպես են գալու, որտեղ են բնակվելու և այլն:

* * *

Այս խճանկարում կարևոր հարցերից է մնում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը վերոհիշյալ խնդիրների նկատմամբ: Իրականում Ջավախքում սոցիալական կյանքի հետ կապված խնդիրներն (արտագաղթ և գործազրկություն) ավելի սուր են, քան Հայաստանի որևէ սահմանամերձ գոտում: Ջավախքից եկող ինֆորմացիան տարաբնույթ է, և այստեղ կարևոր է Հայաստանի Հանրապետության կողմից հավասարակշռված քաղաքականության վարումը: Հայաստանի շահերից չի բխում Ջավախքի հարցում Վրաստանի հետ հարաբերությունների սրումը:

Այսօր անհրաժեշտ է ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում մշակել կոնցեպտուալ մոտեցումներ Վրաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ. դրանցում պետք է հստակ ձևակերպվեն նաև ջավախահայությանն ու վիրահայությանը վերաբերող հիմնահարցերը: Եթե Երևանն իրոք ուզում է քաղաքական ազդեցություն ունենալ Թբիլիսիում, ապա անհրաժեշտ է նախ Վրաստանի քաղաքական կենտրոններում ապահովել համապատասխան ուժերի ներկայությունը: Բացի այդ, հարկավոր է ունենալ տնտեսական լծակներ՝ գործընթացների վրա անմիջական

ազդեցություն գործելու նպատակով: Այս ամենը պետք է պլանավորվի Երևանում, իսկ Երևանում մշակված քաղաքականության իրականացման համար Հայաստանը Վրաստանում ունի համապատասխան լծակներ: Աշխատանքը կարող է հեշտանալ այն պատճառով, որ Վրաստանում նպաստավոր իրավական դաշտ է ստեղծվել: Հետագայում այս հնարավորությունները կարող են չկրկնվել:

Այս ամենն իր հերթին հնարավորություն կտա ձևակերպել հավասարակշռված դիսկուրս երկու երկրների հարաբերություններում՝ խուսափելով ծայրահեղություններից:

ՔՄՀԿ-ում տեղի ունեցած ֆնարկման սղագրություն
ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններ. քրդական գործոն

Զեկուցող՝ քաղաքական վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսյան

Խնդիրը դիտարկվելու է մասնավորապես չորս տարբեր տեսանկյունից։

Նախ՝ կդիտարկվեն ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների զարգացման ընդհանուր հիմքերը։ Երկրորդն այս հարաբերությունների զարգացման հեռանկարն է իրաքյան պատերազմի կոնտեքստում։ Երրորդը քրդական հարցի զննումն է, և չորրորդն այս հարաբերությունների էներգետիկ բաղադրիչն է։

Կներկայացվի նաև քրդական գործոնի կարևորությունը Հայաստանի համար։

Նշենք, որ քրդական հարցի կարևորությունը հատկապես ԱՄՆ-Թուրքիա ռազմական հարաբերություններում նոր չէ։ Մինչև իրաքյան պատերազմը և անգամ մինչև 2001թ. սեպտեմբերի 11-ը կարող ենք նկատել մի կարևոր մոտեցում. ԱՄՆ-ը Թուրքիային դիտարկում էր ոչ այնքան դաշնակից, որքան տարածաշրջանային խաղացող Կովկասում և Կենտրոնական Ասիայում՝ իբրև Սովետական միության դեմ օգտագործվող ուժ։

Երկրորդ ուշագրավ փաստն այն է, որ սեպտեմբերի 11-ից հետո Թուրքիայի նկատմամբ ամերիկյան ռազմավարական ընկալումները՝ որպես դաշնակցի դերակատար, փոխվեցին։ Կարևորվում է Թուրքիայի մուտքը ԵՄ՝ իբրև աշխարհիկ մուսուլմանական պետության օրինակ ահաբեկչության դեմ պատերազմի կոնտեքստում։ Այս ամենն, իհարկե, դիվանագիտական PR էր, սակայն շատ հետաքրքիր է ԱՄՆ-ի ռազմական քաղաքականության նոր հեռանկարում։

Սեպտեմբերի 11-ից հետո ամերիկյան ռազմական քաղաքականության արդյունքում ռազմական բազաների ցանց ստեղծվեց Կենտրոնական Ասիայում, և պատմության մեջ առաջին անգամ ռազմական ներկայություն ապահովվեց Հարավային Կովկասում՝ Վրաստանում և Ադրբեջանում։ Իրաքյան պատերազմից առաջ ԱՄՆ-ը թուրքերին դիտում էր իբրև գործընկերներ՝ միևնույն ժամանակ չցանկանալով նրանց վերապահել նավթային պաշարների տեղափոխման հանգուցային գործոնի դերը։

Առավել անցանկալի էր Անկարայի և Բաքվի միջև ռազմական հարաբերությունների ամրապնդումը։

Երկրորդը իրաքյան պատերազմի արդյունքում ձևափոխված ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն են. պատերազմի հենց սկզբում ԱՄՆ-ի առաջին բախումը տեղի ունեցավ Թուրքիայի և ոչ թե Իրաքի հետ, երբ թուրքական պառլամենտը մերժեց ամերիկյան զորքերի տեղակայումը Թուրքիայի տարածքում և հյուսիսից Իրաք ներխուժելու համար թուրքական տարածքի օգտագործումը։

Սա շատ կարևոր է. եթե Թուրքիայում դա դիտարկվում էր իբրև ազգային անվտանգության հարց, ԱՄՆ ռազմական շրջանակներում այն դիտարկվեց իբրև դավաճանություն։ Այդ քայլի արձագանքները մինչ օրս առկա են։ ԱՄՆ-Թուրքիա ռազմական հարաբերություններում նման իրավիճակը չպետք է թերագնահատել. Թրումենի նախագահությունից ի վեր առաջին անգամ Թուրքիան դիտարկվեց իբրև ոչ այնքան վստահելի ռազմական դաշնակից։ Սա ուշագրավ շրջադարձ էր, եթե հիշենք, որ Թուրքիան մասնակցություն է ունեցել կորեական պատերազմում, եղել է ՆԱՏՕ-ի կազմում, երկու համաշխարհային պատերազմից հետո բոլոր նման ուժային հարցերում եղել է ԱՄՆ-ի կողքին, և, փաստորեն, առաջին անգամ Թուրքիան մարգինալացվում է։

Այս ամենն ավելի հստակ արտահայտվում է իրաքյան պատերազմի երեք դրվագներում.

Առաջին՝ ամերիկյան զինվորները ձերբակալել և զինաթափել են Իրաքում գործող թուրք հրամանատարներին (իբր նրանք թուրքամետ գործողություններ են իրականացրել՝ նպատակ ունենալով ապակայունացնել Քրդական տարածաշրջանային ղեկավարության դիրքերը)։ Սա լարվածության ամենից ակնառու ցուցիչն էր։ Պետք է նշել, որ առաջին անգամ ՆԱՏՕ-ի անդամ դաշնակից երկիրն այսպես ակնառու մերժում է ԱՄՆ-ի ռազմական ծրագրերը։

Երկրորդ՝ թուրքական հրամանատարներին ձերբակալեցին՝ մեղադրելով Իրաքի թուրքամետ փոքրամասնությունների շրջանում հատուկ զինավարժությունների անցկացման մեջ։ Իսկ սա մի տեղամաս էր, որն իրաքյան նոր պայմաններում համարվում էր դաշնակիցների վստահելի վայր։

Երրորդ՝ ոչ պակաս կարևոր է քրդական հարցը, որն այսօր ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում դարձել է լուրջ լարվածության առարկա։

Թուրքիայի պնդումն Իրաքի տարածքային ամբողջականության վերաբերյալ ցույց է տալիս քրդական հարցի կարևորությունը։

Չորս գործոն են բաժանում ԱՄՆ-Թուրքիա մոտեցումներն Իրաքի հարցում.

Առաջինը վերաբերում է Իրաքի ապագային. ո՞րն է լինելու Իրաքի ապագան. առավել հնարավոր սցենարն Իրաքի միասնական պետության վերացումն է և շիական, սուննիական ու քրդական մասերի ստեղծումը։ Սա այն է, ինչից թուրքական կողմը շատ է վախենում։ Քրդական գործոնի նկատմամբ հետաքրքրության մեծացումը վտանգում է թուրքական պետության տարածքային ամբողջականությունը, Թուրքիայի ազգային անվտանգությունը։ Ընդ որում, քրդական փոքրամասնությունները մոբիլացվում են Արևմտյան Հայաստանի տարածքում։

Երկրորդ կարևոր կետն այն է, որ քրդերն իրաքյան հարցում ԱՄՆ-ի միակ գործընկերներն են թե' այսօր և թե' ապագայում։

Երրորդ՝ քրդերը կարող են իբրև զենք օգտագործվել ամերիկացիների կողմից Իրանի դեմ պայքարում (դա ավելի քիչ հավանական է Սիրիայի հարցում, սակայն հնարավոր է)։ Այլ կերպ ասած՝ քրդերի խնդիրը, շահարկվելով ազգային փոքրամասնությունների խնդիրների և ոչ թե շիա-սուննի հակամարտության համատեքստում, իրանյան ռեժիմը ներսից ապակայունացնելու միջոց է։ Այս գործելաձևը դրված է ամերիկյան քաղաքականության օրակարգում (ընդգրկելով նաև Ադրբեջանն ու Իրաքը)։ ԱՄՆ-ը նաև տնտեսական օպերացիաներ է իրականացնում Իրանի ապակայունացման համար՝ գազի գների դեմ բողոքներ և այլն, որ կարող են լուրջ պոռթկումներ առաջացնել երկրի ներսում։ Նոր Իրաքում քրդերն ամերիկացիների համար դիտվում են հույսի խորհրդանիշ, իբրև ԱՄՆ-ի դիրքի և ներկայության խարիսխ։

Ըստ ԱՄՆ-ի ռազմավարական ծրագրերի՝ Իրաքում ամերիկյան ներկայության երկու ձև կարող է լինել. առաջինը, ինչպես Հյուսիսային Կորեայում էր, ամերիկյան ռազմական ուժերը կենտրոնացնել հասարակությունից դուրս՝ հեռու աշխույժ շրջաններից՝ որպես ռազմական ամրոցներ։ Ռազմական քաղաքականության երկրորդ

ասպեկտն այսօր ոչ թե զորքերի ավելացումն է, ինչպես հաճախ ներկայացվում է, այլ Իրաքում՝ Իրանի սահմանի երկայնքով ռազմական ուժի վերջնական հաստատումը:

Քրդական պրոտո-պետության կամ քրդական գործոնի ուժեղացման չորրորդ կետը վերաբերում է էներգետիկայի, հատկապես նավթի ոլորտին և այդ ոլորտում քրդերին տրվող դերի աճին: Օրինակ՝ սեպտեմբերին տեխասյան Hunt Oil նավթային ընկերությունը, որը վերահսկում է Ջորջ Բուշ Կրտսերի հանրապետական մտերիմներից մեկը, նավթային համաձայնագիր է ստորագրել Քրդական տարածաշրջանային ղեկավարության հետ՝ շրջանցելով իրաքյան էլիտան ու Բաղդադը: Ֆրանսիական, ամերիկյան, կանադական և անանուն կազմակերպությունների կողմից (դրանք մամուլում հայտարարվում են իբրև ռուսական) նավթամշակման, նավթարդյունահանման չորս նոր պայմանագիր է ստորագրվել ոչ թե իրաքցիների, այլ քրդերի հետ: Նավթամշակման գործարանների վերաբերյալ այս գործարքներն արժեն ընդամենը ութ հարյուր միլիոն դոլար, ինչը նավթային բիզնեսում մեծ թիվ չէ, սակայն դրանց կարևորությունն այն է, որ ստորագրվել են Քրդական տարածաշրջանային ղեկավարության միջոցով և ոչ թե Բաղդադի: Իրաքի էներգետիկայի նախարարը քննադատել է այս բոլոր պայմանագրերը՝ դրանք համարելով անօրինական: Այս ամենը դիտարկվում է իբրև ալ-Մալիքի ղեկավարության հետ լարվածության և դժգոհության արտահայտություն:

Փաստորեն տեխասյան կազմակերպության և չորս նոր պայմանագրերի օրինական կնքումը նշանակում է, որ ամերիկացիները ցանկանում են ուժեղացնել քրդերի դիրքերը: Ամերիկացների համար էներգակիրներով հարուստ գոտին արժեք չունի, եթե այդ էներգակիրները տեղափոխող հնարավորություններ չկան: Սա վերաբերում է նաև քրդական խնդրին:

Հարկ է նշել, որ իրաքյան պատերազմը միայն էներգետիկայի շուրջ չէր, ինչպես կարծում են շատերը: Նավթը պատճառ էր, բայց ոչ առաջնայինը և միակը: Եթե օբյեկտիվ գնահատենք նավթի արդյունահանման և արտահանման ծավալները Սադդամ Հուսեյնից առաջ և դրանից հետո, ապա կնկատենք, որ այսօր ավելի քիչ նավթ է արտահանվում արտաքին շուկա: Իրաքյան պատերազմն ԱՄՆ-ի ռազմավարական գործընկերներին ուժեղացնելու նպատակ ուներ, և դա է պատճառը, որ քրդերն այսօր

ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության հարցում նոր և հետաքրքիր դաշնակիցներ են: Սա պայմանավորված է նաև նրանով, որ քրդերն այսօր տարածաշրջանում կրոնական բնույթի հակասություններ չեն առաջացնում:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ այսօր Քրդստանում ակտիվ է ոչ միայն ԱՄՆ-ը, այլև Իսրայելը, որը էներգետիկ, առևտրային ու հեռահաղորդակցման ոլորտներում քրդերի ամենաակտիվ գործընկերն է: Սա չափազանց կարևոր է. փաստորեն չի բացառվում թուրք-իսրայելական ռազմավարական հարաբերությունների անկման հեռանկարը:

Ի՞նչ նշանակություն ունի կամ կունենա Քրդական հարցը Հայաստանի համար: Ի տարբերություն ՀՀ արտգործնախարարության այն տեսակետի, թե ետպատերազմյան Իրաքում տեղի ունեցող իրադարձությունները կամ քրդական հարցի այս կամ այն զարգացումը որևէ գործնական ազդեցություն կամ դեր չունեն Հայաստանի համար, բացի մեկից, այն է՝ Թուրքիայի ապակազմավորում, մենք համարում ենք, որ քրդական հարցը լուրջ մարտահրավեր է Թուրքիայի համար՝ ավելի ճնշող, քան օրինակ Ղարաբաղյան հարցը, կամ որևէ հարց Կովկասում, կամ, եթե կուզեք, նաև հայ-թուրքական հարաբերությունները:

Հատկապես Հրանտ Դինքի սպանությունից հետո հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանն ուղղված ամենից ակտիվ լոբբին, որը թուրքական ռազմական ուժերում է (ամերիկամետ գեներալներ), ցանկանում է հայ-թուրքական սահմանի բացումն առանց նախապայմանների (ոչ մի խոսք Ցեղասպանության ճանաչման մասին), և, իհարկե, առանց դիվանագիտական հարաբերությունների հաստատման:

Ինչու՞. միայն և բացարձակապես քրդական հարցի պատճառով: Առաջին անգամ տնտեսական հարաբերությունների բարելավումը կամ զարգացումը Հայաստանի և Թուրքիայի միջև Թուրքիայի ազգային անվտանգության տեսակետից դիտարկվում է անհրաժեշտություն սահմանային քրդաբնակ շրջանների իրավիճակի կայունացման համար: Նման զարգացումն ավելի շահավետ է թուրքական կողմի համար: Քրդական հարցի լուծման՝ թուրքական զինվորականության սցենարն ավելի կոմպլեքս է, քան ամերիկյան ծրագիրը: Թուրքերը ներքին և խորքային հարցեր են լուծում. Թուրքիայի

քրդերը Թուրքիայի քրդերն են, իսկ Իրաքի քրդերն այլ են: Թուրքիան փորձում է համոզել ԱՄՆ-ին հասկանալ այս տարբերությունը:

Վերջին երեք տարիներին ԱՄՆ-ի քաղաքականությունը միտումներ ունի PKK-ի հարցը դիտարկել ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների կոնտեքստում:

Ըստ թուրքական պաշտոնական տվյալների՝ Թուրքիայում այսօր կա ընդամենը 1500-2000 ակտիվիստ PKK-ական, իսկ Հյուսիսային Իրաքում՝ 3600-4000:

Ի՞նչ են անում թուրքական ռազմական ուժերը. ամեն հոկտեմբեր ամսին (քանի դեռ ձյունն անանցանելի չի դարձրել լեռնային ճանապարհները), իբրև ավանդույթ, ռազմական գործողություններ են իրականացնում քրդերի նկատմամբ, դրանով իսկ խափանելով Հս. Իրաքից PKK-ի գրոհայինների ռազմական մատակարարումը:

Թուրքական ռազմական քաղաքականության մեջ ներկայում երկու նոր զարգացում է դիտարկվում: Առաջինը ռազմավարության փոփոխությունն է. կայուն, պրոֆեսիոնալ ռազմական ուժեր օգտագործելու փոխարեն թուրքերն սկսել են օգտագործել նորակոչիկներ: Երկրորդ՝ նրանք օգտագործում են գյուղական շրջանների քրդերին՝ տեղական ոստիկանության գործառույթներն իրականացնելու համար: Հետաքրքրական է նաև նոր ռազմական հետախուզական, այսպես կոչված, «սխալ դրոշակի» քաղաքականության կիրառումը. թուրքերին՝ իբրև PKK-ի անդամներ, ուղարկում են՝ հետախուզելու տարածքը, զինապաշարի առկայությունը:

Մյուս կողմից, Թուրքիայում մեկ այլ տակտիկա են օգտագործում PKK-ականները: 2007թ. սեպտեմբերի 13-ին Թուրքիայում PKK-ականներն առաջին անգամ ահաբեկչական գործողություններում օգտագործեցին Հս. Իրաքի PKK-ականների տակտիկան: Թուրքիայի քրդական տարածքում ավտոբուսի վրա հարձակումը և 12 թուրքերի սպանությունը, որը պատասխան էր թուրքերի կողմից PKK-ի լիդերներից մեկի կնոջ սպանությանը, տիպիկ իրաքյան PKK-ականների պահվածք էր: Այս արարքը ցույց տվեց թուրքերի դեմ քրդական պայքարի նոր ձեռագիրը, որի բնորոշիչներն են Իրաքից բերված զենքը և իրաքյան PKK-ականների կազմակերպած ռազմական մարզումները: Առաջին անգամ կարող ենք տեսնել մահապարտների ահաբեկչական հարձակումներ:

Տակտիկայի նման փոփոխությունը նշանակում է, որ առաջիկայում Թուրքիայի քրդերը կանցնեն իրաքյան քրդերի գործելաոճի հաջորդ փուլերին (մարդկանց

առևանգում, գլխատում և այլն)։ Նրանք ազդելու են նաև թուրքական հասարակական կարծիքի վրա։ Հետաքրքրքական է, որ Թուրքիայում PKK-ի կողմից կիրառվում են ամերիկյան ռազմական սպառազինությունները և սարքավորումները, որոնք մատակարարվել էին Հյուսիսային Իրաքի քրդերին։ Փաստորեն ամերիկյան զենքն օգտագործվում է թուրքերի դեմ։ Արդյունքում՝ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն ավելի են վատթարանում։

* * *

Իբրև եզրակացություն նշենք, որ այս ամենը կարող է անուղղակիորեն ազդել ցեղասպանության հարցի վրա, իսկ հայ-թուրքական ապագա հարաբերությունների վրա՝ ուղղակիորեն։ Չմոռանանք, որ տասնամյակներ շարունակ և մինչ այսօր Պենտագոնը և ԱՄՆ-ի ռազմական ուժերը պաշտպանել են Թուրքիային Կոնգրեսում ցեղասպանության բանաձևերի քննարկման և ընդունման կանխման հարցում՝ դա պատճառաբանելով ՆԱՏՕ-ում Թուրքիայի անդամությամբ։ Եթե սրան գումարենք նաև տարածաշրջանում և հատկապես Թուրքիայում հակամերիկյան տրամադրությունների ուժեղացումը, ապա կարող ենք եզրակացնել, որ ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններն ավելի շուտ վատթարանալու են, քան բարելավվելու։

Սա եզակի հնարավորություն է. Թուրքիայի ռազմական շրջանակներում և անվտանգության գերատեսչություններում հայ-թուրքական սահմանի բացումը գիտակցվում է իբրև իրենց շահերից բխող գործողություն։ Որոշ քաղաքագետներ գտնում են, որ եթե սահմանը բացվի, և տնտեսական հարաբերություններ սկսվեն, դրանց կհետևեն դիվանագիտական հարաբերությունները, քանի որ անհրաժեշտություն կառաջանա կարգավորել հարկային, մաքսային, անվտանգության և այլ հարցեր։ Փաստորեն հայ-թուրքական հարաբերությունների կայունացման և անվտանգության համար ավելի կարևորվում են տնտեսական հարաբերությունները։

Կարևոր հանգամանք է, որ Հայաստանն ամերիկացիներին և եվրոպացիներին առաջարկում է կայուն, բնական միջնորդի խաղահարթակ, որը կներառի Իրանը, նաև քրդերին, թե՛ Միջին Արևելքում, թե՛ դրանից դուրս։

ՀՀ արտաքին քաղաքականության ընտրության հնարավորությունները բավական սահմանափակ են, իսկ կոմպլեմենտար քաղաքականության հավասարակշռությունը վաղուց խախտված է: Ռուսաստանից մեծ կախվածությունը Հայաստանի արտաքին քաղաքականության համար նկատելի դժվարություններ է ստեղծում: Ռուսաստանը Հայաստանը դիտարկում է իբրև պլատֆորմ տարածաշրջանում էներգետիկ ծրագրերի իրականացման համար (էներգետիկայի վաճառք Թուրքիային, Իրանին, վերամշակման գործարաններ և այլն) և ոչ թե որպես գործընկեր: Հայաստանի համար կարևոր է օգտագործել Թուրքիայում ձևավորված նոր իրադրությունը, թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության փոփոխությունները և դրանց արդյունքում ձևավորվող նոր գիտակցումը: Հայաստանի արտաքին քաղաքականության ձևավորողը պետք է լինի ոչ թե սփյուռքը, այլ ՀՀ-ն. սփյուռքը պետք է լինի ոչ թե առաջարկող, այլ հետևող: Կարևոր է, որ երկրի կառավարությունը կարողանա ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը և օգտագործի այդ հնարավորությունները: Կարևոր մի հարց ևս. այսօր թուրքական ղեկավարության շատ անդամներ Ադրբեջանի հետ խնդիրներ են տեսնում՝ գիտակցելով, որ իրենց ընտրության հնարավորությունները սահմանափակվել են (ներառյալ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունները): Նրանք համարում են, որ թուրքական արտաքին քաղաքականությունը պատանդ է դարձել Ադրբեջանին ու Լեռնային Ղարաբաղի խնդրին, ինչը զրկել է Թուրքիային ինքնուրույն արտաքին քաղաքականության հնարավորությունից:

Կարևոր նկատառումներ

Սահմանի բացումն առանց դիվանագիտական հարաբերությունների ճիշտ չէ: Սահմանը կարելի է փակել, իսկ թուրքական դիվանագիտությունն այնքան ճկուն է, որ բացելու դեմ կարող է ստիպել շատ թանկ վճարել, երկրորդ՝ սահմանի բացումն առանց համապատասխան դիվանագիտական ու իրավական օրենքների կարող է անկանխատեսելի իրավիճակներ ստեղծել: Երրորդ՝ դիվանագիտական հարաբերություններն անվտանգության երաշխիք են, իսկ սահմանի բացումը՝ ոչ:

Մյուս նկատառումը. քրդական հարցի վերաբերյալ մեր արտաքին քաղաքականությունը բացարձակ անգործության է մատնված 1993թ-ից ի վեր: Քրդական

պրոբլեմը մեզ հետ անմիջապես կապված խնդիր է: Իսկ մենք, ցավոք սրտի, խուսափում ենք այս հարցի վերաբերյալ ոչ միայն դիվանագիտական քննարկումներից, այլև անվտանգության մարմինների միջև հարաբերություններ ստեղծելուց:

Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ ԱՄՆ-ն անկախ քրդական պետություն է ուզում միայն Իրաքի կոնֆեդերացիայի կազմում, ոչ թե քրդերի լիակատար անկախություն: ԱՄՆ-ն արդեն ունի թշնամիներ տարածաշրջանում՝ Աֆղանստան, Իրան և նա չի ուզում մեկ այլ թշնամի՝ ի դեմս Թուրքիայի: ԱՄՆ-ի շահերից չի բխում նաև Թուրքիայի ապակայունացումը, ուստի հայ-քրդական հարաբերությունների սերտացմանն ուղղված քաղաքականությունը հակասական հեռանկար ունի:

Բացի այդ, ցանկացած երկիր, այդ թվում ԱՄՆ-ը, ռազմավարական առումով ընդլայնվելով, կարիք ունի վերաձևավորել իր ենթակառույցները, առանց որի նախ՝ հնարավոր չէ ինֆորմացիոն փոխտեղեկատվություն ապահովել, երկրորդ՝ հնարավոր չէ ապահովել այդ տարածքներն անհրաժեշտ բոլոր տեսակի ռեսուրսներով: Ինչ-որ ժամանակ պետք է դադարեցնել ընդարձակման քաղաքականությունը և մտածել ապագայի մասին: Կա ազգային անվտանգության մինիմում և մաքսիմում. մինիմումն՝ ինքնությունն է. եթե ազգային ինքնությունը բարձր մակարդակի վրա է, ապա հասարակությունը կարող է առաջընթաց ապրել, իսկ մաքսիմումն այն է, երբ ինքնությունն ավելի նեղ է, քան տարածքը, և պետությունն ու հասարակությունը անկում են ապրելու:

Երրորդ. թեև Կարս-Ախալքալաք երկաթգիծը, ինչպես և Բաքու-Ջեյհան խողովակաշարը մեծապես դիտվում են որպես Հայաստանի տարածաշրջանային մեկուսացմանն ուղղված ծրագրեր, այդուհանդերձ դրանք ունեն նաև այլ նշանակություններ կողմերի համար: Հատկապես Կարս–Ախալքալաքը կարևոր է Թուրքիայի արևելյան շրջանների մեկուսացվածության նվազեցման, ինչպես նաև վրացական սահմանին ներկայություն ապահովելու տեսակետից: Կարևոր է նաև հասկանալ, որ հարցն ավելի շատ կապված է Ախալքալաք-Ախալցխա պրոբլեմի հետ, քան բուն Հայաստանի: Հայաստան-Վրաստան-Թուրքիա եռանկյունու հարցը միշտ անտեսվում է:

Հայ-թուրքական հարաբերությունների մասին խոսելիս կարևոր է հստակ որոշել դիտարկման ուղղվածությունը՝ քաղաքական ու աշխարհաքաղաքական հարթություն,

թե դիցագաղափարական համակարգ: «Միֆի» գաղափարը հին սփյուռքի համար շատ կարևոր է. դա Ավետյաց երկրի կորստի հայտնի միֆն է, վերադարձը դեպի այդ հայրենիք/վերադարձ դրախտ: Իսկ թուրքերի մոտ կա մեծ կայսրության կորստի միֆը: Երկուսն էլ ընկած են ինքնության հիմքում: Մեզ՝ հայաստանցիներիս համար սա փոքր-ինչ բարդ է հասկանալ, որովհետև մենք ԽՍՀՄ-ի ժամանակ էլ ունեցել ենք բարձր կառույցներ: Սփյուռքում էթնիկական ինքնապաշտպանությունը շատ ավելի ցածր մակարդակի վրա է: Այսինքն՝ միֆի գաղափարը հին սփյուռքի համար չափազանց կարևոր է: Ռեալ վերադարձ կա, թե ոչ, արդեն քաղաքականության խնդիրն է: Ինչու՞, որովհետև ներկայում մեր պատմական հողերում՝ Արևմտյան Հայաստանում, մենք ժողովրդագրական հիմք չունենք, ինչն էլ թուլացնում է տարածքային պահանջատիրությունը: Կան ծպտյալ հայեր, բայց նրանք ինքնության շուրջ միավորում չունեն, այսինքն՝ կառույցի և համակարգվածության մակարդակի վրա չեն: Այս երկու՝ դիցագաղափարական ու աշխարհաքաղաքական համակարգերից բխող գաղափարները, կարող են ինչ-որ տեղ համընկնել ցանցապետության դեպքում:

Դիցագաղափարական համակարգերը հին եվ նոր աշխարհակարգերի համատեքստում

Յուրաքանչյուր պատմական ժամանակահատվածին հատուկ քաղաքակրթական համակարգի շրջանակներում գոյություն ունեցող և այդ համակարգի առանցքային սկզբունքների հիման վրա գործող հասարակության ձևն արտահայտվում է միֆերով, որոնց միջոցով ամրագրվում և տարածվում են տվյալ հասարակության համար սկզբունքային բնույթ ունեցող նորմերը։ Ներկա ժամանակաշրջանի համար ակտուալ է միայն մի քաղաքակրթական համակարգ՝ ինֆորմացիոն (չնայած երբեք չի կարելի անտեսել այն, որ միաժամանակ պահպանվում են նախորդ քաղաքակրթական համակարգերից մնացած հետքերը՝ արժեքներ, կառույցներ, նորմեր և այլն), որը և կատարում է համակարգող և կարգավորիչ դեր բազմաթիվ և տարաբնույթ մշակութային արեալներից ծնվող և տարածվող ինֆորմացիոն ազդակների առումով։ Ներկայի ինֆորմացիոն քաղաքակրթության համար առավել բնորոշ է դիցաբանական համակարգի տիրաժավորումը։ Սա հատկապես ուղղված է այդ համակարգի այն տարրերի պատճենահանմանը և բազմացմանը, որոնք միֆերի միջոցով ամրագրում են հասարակության ապրելակերպի և մտագործունեության պատկերները, ինչն իրականացվում է հիմնականում զանգվածային (մասսայական) կուլտուրայի[1] մեխանիզմների կիրառման միջոցով։

Բոլոր դիցաբանական համակարգերի հիմնական նպատակադրումներից մեկը նշված համակարգի համար առանցքային Աշխարհի/Տիեզերքի[2] կամ Նոր Աշխարհի միֆոլոգեմի ձևավորումն է, որի հիման վրա արդեն կանխորոշվում են այդ աշխարհը բնութագրող հիմնական չափանիշները կամ պարամետրերը՝ տարածությունը և ժամանակն արտահայտող միֆոլոգեմները, որոնք էլ որոշում են այդ արարված Աշխարհում գոյության, կյանքի ընկալումները, գոյի շարժումը։

Նոր Աշխարհի արարման միֆոլոգեմը կարող է արտահայտվել երկու եղանակով. առաջին եղանակը կապված է Արարչի կողմից Տիեզերքի արարման գործողության նկարագրման հետ, իսկ երկրորդը՝ Հին Աշխարհի քանդման կամ ոչնչացման և Նորի

[1] «Կուլտուրա» եզրը սույն հոդվածի մեջ օգտագործվում է միայն «մասսայական» ածականի հետ՝ հակադրվելով «մշակույթ» եզրին։

[2] Այսինքն՝ ի տարբերություն Քաոսի, կանոնակարգված և օրինաչափությունների շրջանակներում գոյություն ունեցող Աշխարհ։

արարման հետ: Այս երկրորդ եղանակն ավելի բնորոշ է Դեմիուրգի[3] համար, քան Արարչի:

Ժամանակակից աշխարհի բրենդա–գովազդային դիցաբանական համակարգում կարևոր դեր կատարող դիցաքաղաքականության համար նման միֆոլոգեմ է դառնում Սառը պատերազմի ավարտը, որը նշանավորում էր Հին Աշխարհի քանդվելը, նրա գոյության վերջը, այսինքն՝ այլևս չեն գործում այն արժեքները, նորմերը և կանոնները, որոնցով պայմանավորված էր վերջինիս կանոնակարգված կյանքը և պատկերը: Զանգվածային գիտակցության տեսակետից ավարտվում է մի դարաշրջան, արարված Աշխարհի գոյության մի փուլ, որի պարամետրերը՝ ժամանակի և տարածության հատուկ տիպի ընկալումը, աշխարհը բաժանում են երկու մասի տարածության առումով, և ժամանակի ընթացքն այդ երկու մասերում տարբեր է, ինչի մասին վկայում են պատմության ընթացքի և պատմական իրադարձությունների մասին իրարից բոլորովին տարբերվող պատկերացումները:

Այդ ընկալումներն արտահայտված են, օրինակ՝ հայտնի ամերիկյան գիտնական Ֆրենսիս Ֆուկույամայի մի շարք աշխատանքների վերնագրերում՝ «Պատմության ավարտ», «Վերջին մարդը», «Մեծ ճեղքում»: Հինն ավարտվեց, և պետք է սկսվի Նորը, սակայն այն չի կարող անմիջապես հստակ կերպով իմաստավորվել: Այս տեսանկյունից «Մեծ ճեղքումը» նշանաբանում է ժամանակների կապի խզում, որոշակի առումով հերթական զրոյական[4] կետ՝ հին աստվածների կործանումից հետո նոր աստվածներն անմիջապես չեն հաստատվում: Զրոյական շրջան, որի ընթացքում հաստատվում են նոր «աստվածները», սկսվում է նոր դարաշրջանը: Նոր դարաշրջանի սկզբնավորման համար անհրաժեշտ է բոլորովին նոր որակի իրադարձություն, մի բան, որի նմանը չի եղել, և որի տեքստային արտահայտությունը կարող է հավակնել նոր հայտնության դերն ստանձնելուն, նոր ժամանակների Սուրբ գիրք դառնալուն: Այդպիսին էր, օրինակ՝ Նոր կտակարանը, որը ինֆորմացիա էր պարունակում ոչ միայն

[3] Դեմիուրգ հունարեն նշանակում է «արհեստավոր», «վարպետ»: Նա պատրաստում է նոր, դեռ երբևիցե գոյություն չունեցած բաներ այնպես, ինչպես վարպետն է սարքում իր մտացածը: Տարբերվում է մշակութային հերոսից նրանով, որ իր ստեղծածը նոր է: Օրինակ՝ Պրոմեթևսը մշակութային հերոս է, որը մարդկանց տվեց արդեն իսկ գոյություն ունեցող կրակը և ոչ թե արարեց կամ ստեղծեց այն:

[4] Քրիստոսի ծնունդը գիտակցվել է որպես նոր դարաշրջանի առաջին օրը և տարին՝ շատ ավելի ուշ: Նույնը՝ մուսուլմանական հիջրան:

Քրիստոսի Գողգոթայի և հարության մասին, այլ նաև՝ նրա բերած նոր Օրենքի։ Այդպիսին էր Ղուրանը, որն ուրվագծում է ումմայի կենսագործունեության սկզբունքները հաստատող սակրալ հիմքերը և Ալլահի ու նրա մարգարեի կողմից տրված օրենքները։ Նման օրինակները շատ չեն, և քչերն են ունեցել նման համընդհանուր հնչեղություն՝ ունենալով երբեմն ավելի լոկալ նշանակություն, օրինակ՝ Ռեֆորմացիան ու Լյութերը և այլն։

Ելնելով այս տրամաբանությունից՝ կարելի է գալ եզրակացության, որ նման իրադարձություն-հայտնություն դառնալու, կամ որպես այդպիսին ընկալվելու, կամ որպես այդպիսին ներկայացվելու հավակնություն ունի սեպտեմբերի 11-ը (9/11)՝ նյույորքյան «երկվորյակ» աշտարակների կործանման իրադարձությունը, որից հետո մեկը մյուսի հետևից սկսեցին ստեղծվել և տարածվել տեքստեր, որոնց հիմնական նպատակն էր նոր իրողության ի հայտ գալու մասին հայտարարելը։ Նոր իրողության առանցքը նոր չարիքի՝ միջազգային ահաբեկչության դեմ պայքարն է։ Պատահական չէին անմիջապես այդ իրադարձությանը հետևած Միացյալ Նահանգների նախագահ Ջորջ Բուշ-կրտսերի բառերը նոր Խաչակրած արշավանք սկսելու մասին։ Ակտիվորեն օգտագործվում է դեռևս սառը պատերազմի ժամանակ մասսայական գիտակցության վրա ներազդելու առումով իր բացառիկ էֆֆեկտիվությունն ապացուցած Սատանայի միֆոլոգեմը։ «Չարիքի կայսրությունը» փոխարինվում է ալ-Կաիդայի մութ անհայտությամբ, ինչը հեշտությամբ իդենտիֆիկացվում է քաոսի հետ։ Շահագործման է հանձնվում տիպիկ դիցաբանական անտագոնիստ հերոսի կերպարով հանդես եկող Ուսամա բեն Լադենի կերպարը, որը դառնում է այդ մութ անհայտության բոլորի համար ճանաչելի նշանը։ Նրա թաքնվելու տեղը ոչ ոք չգիտի, նա հայտնվում է՝ միայն իրեն հայտնի օրենքներից ելնելով, և ամեն անգամ նրա այս կամ այլ ձևով բացահայտվելը մահացու վտանգ է ներկայացնում կանոնակարգված աշխարհի համար[5]։

Այս իրադարձություն-հայտնությունից հետո ժամանակը նորից իր գծային ձևն է ընդունում, որն այդուհանդերձ քաոսի ուժերի հետ յուրաքանչյուր բախումից հետո ընդունում է մշտապես դիսկրետ շրջադարձի դրսևորում։ Դա տեղի է ունենում ամեն

[5] Պարզ է, որ հակառակորդ կողմի համար բոլոր նշանները հակառակ նշանակություններն ունեն։

անգամ, երբ այն ինչ-որ ազդակ է ձևավորում գերբնական հատկանիշներով նշված հարթության մեջ, որը մասսայական գիտակցության մեջ հատկացվել է դիցաբանացված բրենդին՝ «ալ-Կաիդա» անվանմամբ։ Գծային ժամանակը ճեղքվում է և նորից շարունակվում իր հարթության մեջ ազդակի ընկալման և բրենդա-գովազդային իրականության մեջ տեղադրման գործողությունն ավարտելուց հետո։ Գծային ժամանակի տրամաբանությունը թույլ չի տալիս անվանել, օրինակ՝ վերլուծական ստեղծագործությունը «Արդյո՞ք հարկավոր է Ամերիկային արտաքին քաղաքականություն», ինչպես դա արեց Հենրի Քիսինջերը։ Գծային ժամանակի տրամաբանության մեջ այն ամենը, ինչը կապված է վերջնական նպատակի՝ չարիքը պատժելու հետ, ակնհայտ է, անվիճելի և անմիջական։

Տարածության կատեգորիան նույնպես պետք է համապատասխանի նոր դիցաքաղաքականությանը, և այդ նպատակով ստեղծվում է Մեծ շախմատային տախտակը՝ իր մասնատված, ամբողջականությունից զրկված, «բալկանացված»[6] Եվրասիայով, Մեծ Միջին Արևելքով, Ընդլայնված Եվրոպայով, «չարիքի առանցքով»։ Էական է միայն այն, ինչը մեր գիտակցության կողմից ընկալվում է միայն ժամանակի տվյալ ընկալման համատեքստում և ինչը հասկանալի է մեր հիմնական միֆի՝ չարի և բարու պայքարի, այսինքն՝ այլ կերպ ասած՝ գլոբալ կոնֆլիկտի հարթության մեջ։ Մեծ շախմատային տախտակը նման է դիցաբանացված աշխարհի մյուս բոլոր նկար-քարտեզներին, որոնք հաղորդում են այդ աշխարհի տարածքային պատկերումը, և որոնցից յուրաքանչյուրն ուներ իր աշխարհի կենտրոնը՝ Երուսաղեմ, Հռոմ, Մեքքա, Ողիմպոս/Օլիմպոս, մի շարք անվանում ունեցող տարածքներ (այն պետությունները կամ շրջանները, որոնք կամ հայտնի էին, կամ էլ կարևոր նշանակություն ունեին աշխարհի կենտրոնի տեսակետից)։ Մնացած ամեն ինչը քարտեզից դուրս էր մնում, այսինքն դուրս էր տվյալ դարաշրջանի այս կամ այլ հասարակության մշակութային գիտակցության սահմաններից։ Այդպես էլ Մեծ շախմատային տախտակի վրա կան միայն մի քանի պետությունների և տարածաշրջանների անուններ, մնացածը՝

[6] Այս տեսանկյունից չափազանց հատկանշական է «բալկանացված Կովկաս» արտահայտությունը, որը տերմինաբանական առումով աշխարհագրական լինելով, աշխարհագրության հետ էական կապ չունի, ամբողջովին դիցաքաղաքական է։

անտեսվում են, ակտուալ չեն կամ գոյություն չունեն այդ քարտեզն ստեղծող դիցաքաղաքականության տեսանկյունից։

Այն հանգամանքը, որ տիեզերքի կենտրոնը տեղադրված է Նյու Յորքում, բոլորովին չի հակասում Եվրոպային՝ որպես շախմատային տախտակի գործողությունների հիմնական խաղահրապարակի հատկացված դերին։ Ակնհայտ է նաև Դեմիուրգը, որը կառուցել և հղկել է խաղատախտակը, ստեղծել է խաղի կանոնները և բաշխել դերերը։ Խաղացողների դերերը սահմանված են և սահմանափակված, նրանք ենթարկվում են խաղի կանոններին, իսկ խաղը հնարավոր է միայն այդ կանոններին հետևելու դեպքում։ Չկան անհայտ կամ նոր խաղացողներ, գրեթե բացառվում է նրանց ի հայտ գալը, այսինքն՝ սահմանված նորմից շեղվելը։ Նորի հայտնվելը քանդում է խաղի տրամաբանությունը, չեղյալ հայտարարում կանոնները, ի վերջո՝ կործանում խաղը, ինչը հավասար է տիեզերքը քաոսի վերածելուն։ Այդ իսկ պատճառով այս քարտեզը դեռ չի հայտարարում նոր հայտնության մասին։ Բանն այն է, որ Զ. Բժեզինսկին, ով փորձում է ստեղծել այս նոր դիցաքաղաքականությունը, դեռևս պատկանում է երկբևեռ աշխարհին, պատկերացնում է աշխարհը շախմատային տախտակի սևուսպիտակ երկգույնության օրինաչափությունների համաձայն, ինչը ուրվագծելով նոր աշխարհի հնարավոր դիցապատկերներից մեկը, իրականում հեռու է վերջինից, սակայն հեռու է դեռևս ապագա շատ ազդեցիկ հայտնության տրամաբանության բնորոշման տեսանկյունից։ Հստակ չեն ուրեմն նաև դերակատարները՝ նրանց ամպլուան, քանակը, հատկանիշները, խորհրդանիշները։

Նոր հայտնության համար անհրաժեշտ է գիտակցել, թե որն է նոր դիցաքաղաքականության հիմնական սուբյեկտը։ Սեմյուել Հանթինգթոնի հայտնի աշխատության անունն արդեն՝ «Քաղաքակրթությունների բախում», բարձրաձայնում է նոր աշխարհի հիմնական սուբյեկտների կամ, օգտագործելով Զ. Բժեզինսկիի տերմինաբանությունը՝ խաղացողների մասին։ Նոր հերոսները, որոնք իրար հետ մրցելով, բախվելով, պայքարելով, երկխոսության մեջ մտնելով, որոշելու են պատմության ընթացքը՝ քաղաքակրթություններն են։ Հեղինակի բնորոշման վրա հիմնվելով՝ կարելի է եզրակացնել, որ բևեռվելով քաղաքակրթությունների կոնցեպտի շրջանակներում համաշխարհային գործընթացների ուսումնասիրության վրա, նա

ձգտում է ներկայացնել ժամանակակից աշխարհի զարգացման ընդհանուր պարադիգման: Համաձայն Ս. Հանթինգթոնի տեսության՝ ներկայում կարելի է հաշվել ընդամենը 7–8 քաղաքակրթություն: Հանթինգթոնյան քաղաքակրթությունները տարբերվում են իրարից և «հաճախ գտնվում են իրար հակազդելու և իրար հետ բախվելու վիճակում»: Նշված եղելությունն իրական է, ուստի բախումներն անխուսափելի են: Այն նման է նախամոնոթեիստական աստվածների բնավորությամբ և վարքագծով պայմանավորված դիցաբանական իրողությանը, որտեղ աստվածները, մրցելով իրար հետ, խանդելով իրար և այլն, պայքարում և խաղում էին միմյանց հետ մարդկանց միջոցով՝ օգնելով կամ խանգարելով նրանց, դրդելով ինչ-որ որոշումների և արարքների, անտեսելով նրանց կամքն ու ցանկությունները: Այդ ամենը կոչվում է ճակատագիր և որպես այդպիսին էլ պետք է ընկալվի և այդ անխուսափելի փաստի հետ ոչինչ չի կարելի անել:

Սակայն Ս. Հանթինգթոնն, այնուամենայնիվ, տեսնում է մի հնարավորություն, որը թույլ է տալիս խուսափել այդ կործանարար բախումներից. գոյություն ունեն ունիվերսալ արժեքներ, որոնք անհրաժեշտաբար պետք է ընդհանուր լինեն բոլոր քաղաքակրթությունների համար: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի վերջ դնել պատերազմներին, ոչնչացնել ահաբեկչության վտանգը և մեղմել կոնֆլիկտները: «Ժողովրդավարությունները չեն կռվում իրար հետ»:

Փաստորեն Ս. Հանթինգթոնը Դեմիուրգի դեր է հատկացնում իր նշած քաղաքակրթություններից մեկին, քանի որ այդ քաղաքակրթության արժեքային համակարգի հիման վրա է կառուցվում Նոր աշխարհը, որի հիմնական պարունակությունը սարքվել և ստեղծվել է այդ քաղաքակրթության արժեքների տրամաբանությունից ելնելով, այսինքն՝ համապատասխան այստեղ ընդունված լավի և վատի, բարու և չարի մասին պատկերացումներին:

Ա. Թոյնբիից[7] սկիզբ առնող քաղաքակրթությունների բազմաթիվ լինելու տեսությունը, հատկապես Ս. Հանթինգթոնի գործունեության շնորհիվ, իր բավականին

[7] Ա.Թոյնբին էր առաջին մտածողը, որն օգտագործեց քաղաքակրթությունների բազմակիության և վերջինների տարբերությունների մասին թեզը, սակայն նա արեց դա՝ պայքարելով եվրակենտրոն պատմագրության և փիլիսոփայության դեմ՝ գտնելով, որ աշխարհին միայն Եվրոպայի դիտակետից և տեսանկյունից նայելը զրկում են այդ տեսակ հետազոտությունները օբյեկտիվությունից և իրական գործընթացների ճիշտ ըմբռնումից:

պարզեցված տարբերակով դարձավ վերջին տասնամյակի ընթացքում ամենահաճախ քննարկվող տեսություններից մեկը: Ավելին, այս կոնցեպցիայի հանթինգթոնյան տարբերակն օգտագործվեց որպես քաղաքականության գաղափարական հիմնավորում և որպես այդպիսին ավելի ակտուալացվեց: Այն իր լուրջ ազդեցությունը թողեց ոչ միայն ամերիկյան և եվրոպական էլիտաների, այլ նաև ռուս, չինացի, հնդիկ և այլ ազգերին և մշակույթներին պատկանող մտածողների վրա:

Օրինակ, վերջին ժամանակաշրջանի ամենահետաքրքիր ռուսաստանյան մտածողներից մեկը՝ Ս.Պերեսլեգինը, սկզբունքորեն ընդունում է քաղաքակրթությունների բախման դիցաբանական տեքստը, սակայն ստեղծում է բոլորովին այլ քարտեզ, որտեղ դիցաբանական հերոսների դիրքում են կայսրություններն՝ Ավստրալազիան, Եվրամերիկան, Եվրասիան, որը բաղկացած է երեք «ենթակայսրություններից» և այլն: Հասկանալի է, որ հեղինակի աշխարհագրական դիրքը կանխորոշում է նրա ստեղծած դիցաաշխարհաքաղաքական քարտեզի տեսքը և բովանդակությունը: Նրա աշխարհի պատկերն իրականում բոլորովին էլ չի հակասում Ս.Հանթինգթոնի դիցաբանական համակարգի սկզբունքներին, այլ միայն ճշտում է այդ դիցաբանության ընկալման (և ոչ թե կառուցման) ելակետերը:

Փոքր ինչ տարբերվում է Կոնդրատյևի և Նեկլեսսայի մոտեցումը: Այս գիտնականները համարում են, որ քաղաքակրթությունների բախման հիմքում ընկած են իդեալական կենսագործունեության կաղապարների նկատմամբ ձևավորված մոտեցումների սկզբունքային տարբերությունները, որոնցից բխում են նաև տնտեսության կազմակերպման տարբերությունները: Այսպիսով, համաձայն նրանց տեսակետի, քաղաքակրթությունները բախվում են ոչ թե էթնոկոնֆեսիոնալ տարբերությունների հետևանքով, այլ՝ տնտեսական զարգացման տրամաբանությունների տարբերության, որն արտահայտվում է Կայսրություն–Էկոնոմիկա տեսքով:

Նոր աշխարհի տրամաբանության սկզբունքները փորձում են բացահայտել նաև Ռուսաստանում բավականին հայտնի մեթոդաբան փիլիսոփաներ Պ. Շչեդրովիցկին և Ե. Օստրովսկին: Նրանց համոզմամբ, ներկա ժամանակներում անհրաժեշտ է հրաժարվել Հին աշխարհին հատուկ այն ձևակերպումից, որն ամրագրում է անցյալի

համար կարևորագույն երկու արժեքները, որոնցից բխում էր և որոնց հիման վրա հազարամյակների ընթացքում կառուցվել է ակտուալ քաղաքականությունը՝ «արյուն և հող»[8]: Փոխարենը պետք է ընդունել արժեքների նոր զույգ՝ «լեզու և մշակույթ»: Այս մոտեցման հեղինակների կարծիքով «աշխարհների սահմաններն անցնում են լեզվական գոտիների և այդ լեզուներին համապատասխանող ապրելակերպի տարածման գոտիների եզրերով»: Հասկանալի է հեղինակների մտածելակերպի հիմնական պատճառը՝ նոր ռուսաստանյան իրականությունը թելադրում է նոր գաղափարական հենակետեր փնտրել այդ իրականությանը համապատասխանող աշխարհաքաղաքականության ստեղծման համար: Այս որոնումները կարելի է համեմատել Ա.Դուգինի եվրասիականության աշխարհաքաղաքական տեսության հետ: Սակայն Շչեդրովիցկին և Օստրովսկին շատ ավելի խորն են և իրատեսական. նրանց կարծիքով գլոբալ միգրացիոն գործընթացներից բխող աշխարհընկալման փոփոխման օբյեկտիվ գործընթացի իմաստավորումը և ռուսաստանյան դիցաքաղաքական մտածելակերպը, որը վերապրել է կայսրության փլուզումը և բոլորովին պատրաստ չէ ՌԴ ազդեցության ոլորտի կրճատման գաղափարի հետ համակերպվել, այստեղ փոխլրացնում են մեկը մյուսին, ինչի շնորհիվ ստեղծվում է մի նոր միֆոլոգեմ: Վերջինիս հիմքում ընկած է այն մոտեցումը, ըստ որի քաղաքակրթությունները Հին աշխարհում տարածքային-ռասայական բնույթ ունեն, իսկ ներկայում դրանք այլևս այդպես չեն կարող բնորոշվել, քանի որ, օրինակ՝ ռուսերեն լեզուն և մշակույթը, հեղինակների կարծիքով, բավարար հիմք են մի ամբողջական և միասնական քաղաքակրթության գոյության համար, որի մեջ են մտնում բոլոր այն իրական կամ վիրտուալ շրջանները, որտեղ տարածված է այդ մշակույթով և լեզվով պայմանավորված ապրելակերպը: Հետևաբար, կան որոշակի սահմաններ, որոնք շփման և հակադրման մեջ են գտնվում այլ լեզվամշակութային սահմաններով եզրված կայսրությունների սահմանների հետ: Այսպես, օրինակ՝ ռուսական լեզվամշակութային կայսրության սահմանների վրա հարձակման պատրաստ կանգնած են այլ նույնատիպ կայսրություններ՝ ֆրանկաֆոն, անգլաֆոն, չինաֆոն և այլն:

[8] Այս արժեքների ձևակերպումները, դրանց միասնությունը և հակասությունները քննարկվել են գերմանական դասական փիլիսոփայության շրջանակներում՝ Ֆիխտեի, Շելինգի և այլոց ստեղծագործություններում:

Այսպիսով, ժամանակակից դիցաբանական պատկերների հիմնական միտումների վերլուծությունը վերը դիտարկված օրինակների հիման վրա վկայում է, որ ներկայում իշխող դիցաբանական համակարգը նախկին «սառըպատերազմականի» նման բխում է հակադրման և կոնֆլիկտի միջոցով աշխարհում տեղի ունեցող գործընթացները ընկալելու մտայնությունից: Այսինքն՝ Նոր աշխարհի բոլոր առաջարկվող դիցաբանական համակարգերն օգտագործում են կոնֆլիկտի, բախման և հակադրման հետևանքով առաջացող էներգիան որպես միակը, որը կարող է ապահովել զարգացումը, որը երաշխավորում է շարժումը, իրադարձությունների օբյեկտիվ հիմնավորվածությունը և տրամաբանական հետևողականությունը, ինչը հիմնվում է տվյալ դիցաբանությունից բխող սկզբունքների վրա:

Մեր տեսակետից յուրաքանչյուր պատմական դարաշրջանին համապատասխանում է միայն մեկ քաղաքակրթություն: Բազմաթիվ են մշակույթները, մշակութային համակարգերը, որոնցից յուրաքանչյուրն իր ներքին պոտենցիալից բխող հմտությամբ, ազատությամբ, արագությամբ, էֆֆեկտիվությամբ կատարում է այդ քաղաքակրթությանն առավելագույնն ադապտացվելու խնդիրը: Այստեղ է, որ հսկայական նշանակություն է ձեռք բերում թոյնբիական Մարտահրավերին պատասխանելու խնդիրը, սակայն պատասխանողը ոչ թե քաղաքակրթությունն է, ինչպես Ա. Թոյնբին էր պնդում, այլ մշակույթը, որի առանձնահատկությունները, հիմնարար արժեքները, որոնցից այն ստեղծվել է, որոնց հիման վրա կառուցվել, նպաստում են կամ խոչընդոտում ադապտացվելուն կամ քաղաքակրթական համակարգի կենտրոնից դեպի պերիֆերիա դուրս մղվելուն կամ ընդհանրապես լուսանցքային դառնալուն: Թոյնբիական «հերովդեսականները» ձգտում էին, Յահվեի տաճարի կողքին (և ոչ թե այն քանդելով) հռոմեական աստվածների տաճարներ կառուցելով, պատերազմ վարելու և հող մշակելու նոր տեխնոլոգիաներին տիրապետելով, ադապտացվել իրենց դարաշրջանի քաղաքակրթական համակարգին, սակայն հրեական մշակույթի հիմնարար արժեքներն ստիպեցին զելոտներին ընդդիմանալ այդ գործընթացներին, ինչն էլ ի վերջո հանգեցրեց Երուսաղեմի տաճարի կործանմանը:

Ներկայում նույնպես կան մշակույթներ, որոնք լավ են կատարում այդ խնդիրը, օրինակ՝ անգլոսաքսոնական բողոքական, ճապոնական, չինական և այլ մշակույթները, կան նաև այնպիսի մշակույթներ, որոնք որևէ պատկերացում չունեն նույնիսկ ներկայի քաղաքակրթական համակարգի մասին՝ աֆրիկական պիգմեյների, ամազոնյան հնդկացիների, ավստրալական անտառների խորքերում ապրող աբորիգենների մշակույթները: Ադապտացիոն գործընթացների էությունը կտրականապես տարբերվում է վերը նշված կոնֆլիկտի էությունից: Այն ազատ է պայքարից (չշփոթել մրցակցության հետ), պատերազմից և բռնությունից: Միաժամանակ այն չի պայմանավորում իր հաջողությունը մշակույթների հիմքերում ընկած էական արժեքների քայքայման հետ:

Այս մոտեցումը թույլ է տալիս դիտարկել կոնֆլիկտների լուծման հիմնահարցը որպես ադապտացիոն պրոբլեմ գլոբալ աշխարհի ինֆորմացիոն քաղաքակրթության համակարգում, որն իր նոր պահանջներն է առաջ քաշում և նոր մարտահրավեր ձևակերպում:

* * *

Անգլիացի սոցիոլոգ Ռոլանդ Ռոբերթսոնը, ուսումնասիրելով գլոբալացման հետ կապված երևույթները, հանգեց գուցեն պարադոքսալ թվացող այն եզրակացությանը, որ որքան ավելի համընդհանուր են և արտահայտված գլոբալացման հետ կապված ու ստանդարտացմանը և միանմանությանը մղող գործընթացները, այնքան ավելի մեծ պահանջարկ են ստանում տարբեր տեսակի տեղական առանձնահատկությունները: Այս դիտարկումների հիման վրա Ռ. Ռոբերթսոնը ձևակերպեց իր հաջորդ շատ կարևոր եզրահանգումը՝ «գլոբալ և լոկալ միտումները վերջին հաշվով փոխլրացնող են և փոխթափանցող, սակայն որոշ կոնկրետ իրավիճակներում կարող են և բախվել»:

Բախումները տեղի են ունենում այն «կոնկրետ իրավիճակներում», երբ լոկալ մշակույթը փորձում է մեկուսանալ, փակվել և իր ողջ ուժերը լարում է գլոբալ գործընթացներից խուսափելու, դրանցից չազդվելու համար:

Հասկանալի է, որ ներկայի համատարած տնտեսական, գիտական, կրթական, ինֆորմացիոն և այլ տիպի ունիֆիկացման պայմաններում նման փորձերը հանգեցնում են կամ մեկուսացող մշակույթի լուսանցքային բնույթ ստանալուն կամ էլ վերջինի ճակատագրական հետևանքներով պարտությանը, որի արդյունքում քայքայվում են

հասարակություններ, վերանում կամ առնվազն իրենց ինքնիշխանությունը կորցնում են պետություններ։

Գլոկալացման գործընթացների վերլուծաբաններից մեկը՝ Ուլրիխ Բեկը, պնդելով, որ կյանքի ստանդարտների համատարած համանմանեցումը վնասում է շուկայի զարգացմանը, գրում է. «Մինչև իր տրամաբանական եզրը հասցված ունիֆիկացված մշակույթը, որտեղ, մի կողմից, վերանում են լոկալ մշակույթները, իսկ մյուս՝ բոլորը սպառում են (ուտում, քնում, սիրում, հագնվում, հիմնավորում, երազում և այլն) նույն ձևաչափով... կնշանակեր շուկայի վերջ, շահույթների վերջ»։

Այստեղից էլ բխում են տարբեր շուկաներ մուտք գործելու հետ կապված ընկերությունների ջանքերն այդ շուկաներին համապատասխան տեղայնացնելու իրենց արտադրածը։

Սակայն այն ամենը, ինչը հասկացվում է «գլոկալիզացիա» ասելիս, կապված է հարցի միայն մի կողմի հետ։ Գլոկալիզացիան նկարագրում և բացատրում է գործընթացները՝ գլոբալիզացման կենտրոններից նայելիս։ Լոկալ մշակույթների դիրքը, որից նրանք պարտավոր են վերլուծել գործընթացները և արձագանքել դրանց իմաստավորված կերպով, զգալիորեն տարբերվում են։

Բանն այն է, որ տեղական ինքնությունը հիմնվում է ծավալով շատ ավելի լայն և իմաստային ցանկի տեսակետից բազմաթիվ էական հասկացությունների վրա, քան դա հնարավոր է տեսնել և ըմբռնել՝ չլինելով տվյալ մշակութային համակարգի մեջ և դիտելով այն միայն դրսից։ Յուրաքանչյուր մշակութային համակարգ, ունենալով երկար հազարամյակների կամ դարերի պատմություն, իր գոյության ցանկացած պահին տարբերվում է հենց ինքն իրենից, քանի որ այն միշտ ակտուալացվում է այդ մշակույթը կրողների օբյեկտիվ բնութագրով, որը ցանկացած ժամանակաշրջանի և նույնիսկ պատմական պահի համար տարբեր է և՛ սուբյեկտիվ վերաբերմունքով, և՛ մղումներով։ Այսինքն՝ ինքնության ամբողջական բնութագիրը նույնպես անընդհատ փոփոխական է։

Այս բավականին տրիվիալ դրույթներից բխում է հետևյալ եզրահանգումը. եթե համաշխարհային քաղաքակրթական հոսքերի հիմնական միտումները գլոբալիզացումն ու գլոկալիզացումն են, ապա այն մշակույթները, որոնց ուղղված են նշված հոսքերը, պարտավոր են մշակել իրենց համապատասխան այնպիսի

մոտեցումները, որոնք թույլ կտան այդ մշակութային համակարգերին միաժամանակ դինամիկ զարգանալ և ապահովել իր կրողների ինքնության ամրապնդումը և զարգացումը (չէ՞ որ որքան ավելի շատ արտաքին ազդակներ է ընդունում մարդը և իմաստավորված կերպով կարողանում դրանց պատասխան տալ, այնքան ավելի հաստատուն է նրա ինքնությունը, այնքան ավելի ամուր է իր անհատականությունը)։

Ո՞րն է այդ պատասխանը։ Մեր տեսակետից լոկալ մշակույթը, հիմնվելով իր արժեքային համակարգի խորքային վերլուծության և գիտակցված ընկալման վրա և օգտագործելով այդ արժեքային համակարգը որպես զտիչ, պարտավոր է իր մշակութային համակարգ թույլ տալ ներթափանցելու միայն այն քաղաքակրթական տարրերին, որոնք չեն կարող վնասել ինքնության փոքրաթիվ հիմնարար արժեքները։ Քաղաքակրթական հոսքերի հետ եկող մնացած բոլոր տարրերը լոկալ մշակույթը պարտավոր է ադապտացնել և դարձնել իր անքակտելի մասը, ինչի շնորհիվ այդ մշակութային համակարգը հնարավորություն կստանա դինամիկ և արագ զարգանալու և միաժամանակ ընդգրկված լինելու ընդհանուր համաշխարհային մշակութային համակարգի մեջ։

Ինչպես նշում է գլոբալացման և գլոկալացման պրոցեսների ևս մեկ հետազոտող՝ Սթիվեն Լիբերը, ամբողջ համաշխարհային քաղաքականությունը ներկայում իրականացվում է ոչ թե պետությունների միջև, այլ այն ձեռք է բերել ներքին գլոբալիզացիոն իմաստ, որտեղ հատկապես սուր են հակասությունները գլոբալիզացիոն կենտրոնների և ցանցային համակարգերի միջև։ Մեր դեպքում հիմնական ադապտացիոն գործիքը կարող է լինել «ցանցապետության» ձևավորումը։

Եվրոպան և հայ ինքնությունը Հայաստանի հանրային դիսկուրսում [9], 2000-2007 թթ.

1919թ. Փարիզի խաղաղության վեհաժողով մեկնած հայկական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը ֆրանսիական Le Temp թերթի խմբագրի հետ ունեցած զրույցի ժամանակ ասել էր, թե Հայաստանի նորանկախ Հանրապետությունն անպայման պետք է ելք ունենա դեպի Միջերկրական ծով, քանի որ հայերը, գտնվելով Ասիայում, Արևմուտքի ժողովուրդներից մեկն են[10]:

Այս զրույցից մոտավորապես ինը տասնամյակ անց արդեն ժամանակակից Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիգրան Թորոսյանը միջազգային ֆորումներից մեկի ժամանակ հայտարարեց, որ Հայաստանը շուրջ երկու դար օբյեկտիվ պատմական պատճառներով կտրված է եղել եվրոպական արժեքներից, և այժմ եկել է դեպի Եվրոպա վերադառնալու ժամանակը[11]:

Այս երկու հայտարարությունները համընկնում են ոչ միայն իրենց բացահայտ եվրակենտրոնությամբ, այլև այն փաստով, որ դրանք Եվրոպայի շուրջ ծավալված հայաստանյան պաշտոնական դիսկուրսի դրսևորումներ են: Ժամանակակից հայ պաշտոնյաների նմանաբնույթ հայտարարություններն սկսեցին ավելի հաճախակի հնչել հատկապես 2000թ. հետո, երբ նույն տարվա հունվարին Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրախորհրդի անդամ, իսկ 2004-2005թթ. ընթացքում Եվրահանձնաժողովի կողմից ընդգրկվեց «Եվրոպական հարևանության քաղաքականություն» ծրագրի մեջ: Հենց այս ժամանակ եվրաինտեգրման գլուխ կանգնած հայ պաշտոնյաների շրջանում ավելի հաճախակի դարձան այն պնդումները, թե Հայաստանը կարող է և պետք է ձգտի եվրոպական բարձր չափանիշներին հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում՝ սոցիալ-տնտեսական հարաբերություններից մինչև մշակույթ:

---

[9] Տեքստում «Հայաստանի հանրային դիսկուրս» հասկացությունը վերաբերում է Հայաստանի ներսում գրավոր և բանավոր խոսքի, ինչպես նաև պատկերի միջոցով արտահայտված կարծիքների, դատողությունների, գնահատականների, ուղերձների ամբողջությանը, որի հասցեատերը հանրությունն է:

[10] Ավետիս Ահարոնյան, Սարդարապատից մինչ Սևր և Լոզան. քաղաքական օրագիր. Երևան: ԵՊՀ Հրատ., 2001 թ., էջ 11:

[11] "Armenia wants to inculcate European values in Armenian society again," 18 June 2007, ARKA News Agency.

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ գերազանցապես եվրակենտրոն պաշտոնական դիսկուրսը միշտ ուղեկցվել է ոչ պաշտոնական հանրային քննարկումներով, որոնք տեղի ունենալով հասարակության տարբեր խմբերի շրջանակներում, կարող էին ինչպես համընկնել պաշտոնական դիսկուրսի հետ, այնպես էլ՝ հակասել դրան: Սա է պատճառը, որ խնդրի վերաբերյալ առավել հավասարակշռված պատկեր ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջանում վեր հանել Հայաստանում «Եվրոպա» գաղափարի շուրջ ծավալված ոչ պաշտոնական հանրային դիսկուրսի բովանդակությունը:

Եվրոպային առնչվող հանրային դիսկուրսի ուսումնասիրությամբ հնարավոր կլինի պատկերացում կազմել հայաստանյան հասարակության առնվազն մի քանի մասնագիտական խմբերի (մշակույթի գործիչներ, գիտության ներկայացուցիչներ, հրապարակախոսներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ և այլոք) Եվրոպա հասկացության և եվրաինտեգրման հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին: Գաղտնիք չէ, որ հանրային դիսկուրսը հասարակության տարբեր խմբերի կարծիքները արտահայտելուց զատ, ինքն է ընդունակ մշակել և ուղղորդել հասարակության պատկերացումները տարբեր երևույթների հանդեպ: Հետևաբար, այս ուսումնասիրությունը նաև լույս կսփռի այն մեխանիզմներից մեկի վրա, որն այսօր ձևավորում է մարդկանց կարծիքը և վերաբերմունքը Եվրոպայի և եվրաինտեգրման գործընթացների հանդեպ: Սա նաև կարող է օգտակար լինել հետագայում Եվրոպայի վերաբերյալ գիտելիք տարածող մարմինների համար ավելի արդյունավետ տեղեկատվական քաղաքականություն մշակելու տեսանկյունից:

Ուսումնասիրության համար հիմնական աղբյուր են ծառայել *Գրական թերթ* շաբաթաթերթի և *Ազգ* օրաթերթի՝ 2000-2007թթ. ընթացքում լույս տեսած համարները: Այս պարբերականներն ընտրվել են իրենց էջերում տեղ գտած մշակութաբանական նյութերի բազմազանության պատճառով: Օժանդակ աղբյուր են ծառայել հայաստանյան հեռուստաընկերությունների կողմից 2006-2007թթ. ընթացքում հեռարձակված և խնդրո առարկային առնչվող հաղորդումները, հեռուստաքննարկումները և հարցազրույցները (վերջիններիս ուսումնասիրությունը կատարվել է նպատակահարմարության ընտրանքի սկզբունքով):

Հենց սկզբից պետք է նշել, որ Եվրոպային առնչվող ոչ պաշտոնական հանրային դիսկուրսն իր բովանդակությամբ հիմնականում եվրակենտրոն է, սակայն միաժամանակ, նրա մոտեցումներն, ի տարբերություն պաշտոնականի, քննադատական են և նույնիսկ զգուշավոր: Ավելի կոնկրետ, հանրային ոչ պաշտոնական դիսկուրսի մասնակիցների մի զգալի մասը մտավախություն է հայտնում, որ նախ՝ հայաստանյան հասարակությունը պատրաստ չէ յուրացնելու եվրոպական չափանիշները, և, երկրորդ՝ Եվրոպայից եկող մի շարք արժեքներ կարող են խաթարել հայկական ինքնությունը կամ առնվազն դրա մի շարք հիմնարար բաղկացուցիչներ:

Եվրոպայի վերաբերյալ հայաստանյան հանրային ոչ պաշտոնական դիսկուրսը կարելի է բաժանել երկու՝ դրական և բացասական վերաբերմունք արտահայտող հատվածների: Մասնավորապես, քաղաքականության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների հարցերում հանրային դիսկուրսի մասնակիցները, կարելի է ասել, կրկնում են հայ պաշտոնյաների մտքերը: Եվրոպական քաղաքական կուսակցությունների գործունեությունը, օրինակ, գնահատվում է որպես ընդօրինակման արժանի: Եվրոպական երկրների քաղաքականությունը տնտեսական կյանքում կամ սոցիալական ապահովության բնագավառում ներկայացվում է որպես պատկառանքի և կրկնօրինակման արժանի քաղաքականություն: Մեզանում որևէ ծառայության կամ արտադրանքի բարձր որակը շեշտելու համար սովորական է դարձել «եվրոպական որակ», «եվրոպական չափանիշ» արտահայտությունների և «եվրո/եվրա» արմատով կազմված բառերի գործածումը:

Հայաստանում Եվրոպա հասկացության հետ կապված վերոհիշյալ դրական ընկալումները քիչ թե շատ հայտնի և հասկանալի են: Ուստի, սույն հոդվածի շրջանակներում ավելի նպատակահարմար կլիներ վեր հանել հայաստանյան հանրային դիսկուրսի այն հատվածը, որը զգուշավոր վերաբերմունք ունի Եվրոպայի, եվրոպական ինտեգրման և Հայաստանում եվրոպական արժեքների տարածման նկատմամբ:

Մշակույթ

Եվրոպական մշակույթն իր նեղ իմաստով՝ արվեստ, գրականություն, պատկանում է այն ոլորտին, որի մասին հայ մտավորականության ներկայացուցիչները

խոսում են և՛ պատկառանքով, և՛ հիասթափությամբ: Եվրոպական մշակույթի վերաբերյալ գովեստի խոսքերը հիմնականում վերաբերում են եվրոպական մշակույթի դասական շրջանին, մինչդեռ այսօրվա մշակույթը, նրանց կարծիքով, խոր ճգնաժամի մեջ է: Հայ ժամանակակից գրողներից Լևոն Խեչոյանը, օրինակ, քննադատում է եվրոպացիներին այն բանի համար, որ նրանք շուկա են հանում իրենց արվեստի լավագույն գործերը. դասական երաժշտությունը հնչեցնում են նորաձևության տներում, իսկ գրականության արժեքավոր գործերի հիման վրա հումորային և թեթև ժանրի ֆիլմեր ու հաղորդումներ պատրաստում[12]: Գրող Անահիտ Սահինյանը կարծում է, որ եվրոպական արվեստն իր բարձրունքներից իջել է «ստրիպտիզի մակարդակի», կորցրել իր հիշողությունը և վերածվել ապրանքի[13]: Նման բացասական բնութագրումների շարքը կարելի է շարունակել:

Կարելի է ենթադրել, որ եվրոպական մշակույթին վերաբերող այս բնութագրումները խարսխվում են եվրոպական իրականության էութենական կամ էսենցիալիստական ընկալումների վրա: Այսինքն, եվրոպական մշակույթին մտովի վերագրվում է ներքին հատկանիշների մի խումբ, որոնք շարունակական են և ժամանակի ընթացքում ենթակա չեն նշանակալի ձևափոխումների: Վերոհիշյալ օրինակներում եվրոպական մշակույթը հասկացվում և ընկալվում է միայն իր դասական համատեքստում:

Պետք է նաև նշել, որ դատողությունները եվրոպական մշակույթի անկումային դրության վերաբերյալ, որպես կանոն, ուղեկցվում են հայ իրականության համար բացասական հետևանքների մասին մտորումներով: Եվրոպական մշակույթի ճգնաժամն անմիջականորեն պրոյեկտվում է հայ մշակույթի վրա, քանի որ վերջինս ավանդաբար համարվել է Եվրոպայի մշակութային արժեքների սպառողը և կրողը: Այս իմաստով խոսուն են ՀՀ ԳԱԱ Արվեստի և գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանի մտորումները: Նրա կարծիքով, ժամանակին հզոր եվրոպական մշակույթը դարձել է ամերիկյան մշակույթի զոհը և դադարեցրել իր դրական ազդեցությունը հայ մշակութային տարածության վրա:

[12] Լևոն Խեչոյան, «Եվրոպայի երկաթե ճանապարհներին», Գրական թերթ, N 27-28, 2001 թ.:

[13] Անահիտ Սահինյան, «Օտարամոլությունն ու ստորաքարշությունը Արևմուտքի առջև նոր բան չեն», Գրական թերթ, N 13, 2001 թ.:

> Այս իրողությունն ամենից հեշտ է տեսնել կինոյի օրինակով…
> Իմ սերնդակիցների հիշողության մեջ դեռևս թարմ են հիշողությունները ետպատերազմյան Իտալիայի կինեմատոգրաֆի բարձր նվաճումների մասին: Դրանցով իսկապես սերունդներ դաստիարակվեցին… (Արժե՞ հիշեցնել, թե կինոն ազդեցության ինչպիսի մեծ հնարավորություններ ունի): Բայց ու՞ր է այսօր իտալական կինոն: Վերջին անգամ դուք ե՞րբ եք իտալական կինո դիտել: Եվ ու՞ր է առհասարակ այն, ինչ կարելի է եվրոպական կինո կոչել: Չկա[14]:

Կրոն

Հայաստանյան հանրային դիսկուրսի կողմից էսենցիալիստական բնութագրումների մեկ այլ օրինակ վերաբերում է եվրոպական կրոնի ընկալման ձևին: Մասնավորապես, Հայաստանում շատերի կողմից Եվրոպան շարունակում է դիտվել որպես անփոփոխ և բացառապես քրիստոնեական հասկացություն: Դրա դրսևորումները բազմաթիվ են: 2002թ. սկզբին, երբ Հայաստանում ակտիվ քննարկումներ սկսվեցին մահապատիժը վերացնելու հարցի շուրջ (Եվրախորհրդի պահանջներից մեկն էր), գրող Ռուբեն Հովսեփյանը *Գրական թերթի* էջերում Եվրոպայում մահապատժի բացակայությունը վերագրում էր Եվրոպայի քրիստոնեական արժեքներին և ավելացնում, թե եվրոպացիներն իրավունք չունեն հայերին քրիստոնեություն սովորեցնել, քանի որ վերջիններս եվրոպացիներից ավելի վաղ էին ծանոթ քրիստոնեության մարդասիրական պատվիրաններին[15]:

Այս տարվա ապրիլ ամսին Վանա Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգմանը նվիրված թողարկումներից մեկում, Հանրային հեռուստատեսության հաղորդավարը, մատնանշելով եկեղեցու վրա խաչի բացակայության փաստն, ասաց, թե այդ վերանորոգումով Թուրքիան Եվրոպայի քրիստոնյա երկրներից չի կարող թաքցնել իր վատ սքողված ատելությունը խաչի նկատմամբ[16]:

Իմիջիայլոց, Եվրոպան զուտ քրիստոնեական համատեքստում ըմբռնելու հետևանքով է նաև, որ հանրային դիսկուրսում որոշակի սպասելիքներ են առաջանում Եվրոպայի նկատմամբ: Այսինքն՝ եթե վերջինս էությամբ քրիստոնեական է, ապա ակնկալվում է, որ նա պետք է քրիստոնեամետ քաղաքականություն վարի իր

[14] Ազատ Եղիազարյան, «Տագնապներ և սպասումներ», Գրական թերթ, N 23, 2002 թ.:
[15] Ռուբեն Հովսեփյան, «Որտե՞ղ դնել ստորակետը», Գրական թերթ, N 7, 2002 թ.:
[16] «360 աստիճան» Հայաստանի Հանրային հեռուստատեսություն, 1 ապրիլի, 2007 թ.:

հավատակիցների նկատմամբ աշխարհի այլ մասերում: Պատահական չէ, որ անցյալի ու ներկայի հայաստանյան հանրային դիսկուրսում բազմաթիվ են Եվրոպայի արտաքին քաղաքականությունից առաջացած հիասթափության դրսևորումները: Օրինակ՝ եթե 20-րդ դարի 20-ականներին Սիմոն Վրացյանը Եվրոպան համեմատում էր Պիղատոսի հետ, 2001թ. *Ազգ* թերթի լրագրողներից մեկը փաստարկում էր հօգուտ հայ-ռուսական ավելի սերտ կապերի, ասելով, թե Հայաստանի ներկա և ապագա սերունդները պետք է հիշեն, որ Եվրոպան իր քրիստոնյա եղբայրներին կարեկցանք հայտնելուց բացի, ոչ մի գործնական օգնություն ցույց չի տվել[17]:

Պետք է նշել, որ Եվրոպային առնչվող քննարկումներում հայ հեղինակները կամ հրապարակախոսները մտահոգություն են հայտնում նաև եվրոպական երկրներում մուսուլմանների թվի աճի կապակցությամբ: Այս մտահոգության պատճառը, թերևս, իսլամականացման հետևանքով՝ Եվրոպայից ակնկալվող քրիստոնեամետ քաղաքականության փոփոխման մտավախությունն է: Եվրոպայի իսլամականացումը կարող է դիտվել նաև անուղղակի վտանգ հայ ինքնությանը, քանի որ քրիստոնյա՝ ուստի և առաջադեմ Եվրոպայի միջոցով են հայերն ավանդաբար հաստատել և վերահաստատել իրենց ինքնությունը՝ հակադրվելով հարևան մուսուլմաններին:

Միասեռամոլներ և ընտանիք

Եթե այսօրվա Եվրոպայում տիրող մշակութային և կրոնական ճգնաժամերն անուղղակի սպառնալիք են ներկայացնում հայ ինքնության համար, ապա եվրոպական կառույցների հետ հետագա ինտեգրումը և դրանից բխող իրավական և հասարակական վերափոխումները դիտվում են որպես մի շարք ուղղակի սպառնալիքների աղբյուր:

Օրինակ՝ հանրային քննարկումների մասնակիցների մի մասի կարծիքով հետագա եվրաինտեգրման զոհ կարող են դառնալ հայ ինքնության այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են հայոց լեզուն, ընտանիքը, հայ հասարակության պատրիարխալ, միաժամանակ տարասեռ կամ հետերոսեքսուալ բնույթը:

[17] Լևոն Մկրտչյան-Քյոխանց, «Հայերը և ռուսները», Գրական թերթ, N 3-4, 2001 թ.:

Իմիջիայլոց, միասեռամոլների վտանգի մասին խոսելը կարծես թե դարձել է եվրաինտեգրմանը տարբեր պատճառներով ընդդիմացող մարդկանց ամենապոպուլյար փաստարկը:

Այս տարվա փետրվար ամսին բրիտանացի դերասան Նայջել Շերլոքը երևանյան թատրոններից մեկում իր կողմից բեմադրած ներկայացման ժամանակ քայլել էր Հայաստանի և Մեծ Բրիտանիայի պետական դրոշների վրա: Հաջորդ օրն իսկ ներկայացումն արգելվեց՝ դառնալով լրատվամիջոցների քննարկման առարկա: Հայաստանյան հեռուստաալիքներից մեկով տեղի ունեցած բանավեճի ժամանակ բեմադրիչ Արմեն Մազմանյանը, քննադատելով տեղի ունեցածը, և միաժամանակ իր ասածն ավելի տպավորիչ դարձնելու համար հուզական կոչով դիմեց հեռուստադիտողներին. «Հայ ժողովուրդ, եկեք միանգամից հոլանդացի բիսեքսուալներ չդառնանք»[18]:

Որոշ ժամանակ անց հայ մշակույթին նվիրված հեռուստահաղորդումներից մեկի ժամանակ, մի մասնակից բողոքեց, թե Եվրոպան փորձում է Հայաստանին թելադրել իր կամքը. սակայն նա ավելացրեց, թե հայերը չեն կարող թույլ տալ, որ իրենց տղամարդիկ, ինչպես օրինակ բրիտանացիներն, ամուսնանան միմյանց հետ եկեղեցիներում[19]:

Միասեռամոլության տարածման հետ է անմիջականորեն կապված հայկական ընտանիքի պահպանման մտահոգությունը: Օրինակ՝ անցյալ տարի աշնանը կրկին հեռուստատեսությամբ, հայաստանյան հասարակական կազմակերպություններից մեկի ղեկավարն առաջարկում էր հետևել Եվրոպային ժողովրդավարության կառուցման և բնապահպանության հարցերում, սակայն զգուշավոր լինել այլ ոլորտներում. օրինակ՝ եվրոպացիները խնդիրներ ունեն միասեռամոլների և ընտանիքի պահպանման հարցերում[20]: 2007թ. նախընտրական քարոզարշավի ժամանակ, երբ հայաստանյան կուսակցությունները յուրաքանչյուր ծնված երեխայի համար տարբեր չափերի միանվագ գումարներ էին խոստանում, քաղաքական գործիչներից մեկը հեռուստաքննարկման

[18] «Ուրվագիծ», Կենտրոն հեռուստաընկերություն, 10 փետրվարի, 2007 թ.:
[19] «Դիպված», Կենտրոն հեռուստաընկերություն, 24 մարտի, 2007 թ.:
[20] «Մամուլի ակումբ», Երկիր Մեդիա հեռուստաընկերություն, 21 նոյեմբերի 2006 թ.:

ժամանակ հայտարարեց, թե հայության թիվը նվազել է այն պատճառով, որ հայ ընտանիքները հետևում են մեկ կամ երկու երեխա ունենալու եվրոպական մոդային[21]:

Տարածք

Եվրոպային առնչվող հայ հանրային դիսկուրսում դրսևորվում են նաև ինքնության կորստի հետ կապված այլ մտավախություններ: Օրինակ, հայերի կոլեկտիվ ինքնության կարևոր բաղադրիչներից է հիշողությունը պատմական տարածքների վերաբերյալ: Մի կողմից, հայ հասարակությունը մեծ կարևորություն է տալիս այս հիշողության պահպանմանը (հատկապես հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի չլուծված խնդիրը), մյուս կողմից Եվրոպան, որի հետ Հայաստանը փորձում է ինտեգրվել, ընկալվում է որպես մի ամբողջություն, որն իր ներսում կարծես թե ջնջում է իր բաղադրիչ մասերի միջև եղած սահմանները: Ստացվում է, որ ինտեգրումը Եվրոպայի հետ տրամաբանորեն պետք է նվազեցնի հայերի պահանջատիրական ձգտումները: Հետաքրքիր է, որ այս հակադրության դրսևորումները տեղ են գտել հայ հանրային դիսկուրսում: Այսպես՝ հրապարակախոս Սիմոն Կամսարականը *Գրական թերթի* 2004թ. համարներից մեկում խիստ քննադատության է ենթարկում արևմտյան մտավորականության ներկայացուցիչներին, որոնք, նրա կարծիքով, վերջին մի քանի հարյուր տարիների ընթացքում միտումնավոր թուլացրել և աղավաղել են ազգային հայրենիք հասկացությունը՝ դրա փոխարեն առաջարկելով կոսմոպոլիտ, ինտերնացիոնալ կամ եվրամիութենական հայրենիք հասկացությունը, որն իր էությամբ կեղծ է: Հեղինակն իր հոդվածը եզրափակում է այն մտքով, թե ի տարբերություն Արևմուտքի, հայերի համար հայրենիքն անքննելի հասկացություն է, որը կյանքի և ազգի հիմքն է[22]:

Լեզու

Եվրոպայի և եվրաինտեգրման վտանգների մասին խոսող մարդիկ առանձնացնում են նաև հայոց լեզվի խոցելիությանը և դրա հետևանքով ազգային մշակույթին

[21] «Հրատապ ռեպորտաժ», Հայկական 2-րդ հեռուստաընկերություն, 15 ապրիլի 2007 թ.:

[22] Սիմոն Կամսարական, «Ո՞րն է հայոց հայրենիքը», Գրական թերթ, N 1, 2004 թ.:

սպառնացող վտանգները: Լավագույն օրինակը, թերևս, գրող Լևոն Խեչոյանի մտորումներն են 2001թ. *Գրական թերթի* համարներից մեկում:

> Մեր լեզվի անկրկնելի խորքում է ժողովրդի հիշողությունը պահպանվում: Երբ Եվրոպան քառասունհինգ երկրների միասնությամբ և քառասունհինգ խոսակցական լեզուներով հասնի Կովկաս, արդյոք չի ճզմի մեր անցյալի սիմվոլներն ու մշակույթը[23]:

Լուծում

Եվրաինտեգրման և ընդհանրապես գլոբալացման ու ազգային ինքնությանն սպառնացող վտանգների մասին խոսող հայ մտավորականները երբեմն նաև դրանցից խուսափելու բանաձևեր են առաջարկում: Դրանց մի մասը բավական աբստրակտ բնույթի են և մշակութային համահարթեցումից խուսափելու համար առաջարկում են տեղայնացնել գլոբալ արժեքները, զտել դրանք ազգային մշակույթի միջով և հարստացնել հայի ինքնությունը: Գլոբալացման մարտահրավերներին դիմակայելու բանաձևերի մյուս խումբն ավելի պրակտիկ է և գլոբալն ազգայինի մեջ ձուլելու ավելի կոնկրետ մեթոդներ է առաջարկում: Դրանցից մեկը վերաբերում է ազգային դպրոցի հզորացմանը՝ հայոց լեզու և հայ գրականություն առարկաների շեշտադրությամբ: Այս բանաձևի կողմնակիցների կարծիքով, հիմնարար հայեցի կրթություն ստացած երիտասարդի հոգեբանությունը չի խաթարվի ո՛չ ինտերնետի, ո՛չ էլ այլ օտարամուտ ազդեցությունների միջոցով:

Սեփական ինքնությունը պահպանելու և հարստացնելու երկրորդ կոնկրետ մեթոդը վերաբերում է թարգմանչական արվեստին: Գրող-հրապարակախոս Հովհաննես Գրիգորյանն իր «Հոգևոր գլոբալացման դեմ սրբերի օգնությամբ» հոդվածում գրում է, որ թարգմանիչները (որոնց առաջին ներկայացուցիչներին հայ ժողովուրդը բարձրացրեց սրբերի մակարդակի) հսկայական դերակատարություն ունեն օտարամուտ գաղափարները սեփական լեզվի միջով ֆիլտրելու և ազգայնացնելու գործում[24]: Հրապարակախոս Գառնիկ Անանյանի կարծիքով, հայերը կարող են հաղթահարել եվրաինտեգրման և գլոբալացման մարտահրավերները, քանի որ իրենց պատմության մեջ գլոբալը տեղականի հետ ձուլելու երկու հաջողված օրինակ ունեն: Առաջինը

[23] Լևոն Խեչոյան, «Եվրոպայի երկաթե ճանապարհներին», Գրական թերթ, N 27-28, 2001 թ.:
[24] Հովհաննես Գրիգորյան, «Հոգևոր գլոբալացման դեմ սրբերի օգնությամբ», Գրական թերթ, N 7, 2005 թ.:

քրիստոնեական գաղափարախոսությունն էր, որը լինելով օտարամուտ երեևույթ, թարգմանվեց հայերեն և յուրացվեց հայ հասարակության կողմից: Ըստ նրա, նույն գործընթացը տեղի ունեցավ նաև խորհրդային գաղափարախոսության դեպքում[25]: Հայերի կողմից քրիստոնեության «համաօրինակման» մեխանիզմի՝ միմեսիսի և այն մերօրյա մարտահրավերների պայմաններում օգտագործելու անհրաժեշտության մասին է խոսվում Դ.Հովհաննիսյանի և Մ.Հովհաննիսյանի «Միմեսիսը որպես արժեքային համակարգի ադապտացման միջոց» հոդվածում[26]:

Ամփոփում

Եվրաինտեգրման գործընթացին ուղեկցող եվրակենտրոն պաշտոնական դիսկուրսից զատ, 2000 թվականից ի վեր գոյություն է ունեցել ոչ պաշտոնական հանրային դիսկուրս, որը Եվրոպայի հանդեպ իր վերաբերմունքի տեսանկյունից կարելի է բաժանել երկու հատվածի:

Առաջին հատվածը վերաբերում է եվրոպական կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական հարաբերություններին: Ինչպես և պաշտոնական դիսկուրսի դեպքում, հանրային դիսկուրսի այս հատվածը վերոհիշյալ ոլորտները սահմանում է որպես ընդօրինակման արժանի:

Հանրային դիսկուրսի երկրորդ հատվածը քննադատական և զգուշավոր վերաբերմունք է ցուցաբերում ժամանակակից Եվրոպայի մշակույթի և հասարակական կյանքի մի շարք արժեքների նկատմամբ: Ավելի կոնկրետ, այս դիսկուրսի մասնակիցների զգալի մասը մտավախություն է հայտնում, որ եվրոպական ինտեգրացիայի և Հայաստանում եվրոպական արժեքների հետագա տարածման հետևանքով կարող են խաթարվել հայկական ինքնությունը կամ առնվազն դրա մի շարք հիմնարար բաղկացուցիչներ, օրինակ՝ հայոց լեզուն, ընտանիքը, պատմական հիշողությունը, հայ հասարակության տարասեռությունը (հետերոսեքսուալությունը) և այլն:

Եվրոպային առնչվող հայաստանյան հանրային դիսկուրսի նշանակալի հատվածը խարսխված է եվրոպական կյանքի մի շարք ոլորտների (օր. մշակույթ, կրոն)

[25] Գառնիկ Անանյան, «Ե՞րբ ենք վերջապես սթափվելու», Գրական թերթ, N 22, 2004 թ.:
[26] Տես Դ.Հովհաննիսյան, Մ.Հովհաննիսյան, «Միմեսիսը որպես արժեքային համակարգի ադապտացման միջոց», Հայաստանը Եվրոպայի ճանապարհին. խմբագիր՝ Ա.Ոսկանյան: Երևան: Անտարես, 2005 թ.:

էութենաբանական կամ էսենցիալիստական ընկալումների վրա: Մասնավորապես, այդ ոլորտներին վերագրվում են ներքին հատկանիշներ, որոնք ենթակա չեն արմատական ձևափոխման (օրինակ, Եվրոպան ընկալվում է որպես բացառապես և անփոփոխ քրիստոնեական հասկացություն):

Գիտակցելով եվրաինտեգրման անխուսափելիությունը և հայկական ինքնությանն սպառնացող վտանգները՝ հանրային դիսկուրսի մասնակիցներից ոմանք ազգային ինքնությունը պահպանելու բանաձևեր են առաջ քաշում՝ շեշտադրում անելով գլոբալի և տեղականի շահեկան ձուլման վրա: Ազգային դպրոցի հզորացումը, թարգմանչական արվեստի զարգացումը, գլոբալ գաղափարների համաօրինակումը և տեղայնացումն այդ բանաձևերից մի քանիսն են:

Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսությունների վերջին շրջանի հարաբերությունների վերլուծության փորձ

Այս հետազոտության նպատակն է վերլուծել Էջմիածնի Մայր Աթոռի և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի վերջին տարիների հարաբերությունները[27]: Երկու աթոռների հարաբերությունների ողջ սպեկտրն առավել լավ պատկերացնելու համար վերլուծությունն սկսել ենք փոքր պատմական ակնարկով, որպեսզի առավել հասկանալի լինեն տեղի ունեցած երևույթների խորքային պատճառներն ու ռացիոնալ լուծումների հնարավորությունը:

Գիտական և հասարակական դիսկուրսում արդեն բավականին ժամանակ իշխող տեսակետ է, որ դեռևս խորհրդային շրջանից Էջմիածնի Մայր Աթոռի և Անթիլիասի Կիլիկյան Աթոռի միջև գոյություն ունեն բավականին խորը տարաձայնություններ, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում աշխարհասփյուռ հայ ժողովրդի միասնականության և համերաշխության գործի վրա: Այս իմաստով դա առավել վառ երևում է սփյուռքի պարագայում, որտեղ եկեղեցին է հանդիսանում հայ ինքնության պահպանության թերևս միակ պատվարը:

Մինչև 1950-ական թթ. Էջմիածնի և Կիլիկիայի հարաբերությունները զարգացել են համեմատաբար բարվոք հունով և փոխօգնության մթնոլորտում: Բավական է նշել, որ Կիլիկիայի հայաթափումից և հատկապես 1922թ. թուրքական թալանից հետո Անթիլիասի կաթողիկոսությունը տարագրվել էր արաբական երկրներ և միայն 1930 թ. ամռանն է հաստատվել Անթիլիասում:

Նվիրապետական այդ աթոռի փաստական վերածնության գործում անուրանալի դեր է կատարել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մասնավորապես Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց կաթողիկոսը, որի օրհնությամբ 1929թ. Երուսաղեմի հայոց պատրիարքությունը կալվածքներով, վարժարաններով և առաջնորդարաններով Կիլիկյան Աթոռին է փոխանցել Դամասկոսի, Բեյրութի և Կիպրոսի եկեղեցիները:

[27] Վերլուծության համար հիմնականում հիմք է ծառայել Մայր Աթոռ Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ» ամսագրերում հրատարակված գրությունները, այլ թերթերում և ամսագրերում հրատարակված հոդվածներին ուղղված պատասխանները, կաթողիկոսների հարցազրույցներն ու տարաբնույթ գրագրությունը երկու Աթոռների միջև:

Անհրաժեշտ է արձանագրել, որ լինելով Հայ եկեղեցու նվիրապետական կենտրոններից մեկը, Անթիլիասի կաթողիկոսությունը 1930-1950-ական թվականներին այդ թեմական սահմաններում անուրանալի ներդրում է ունեցել ազգապահպանության գործում:

Ավելին, հայտնի է Սահակ Բ Կաթողիկոսի այն կողնորոշումը, որը թելադրում էր Կիլիկյան Աթոռը միավորել «Ընդհանրական Հայրապետության» Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսության հետ: Նմանատիպ դիրքորոշում ունի Հայ եկեղեցու մեծագույն աստվածաբան-գիտնական, Կիլիկիայի կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը, որը սովորեցնում էր, թե «Հայոց Հայրապետութիւնը և Եկեղեցին մի է և Էջմիածնի Հայրապետը ավագ եղբայրն յուր պաշտոնով և դիրքով»:

Այնուամենայնիվ, իրավիճակը բավականին փոխվեց 1952-56թթ., երբ երկկողմանի հարաբերություններում նկատելի դարձան որոշակի սառեցման միտումներ: Դրա նյութական արտահայտությունը դարձավ 1957թ. Անթիլիասի կաթողիկոսության կողմից Հյուսիսային Ամերիկայի արևելյան նահանգների և Կանադայի թեմի, իսկ հետագայում՝ 1972 թ., Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի հիմնադրումը, որն Էջմիածինն ընկալեց որպես իր իրավասությունների ուղղակի ոտնահարում: Էջմիածինը մեղադրում էր Կիլիկյան Աթոռին նաև 1958թ. Թեհրանի, Ատրպատականի, Սպահանի, ինչպես նաև Հունաստանի թեմերի մի մասը «սեփականելու» մեջ:

Հակասությունների պատճառներից մեկն էլ եղել և մնում է «կաթողիկոսություն» տերմինի գործածությունը և դրանով հանդերձ երկու Աթոռների միջև հավասարության նշան դնելը: Այս իմաստով հետաքրքրական է, որ Կիլիկյան Աթոռի պաշտպան մատենագիրները երբեմն հրապարակ են նետում այն տեսակետը, համաձայն որի «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը» լոկ տիտղոս է, ու դրանով հանդերձ Կիլիկյան Աթոռը երբևէ չի եղել Էջմիածնի թեմական կառույցներից մեկը[28]: Խորհրդային Հայաստանի գոյության ժամանակահատվածում Կիլիկյան Աթոռի տեսաբաններն իրենց առաջնությունը փաստարկելու միտումով նշում էին, թե երկու կաթողիկոսները ծառայում էին հակոտնյա բևեռներում. մեկը՝ անաստվածների երկրում, մյուսը՝

[28] Այս հավակնությունների արտահայտություններից մեկն էլ Ստ. Ալաջաջյանի հոդվածն է, որտեղ էլ շոշափվում է նշված խնդիրը: Տե՛ս «Գրական թերթ», 25 նոյեմբերի 2005 թ.:

հայրենիք կորցրած հավատացյալների շրջապատում: Այս դրույթի ենթատեքստից իսկ կարելի է հետևություններ անել երկու Աթոռների հարաբերությունների վերաբերյալ[29]:

Հետաքրքրական է նաև մեկ այլ իրողություն, որն առավելապես հոգեբանական ենթատեքստ ունի: Խնդիրը վերաբերում է սփյուռքահայերի կողմից Հայրենիքի և Մայր Հայաստանի ընկալման գաղափարին: Քանի որ Էջմիածնի Մայր Աթոռը բավականին տևական շրջան գտնվում էր Սովետական Միության կազմի մեջ մտնող Հայաստանի տարածքում, իսկ սփյուռքահայերի ստվար հատվածը արմատներով առավել կապված էր Արևմտյան Հայաստանին ու դա էր ընկալում որպես Մայր Հայրենիք, ահա այս տեսանկյունից էլ ակամայից ավելի էին ամրապնդվում Կիլիկյան Աթոռի դիրքերը, որը ՀՅԴ քարոզչամեքենայի օգնությամբ փորձում էր սփյուռքահայերին առավելապես կապել Մայր Հայրենիքից վտարված Կիլիկյան Աթոռի հետ: Այս իմաստով, սակայն, ուշագրավ էին Վազգեն Ա-ի շրջագայությունները, երբ սփյուռքի հայորդիների մեծ մասը շարունակում էր Մայր Աթոռին նայել որպես ողջ հայության հոգևոր կենտրոնի [30]:

Այս հետազոտության մեջ Էջմիածնի և Կիլիկիայի հարաբերությունների պատմությունը փորձել ենք բաժանել չորս հիմնական փուլերի.

1) 1950-ականներից մինչև 1988 թ. Մեծ երկրաշարժը
2) 1988 թ. մինչև 1994 թ. Վազգեն Ա Վեհափառի մահը
3) 1994 – 1998 թթ. Գարեգին Ա կաթողիկոսի գործունեությունը
4) 1998 թ. մինչև մեր օրերը (Գարեգին Բ-ի գործունեությունը)

Առաջին փուլի վերլուծությունը ցույց է տալիս, որ հարաբերությունները եղել են հիմնականում սառած վիճակում՝ կապված քաղաքական տարբեր հարթություններում գործառնող կաթողիկոսական կենտրոնների հետ: Այս իմաստով հետաքրքրական են

[29] Հետաքրքրական է, որ երկու Աթոռների հարաբերություններում լարվածություն զգացվել է երկար դարեր շարունակ: Եկեղեցագետները մեջբերում են Էջմիածնի Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության համերաշխության մի քանի արժանահիշատակ դեպքեր. ա) 1656 թ. հանդիպումը Երուսաղեմում և նորմալ հարաբերությունների հաստատումը, բ) 1929 թ. Գևորգ Ե-ի միջնորդությամբ Երուսաղեմի որոշ թեմերի փոխանցումը Կիլիկիային, գ) Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի մահվան կապակցությամբ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանի մասնակցությունը և նրա սրտացավ վերաբերմունքը:

[30] Այս մասին մանրամասները տե՛ս «Էջմիածին», Մամուլի արձագանքները, հունվար-մարտ, 1988թ.:

հատկապես Բոսթոնում ՀՅԴ-ի կողմից հրատարակվող «Հայրենիք» օրաթերթի հրապարակումները, որոնք հոգևոր հարցերում քննադատության են ենթարկում Մայր Աթոռի վարած գործունեությունը հատկապես սփյուռքի հետ կապված հարցերում[31]: Որոշիչ դեր խաղալով Անթիլիասի կաթողիկոսության գործունեության ու նրա քաղաքականության մշակման գործում՝ ՀՅԴ-ի համար, իհարկե, ձեռնտու չէ իր ազդեցության ոլորտը համարվող տարածության մեջ այլ ազդեցությունների ուժեղացման հեռանկարը:

Առաջին փուլի կամ մինչև 1988թ. երկրաշարժն ընկած հատվածում երկու Աթոռների հարաբերություններում էական տեղաշարժեր տեղի չունեցան, բացառությամբ Խորհրդային Միության փլուզումից մի քանի տարի առաջ տեղ գտած որոշ փոփոխությունների: 1980-ական թթ. վերջերին Մայր Աթոռում սկսեցին լրջորեն մտածել եկեղեցական կանոնադրության մշակման շուրջ, ինչը բավականին խիստ գնահատականի արժանացավ սփյուռքի որոշ կուսակցականացված շրջանակների կողմից: Մասնավորապես, «Հայրենիք» օրաթերթը (22 նոյեմբերի 1986 թ.) սփյուռքում անկազմակերպ վիճակի հիմնական մեղավոր է տեսնում երկու հոգևոր կենտրոնների միջև «երեսուն տարիէ ի վեր գոյութիւն ունեցող հիւանդագին կացութիւնը»: Այս նպատակի իրագործման, սփյուռքում տիրող խառնակ վիճակը վերացնելու և այլ խնդիրները լուծելու համար ուրվագծվում էին հետևյալ հիմնական խնդիրները.

ա) հռչակել միությունը և մեկությունը Հայ առաքելական եկեղեցու և միասնությունը Հայաստանում և սփյուռքում բնակվող հայ հավատացյալ ժողովրդի կրոնական կյանքի մակարդակի վրա՝ առանց քաղաքականացված և կուսակցականացված միջամտությունների: Եկեղեցին պետք է զերծ մնա կուսակցականացումից ներքին միասնությունը վերագտնելու նպատակով,

բ) հռչակել կանոնական միություն Հայ եկեղեցու նվիրապետական աթոռների և, հատկապես, հոգևոր գործակցությունը և միասնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միջև՝ իրավասությունների սահմանների ճշտումով,

[31] Առավել օբյեկտիվ արդյունքների ենք հանգում «Հայրենիք» օրաթերթի և «Էջմիածին» ամսագրի էջերում փոխադարձ մեղադրանքների ու քննադատության վերլուծությամբ:

գ) ստեղծել ներդաշնակ համագործակցություն հոգևորականների և աշխարհիկների միջև՝ եկեղեցական, վարչական և ֆինանսական հարցերում ապահովելով հավասար իրավասություններ,

դ) հաստատել ժողովրդավարական և ժողովական ղեկավարում եկեղեցու կյանքում՝ համայնքներում և թեմերում,

ե) հոգևորականների քննարկմանը թողնել եկեղեցու դավանաբանական, եկեղեցական, կանոնական, հոգևորականների կարգապահության, կրոնական, ծիսական բարեկարգության հարցերը:

Այս ամենով հանդերձ Էջմիածնից հնչում էին կարծիքներ Հայրենիք-Սփյուռք կապերի գործում Էջմիածնի դերի նվազեցմանն ուղղված որոշակի արձագանքների իմաստով: «Էջմիածին» ամսագրի 1987թ. Է համարի խմբագրականում կոչ է արված Կիլիկյան Աթոռին չտրվել կուսակցական երկպառակություններին և հավատարիմ մնալ եկեղեցու միության գաղափարին: Կարծում ենք, որ Էջմիածնում ևս քաջ գիտակցում էին, որ Սփյուռքի կուսակցական կառույցը բավականին խոր արմատներ էր ձգել Կիլիկիո Աթոռի մեջ և, շատ դեպքերում, «վճարողներն էլ պատվիրում էին երաժշտությունը»:

Իհարկե, պատահական չէր, որ Էջմիածնի Մայր Աթոռին անգործության կամ չարակամ մտադրությունների մեջ մեղադրում էր և, միևնույն ժամանակ, Կիլիկիո Աթոռի դերը գերագնահատում էր Հայ Յեղափոխական Դաշնակցության «Հայրենիք» օրաթերթը: Պարզ է, որ որոշակիորեն ճնշումները թուլացրած Խորհրդային Միության մեջ գործող Էջմիածինը փորձում էր ամրապնդել կապերը Սփյուռքի իր թեմերի հետ, ինչը կնշանակեր Էջմիածնի և, դրանով հանդերձ, «այլ ուժերի» ամրապնդում Սփյուռքում: Դա է պատճառը, որ, ինչպես միշտ, քաղաքական հիմնապատճառները հոգևոր շղարշով քողարկվելու, բայց, դրանով հանդերձ, Էջմիածնի ազդեցությունը թուլացնելու միտումով ՀՅԴ-ն ցանկանում էր սանձազերծել հակամարտություն երկու Աթոռների միջև:

«*Новое время*» թերթին տված հարցազրույցում[32] Վազգեն վեհափառը հաստատում է Էջմիածնի և Կիլիկիայի միջև տեղ գտած սառը փոխհարաբերությունները՝ միևնույն

[32] Տե՛ս «Էջմիածին» նոյեմբեր-դեկտեմբեր, 1987 թ.:

ժամանակ նշելով, որ Հայ Առաքելական եկեղեցու կենտրոնը Ս. Էջմիածինն է, իսկ երկու հայ հոգևոր կենտրոնների հարաբերությունը պայմանավորվում է աշխարհում քաղաքական իրավիճակի փոփոխությամբ: Նա ցավով է արձանագրում Սփյուռքի գաղափարական ու կրոնական տարաբաժանվածությունը[33], ինչը վատ է անդրադառնում հայ աշխարհասփյուռ ժողովրդի ազգային միասնության պահպանման վրա:

Կանոնադրության նկատմամբ ՀՅԴ-ի և Կիլիկյան Աթոռի մերժողական վերաբերմունքը հիմնականում պայմանավորված էր Էջմիածնի կողմից նախաձեռնած կանոնադրության մշակմամբ, որը, ըստ որոշ կուսակցական մամուլի օրգանների, նպատակադրված էր սահմանափակել աշխարհական տարրի մասնակցությունը Էջմիածնի կառավարման հարցերին:

Սա լուրջ անհանգստություն էր պատճառել Սփյուռքում մեծ դեր ունեցող և Էջմիածնի Մայր Աթոռի կառավարման մեջ լծակների տիրապետող կուսակցությանը: Սակայն 1988թ. ԱՄՆ կատարած իր ուղևորության ընթացքում Վազգեն Ա Հայրապետը հերքում է բոլոր տեսակի մեղադրանքները աշխարհականների մասնակցության սահմանափակության հետ կապված և հիմնավորում կանոնադրության անհրաժեշտությունը[34]:

Բոլոր թեմերին, ինչպես նաև Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչներին հատուկ հրավերներ ուղարկվեցին կանոնադրության մեջ իրենց ուղղումներն ու փոփոխությունները մտցնելու նպատակով, սակայն Էջմիածին ժամանելով՝ Կիլիկիո երեք ներկայացուցիչները հայտարարեցին, որ կանոնադրության անհրաժեշտություն ընդհանրապես չկա:

Կարելի է հասկանալ Կիլիկյան Աթոռի մտահոգությունները, քանի որ կանոնադրությամբ պետք է ճշտվեին Եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասության սահմանները, նրանց միջև հարաբերության ձևերը և ընդհանուր

[33] Եկեղեցական թեմերի ընդհանուր թվի մոտավորապես 20%-ը 1987 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ չեն գտնվում Էջմիածնի կանոնադրական իրավասության ներքո:

[34] «Պայքար» և «Արմինը Միրլ Սփեքթեյթր» շաբաթաթերթերին տված հարցազրույցում Վեհափառը նշում էր, որ քաղաքական իրավիճակների փոփոխության պատճառով դադարել է գործելուց 1836թ. Պոլոժենիան, և Ցեղասպանության պատճառով՝ 1863 թ. Ազգային Սահմանադրությունը, որի պատճառով էլ նոր կանոնադրության անհրաժեշտություն է առաջացել:

սկզբունքները: Մյուս կողմից, Վազգեն Ա-ի արտահայտած դիրքորոշումը բավականին հստակ էր և, իհարկե, ոչ ընդունելի Կիլիկյան Աթոռի համար:

Չբավարարելով անթիլիասական թեմերի պահանջը և պաշտոնական այցելություն չտալով նրանց՝ Վազգեն Ա-ն ընդգծեց, որ դրանով կվավերացվեր Հայ եկեղեցու տարանջատ լինելու փաստը, իսկ դա չէր կարող տեղի ունենալ, քանի որ հակասում էր Հայ եկեղեցու մեկ և անբաժան լինելու սկզբունքին: Մեր եկեղեցու հիմքերի վերականգնումը Էջմիածնի դիրքորոշմամբ բավականին հստակ էր ու կոշտ. **միություն ստեղծել կնշանակեր միանալ Սուրբ Էջմիածնին ու վերադառնալ նրա օրինության տակ:**

Այս տեսանկյունից երկու Աթոռների դիրքորոշումներն էլ բավականին կոշտ էին, մեծապես ելնում էին սեփական շահերից և, հետևաբար, ընդհանուր հայտարարի հասնելու երկուստեք ջանքերը հենց սկզբից դատապարտված էին անհաջողության, քանի որ մի դեպքում առաջնային էր համարվում սեփական կանոնական առաջնայնության շեշտադրումը, իսկ մյուս դեպքում՝ անկախության պահպանումը և ազդեցության գոտիների մեծացումը: Երկու դեպքում էլ եկեղեցիների կողմից ստորադասվում էր իրենց ամենակարևոր առաքելությունը, այն է՝ նպաստել ազգի աշխարհասփյուռ բեկորների հավաքականությանը ու միասնականության պահպանությանը:

Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում հիրավի տեղաշարժեր նկատվեցին 1988թ. հոկտեմբեր ամսին, երբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով և նախաձեռնությամբ Էջմիածնի ներկայացուցիչները Հուսիկ սրբազանի գլխավորությամբ Անթիլիասում մասնակցեցին մյուռոնօրհնեքի արարողությանը: Արարողության ժամանակ ուշագրավ էր հատկապես Կիլիկյան նախկին մյուռոնի հետ Էջմիածնից բերված մյուռոնի խառնումը նոր պատրաստվող մյուռոնին, որը էջմիածնական առաքելական ժառանգորդության ու Էջմիածնի հետ ունեցած անքակտելի կապերի գրավականն էր:

Հետաքրքրական էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի խոսքը, որի մի մասը մեջբերում ենք ստորև. «Այս պահուն բեմին վրայ է Յուսիկ արքեպիսկոպոսը, որպէս ներկայացուցիչ **Մեր աւագ Եղբօր**՝ Ն.Ս.Օ.Տ.Տ Վազգէն Ա կաթողիկոսին. դուք ձեր աչքերով տեսաք Ս. Էջմիածնի ներկայութիւնը մեր Միւռոնօրհնէքին մէջ, Հայաստանի

հողին ներկայութիւնը, հայ ժողովուրդի հոգիի միասնութիւնը, միաձուլումը մեր հետ այսօր: Կուզեմ, որ բոլորդ ալ այսօր ցնծաք Հայաստանեայց Եկեղեցւոյ անբեկանելի, անխախտելի, անայլայլելի միութեան այս գեղեցիկ արտայայտութեան համար ու կը հաւատանք եւ կը հաստատենք – որովհետեւ մեր հոգիին ձայնն է այդ, ինչպէս մեր արեան գոյնն է կարմիր, այնպէս եւ ձայնն է ջինջ ու հարազատ – թէ՝ այնքան ատեն որ **մենք ունինք երկու կաթողիկոսութիւններ, պիտի մնանք միշտ մէկ Եկեղեցի**: Ան որ Միւռոնով կօծուի, անոր համար էջմիածնական ու անթիլիասական չկայ, անոր համար թէ՛ էջմիածնական կայ եւ թէ՛ անթիլիասական, որովհետեւ մէկ է Հայ Եկեղեցին եւ անոր սիրտի երկու անբաժան մասնիկներն են Ս. Էջմիածինը եւ Կիլիկեան դարաւոր Աթոռը»:

Այս խոսքի մեջ հատկապես շեշտադրել ենք այն հանգամանքը, որ Կիլիկյան Հայրապետն Էջմիածնի իր պաշտոնակցին անվանում է ավագ եղբայր՝ դրանով իսկ ցույց տալով երկու աթոռների միջև գոյություն ունեցող սուբորդինացիան: Սակայն մյուս կողմից էլ Գարեգին Բ-ն «երկու կաթողիկոսություններ, մեկ Եկեղեցի» ձևակերպմամբ և Կիլիկյան իբրև «Մեկ Եկեղեցու» մյուռոնի մասին խոսքը վկայում է երկու Աթոռների միջև հավասարության մասին: Աստվածաբանական տեսանկյունից կարելի է ասել, որ լիովին ընկալելի են Գարեգին Բ-ի արտահայտությունները, քանի որ Եկեղեցին առաջին հերթին ժողովուրդն է, իսկ հայ ժողովրդի միասնականության մասին մտահոգ են երկու Աթոռներն էլ: Քաղաքական առումով միանշանակ կարելի է բարձր գնահատել Գարեգին Բ-ի կողմից նախաձեռնած այս առաքելությունը, որը երկար ընդմիջումից հետո առաջինն էր իր տեսակի մեջ և զգալի ոգևորություն առաջացրեց Հայաստանի և Սփյուռքի հայ հավատացյալների մոտ: Միացյալ մյուռոնօրհնեքի արարողությունը խորհրդանշական էր երկու եկեղեցիների միասնության վերականգնման հույսի արթնացման, ինչպես նաև առաքելական նվիրապետական ժառանգորդության միասնականացման իմաստով:

Երկու Աթոռների հարաբերություններում բեկանելի պահ հանդիսացավ 1988թ. Մեծ երկրաշարժը, որը ցնցեց աշխարհասփյուռ հայությանը: Այդ ծանր օրերին

Հայաստան շտապեց Մեծ Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ իր վշտակցությունը հայտնելու հայ ժողովրդին[35]:

Մայր Աթոռում ասված նրա խոսքն ուղղված էր հայ ժողովրդի միասնության ամրապնդմանը, երկու Աթոռների միջև հաստատուն հարաբերությունների հաստատմանը: Կիլիկիո կաթողիկոսը մեծապես արժևորեց հայրենիքի դերն աշխարհասփյուռ հայության պահպանման գործում. «սփյուռքը մահվան նախադուռն է առանց հայրենիքի» խոսքերը խիստ բնութագրական են հայրենիք-սփյուռք կապերն առավել ամրապնդելու համար: Այս հանգամանքը ևս կարևորեց Վազգեն Ա-ն՝ նշելով, որ **Էջմիածնից հետո երկրորդ տեղը զբաղեցնող Կիլիկիո Աթոռը** մեծ դեր ունի սփյուռքահայերի կյանքում և երկրաշարժի ծանր օրերին այդ դերը էլ ավելի է մեծանում:

Մեր կարծիքով Գարեգին Ա-ի կողմից Վազգեն Ա-ին «մեր ավագ եղբայր կոչելը» և միևնույն ժամանակ Վազգեն կաթողիկոսի կողմից «երկրորդ տեղ զբաղեցնող Կիլիկիո Աթոռ» արտահայտությունը վառ վկայություն են նրա, որ Հայ եկեղեցու երկու Աթոռների միջև արդեն իսկ հաստատվում էր ցանկալի խաղաղությունը և համերաշխությունը: Չնայած այս հանգամանքին՝ «Սովետական Հայաստան» թերթին տված հարցազրույցում Վազգեն Վեհափառը նշեց, որ, չնայած որոշ թեմերում առկա տարաձայնություններին, այնուամենայնիվ, երկու կաթողիկոսները լի են վճռականությամբ հակասությունները վերջնականապես լուծելու համար[36]: Այստեղից կարելի է հետևեցնել, որ չլուծված հակասությունը երկու Աթոռների միջև արդեն տեղափոխվել էր թեմեր, ինչը, ժամանակին չկանգնեցնելու պարագայում, կարող էր անլուծելի կերպարանք ստանալ:

Եվ ինչպես բազմիցս ապացուցել է պատմությունը, հայ ժողովուրդը միասնականություն է հանդես բերում հատկապես համազգային աղետների և դժբախտությունների պարագայում: Այս իմաստով դեկտեմբերյան երկրաշարժը հանդիսացավ «սառույցի հալման» սկիզբը, և 1989 թ. Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսն առաջին անգամ Էջմիածին-Կիլիկիա հարաբերությունների մեջ պաշտոնական այցով ժամանեց Էջմիածին, մասնակցեց ապրիլ 24-յան

[35] Այդ կապակցությամբ Ամենայն Հայոց կաթոիկոս Վազգեն Ա-ն և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն ստորագրեցին հայ ժողովրդին ուղղված միասնական կոչ՝ դժվարին կացությանը դիմանալու և միասնական ուժերով ստեղծված ծանրագույն դրությունից դուրս գալու համար: Մանրամասները տե՛ս «Էջմիածին» նոյեմբեր-դեկտեմբեր, 1988 թ.:

[36] Տե՛ս նույն տեղում:

արարողություններին, ինչն աննախադեպ երևույթ էր պատմաքաղաքական, եկեղեցական ու կրոնական իմաստներով: Այս օրերի ընթացքում երկու կաթողիկոսների մոտ իշխում էր **«մեկ հավատք և մեկ ժողովուրդ»** սկզբունքի վրա հիմնված համագործակցության ոգին: Ցեղասպանության անմիջական հետևանքները կրած Կիլիկյան Աթոռի ու Մեծ երկրաշարժի արդյունքում նոր վերք ստացած Ամենայն Հայոց Հայրապետությունը միասնական սգի զգացումով միավորեցին իրենց ջանքերը միասնական ապագայի տեսլականի մեջ: Համազգային սգի համատեղ այս ծեսին լրացնելու եկավ համատեղ հաղթանակի տեսլականն՝ ի դեմ թափ հավաքող Ղարաբաղյան շարժման: Այս խորհրդանշական միասնության լավագույն ձևակերպումն արեց Վազգեն Ա-ն՝ նշելով. «Նա (Գարեգին Բ-ն՝ Հ. Հ.) ինձ հետ միասին խորհրդանշում է ամբողջ Հայաստանյայց Եկեղեցին, մեկ անբաժան ազգ դարձած, խորհրդանշում է նաև կարևոր չափով մեր ամբողջ ժողովրդի միասնությունը՝ Հայրենիք և Սփյուռք, խորհրդանշում է նաև մեր միացյալ ուխտը՝ հավատարիմ մնալու մեր նահատակների հիշատակին …»[37]:

Ուշագրավ է, որ Կիլիկիո կաթողիկոսի պաշտոնական այցելության ավարտին ստորագրվեց համատեղ հայտարարություն **«մեկ Եկեղեցի, մեկ ազգություն, մեկ մայր Հայրենիք»** նշանաբանով, որտեղ երկու Աթոռների մերձեցման ենթատեքստը և դրդիչ ուժը 1915թ. **Մեծ** Եղեռն էր ու 1988թ. **Մեծ** երկրաշարժը: Հետաքրքրական է, որ թե՛ համատեղ հայտարարության մեջ, թե՛ ելույթներում Սովետական Հայաստանը սկսեց ճանաչվել ու կոչվել Մայր Հայաստան, և սփյուռքահայերի մի հոծ զանգված երկրաշարժի զոհերին արված նվիրատվություններով հաստատեց ներկա Հայաստանի նկատմամբ իր հավատամքը՝ որպես Միացյալ և Մայր Հայաստանի: Այս երևույթն առանձնապես կարևոր էր այն տեսանկյունից, որ Մեծ Եղեռնից հետո աշխարհասփյուռ հայությունը Մայր Հայրենիքի մասին իր պատկերացումները զուգորդում էր «Էրգիր» գաղափարի հետ, իսկ իբրև հոգևոր կենտրոն՝ արևմտահայն ընկալում էր իր հետ նույն ճակատագրին արժանացած Կիլիկյան Աթոռը («Կիլիկիա» բառը ևս ուներ իր մոգական ազդեցությունը): Օտարվածությանը նպաստեց նաև Սովետական Միության կազմի մեջ մտնող Հայաստանի հարկադրական փակ բնույթը, ինչպես նաև գերիշխող գաղափարախոսությունը: Սակայն օրավուր աճող Շարժման հեռանկարը, համազգային

[37] Նույն տեղում, Դ-Ե-Զ, 1989 թ.:

աղետը և երկու կաթողիկոսական կենտրոնների համատեղ գործունեությունն ունեցան իրենց վճռական ազդեցությունը Սփյուռքի որոշ մասի հեղաշրջման ու Արևելյան Հայաստանի՝ իբրև Հայրենիք ընկալման, «Էրգիր» վերադառնալու հույսի արթնացման տեսանկյունից:

Այս կապի լավագույն վկայությունը դարձավ Գարեգին Բ-ի նախաձեռնած այցելությունը Դեր-Զոր անապատ, որտեղ Էջմիածնից Վազգեն Ա-ի ուղարկված ներկայացուցիչների մասնակցությամբ «Սրբոց նահատակաց» եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան պատարագ, իսկ դրանից հետո Կիլիկիո կաթողիկոսն այցելեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ որպես Դեր-Զորի ամուր կապի վկայություն Մայր Հայրենիքի հետ: Էջմիածնի Մայր Տաճարում արտասանած իր խոսքի մեջ Գարեգին Բ-ն նշեց, որ «մեկ ու կես միլիոն նահատակներուն զոհողության իմաստը Հայաստանով է, որ կարժևորվի: Եվ մասնավորաբար **հիմիկվան Հայաստանով**»: Այս խոսքերի մեջ իր ուրույն դերն էր ունեցել 1990թ. օգոստոսի 23-ի Անկախության Հռչակագիրը, քանի որ անկախ Հայաստան ունենալու արդեն տեսանելի իրականությունը նոր հույսեր էր արթնացնում Սփյուռքի մոտ Մայր Հայրենիք ունենալու իմաստով:

Իրադարձությունների նման զարգացումը և հարաբերությունների նորմալացումը հույսեր արթնացրեց հայ հասարակության բոլոր շերտերում Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում տեղ գտած խզումների վերացման տեսանկյունից: Փարիզում «Այբ» ռադիոյի տված հարցազրույցի ժամանակ Վազգեն Ա-ն հաստատեց, որ երկու Աթոռները «վերջնական համաձայնութեան են յանգած»[38]: Հետաքրքրական է նաև, որ բելգիական «Լա Լիբրը Բելժիկ» թերթի 1990թ. մայիսի 14-ի համարում Վազգեն Ա Վեհափառը, խոսելով հայ նվիրապետական այլ կենտրոնների մասին, օգտագործեց ուղղափառ եկեղեցիների կողմից բավականին գործածվող «առաջինը հավասարների մեջ» արտահայտությունը (primus inter pares), որը նշանակում է հավասար իրավունքներով, փոխադարձ հաղորդության մեջ, բայցևայնպես, առաջին չորս հայ նվիրապետական Աթոռների մեջ (Էջմիածին, Կիլիկիա, Երուսաղեմ,

[38] Նույն տեղում, Թ-Ժ, 1989 թ.:

Կոստանդնուպոլիս)[39]: Այս առաջնայնությունը դրսևորվում էր թե՛ ժամանակագրական, և թե՛ իրավական իմաստով:

Հայտնի է, որ Էջմիածին-Անթիլիաս հարաբերություններում առավել կնճռոտ հիմնախնդիրը հանդիսանում էր Հյուսիսային Ամերիկայի թեմական վիճակի շուրջ ստեղծված անկարգ դրությունը: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո երկկողմ հարաբերությունների համար առավել լայն ասպարեզ բացվեց: Ամենայն Հայոց կաթողիկոսը, փորձելով վերջնականապես վերացնել երկկողմ հարաբերությունների պատմության մեջ առկա բացասական հետքը, ամբողջ մեղքը վերագրեց ոչ թե հոգևոր, այլ քաղաքական իրականությանը՝ նշելով, որ սովետական իշխանության վարած քաղաքականությունը անհամատեղելի էր Կիլիկյան Աթոռի վարած քաղաքականության տրամաբանությանը: Այս իմաստով Վազգեն Ա-ն հստակորեն մատնանշում էր Հ.Յ.Դաշնակցության ազդեցությունը Կիլիկյան Աթոռի վրա և բազմակուսակցական համակարգի ստեղծումով ավանդական կուսակցությունների համար նոր ոլորտ բացվելու փաստով անուղղակի կոչ հղում կուսակցություններին զբաղվելու ՀՀ ներքին հարցերով և ոչ թե հոգևոր իշխանության ոլորտով: «Կուսակցությունները, այլևս կարիք չունին Եկեղեցին իբրև յենարան ունենալու: Անոնց յենարանը այժմ Մայր Հայրենիքն և հայ ժողովուրդը»- եկեղեցու վերկուսակցական դիրքորոշումն այսպես է արտահայտում Վազգեն Ա-ն[40]:

Դատելով Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների հայտարարություններից՝ կարելի է ասել, որ 1991թ. արդեն երևում էին հստակ համագործակցության մեխանիզմները, քանի որ բավականին ակտիվացել ու աշխուժացել էին փոխայցելություններն ու կապերը «մեկ և անբաժան Հայ Առաքելական եկեղեցու մեջ»: Այս առումով դիրքորոշումների վերլուծությունից հստակ երևում է, որ Կիլիկյան Աթոռը չէր հակադրվում Էջմիածնի կողմից հաճախ հնչող «մեկ միասնական կաթողիկոսության մասին հայտարարություններին», ինչը վկայությունն էր այն բանի, որ, թեկուզև լուռ, բայց Կիլիկյան հոգևոր իշխանությունը

[39] Ի դեպ, առաջին անգամ էր պատմության մեջ, երբ Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսները միասնաբար մեկ եկեղեցի էին օծում, ինչը տեղի ունեցավ Բրյուսելում Ս. Մարիամ Մագդաղենացու եկեղեցու օծման արարողությամբ: Կաթողիկոսների խոսքերով այդ արարողությամբ հիմք դրվեց Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների համատեղ գործունեությունը:
[40] «Էջմիածին», հունվար-մարտ, 1991 թ.:

համաձայնություն էր տվել միասնականորեն հանդես գալու սպասված, բայց չգրված ու երկկողմանիորեն չհայտարարված իրողության հետ: Չնայած այդ հանգամանքին՝ պետք է նշել, որ մեկ եկեղեցու կառույցի մեջ մի կաթողիկոսության տակ գտնվող Հյուսիսային Ամերիկայի թեմը վերջնականապես չէր ենթարկվում Ամենայն Հայոց կաթողիկոսին, ինչը որոշակի կասկածների տեղիք էր տալիս վերջնական համաձայնության հասնելու մտադրությունների և կատարվող քայլերի արդյունավետության վերաբերյալ:

Բայցևայնպես, պաշտոնական Էջմիածնի տարածած հաղորդագրություններից պարզ էր դառնում, թե ինչպիսի հոգատար վերաբերմունք էր դրսևորում Էջմիածինը երկկողմանի հարաբերությունների բարելավման ուղղությամբ: Այսպես, երբ 1992թ. «Ազգ» թերթի նոյեմբերի 4-ի համարում հոդվածագիրը գրում էր Էջմիածին-Կիլիկիա հարաբերությունների մասին, Մայր Աթոռը շատ արագ հերքում է տպագրում «Էջմիածին» պաշտոնաթերթում՝ նշելով, որ հարաբերությունները զարգանում են բնական փուլով, և կարիքը չկա խոսելու նախկին հարաբերությունների մասին, քանի որ դրանով կարելի է վնաս հասցնել համերաշխության և միաբանության ոգուն[41]: Միաբանության այդ ոգին առավել երևում էր Գարեգին Բ-ի կատարած հաճախակի այցերից և Էջմիածնի Մայր Տաճարում նրան վստահվող պատարագների մատուցումից: Այդ համագործակցությունն առավել էր սերտանում առ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառի տածած հարգալից վերաբերմունքի պատճառով: Իր հերթին Գարեգին Բ կաթողիկոսը, հանդիսանալով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ, իր մասնակցությունն ունեցավ Հայրենիք-Սփյուռք

[41] «Ազգ» թերթում Երվանդ Ազատյանի հոդվածի պատասխանը կաթողիկոս Վազգեն Ա-ն տվեց անձամբ 1992թ. դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած մամուլի թղթակիցների հարց ու պատասխանի ժամանակ՝ արտահայտելով իր դժգոհությունը բարելավված երկկողմ հարաբերությունների վրա չարակամորեն ազդող բոլոր շահագրգիռ կողմերի նկատմամբ: Հետաքրքրական է, որ, իբրև երկու Աթոռների միասնականության արդյունք և ապացույց, Հայրապետն առանձնացրեց հետևյալ կարևոր ձեռքբերումները. Աղետի գոտու և, հատկապես, Ստեփանավան քաղաքի վերականգնմանն ուղղված համատեղ ջանքերը, փոխադարձ օգնությունները Էջմիածնի կողմից լիբանանահայերին և Կիլիկիայի կողմից՝ Լենինականի Սուրբ Աստվածածին եկեղեցու փուլ եկած զանգակատան վերականգնումը, «Հայաստան» հիմնադրամում ծավալած համատեղ գործունեությունը, միասնական կոչը Հայ ժողովրդին օտարամուտ ազդեցություններից զերծ մնալու վերաբերյալ, Հունաստանի թեմի վերջնական կանոնական կարգավորման հարցը, միասնական ծրագիրը եկեղեցու սպասավորներ պատրաստելու և աստվածաբանական ու կրոնագիտական դասագրքեր գրելու վերաբերյալ և, վերջապես, ազգային միասնության և համերաշխ գործակցության ոգին բարձրացնելուն ուղղված կաթողիկոսների ջանքերը:

կապերի ամրապնդմանը, Աղետի գոտու վերականգնմանը, ինչպես նաև Արցախյան ազատամարտի հաղթանակի գործում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ անկախ Հայաստանի պատմության սկզբնական փուլում և կաթողիկոս Վազգեն Ա-ի գահակալության վերջին շրջանում տեղի ունեցան նշանակալից իրադարձություններ Էջմիածին-Կիլիկիա կաթողիկոսական Աթոռների հարաբերություններում: Այդ հարաբերությունների բարձրակետը եղավ 1992թ. դեկտեմբերին հրապարակված Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը եկեղեցիների միության հարցի վերաբերյալ: Չնայած կոնդակն ուղղված էր Ընդհանրական եկեղեցուն և առավելապես արտացոլում էր ընդհանրական սկզբունքներ՝ այնուամենայնիվ, նրանում շեշտվում էր Հայ եկեղեցու՝ Հայրենիքից դուրս գտնվող նվիրապետական պատմական երեք Աթոռների մասին: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ երկկողմ հարաբերություններն ընթանում էին բնականոն հունով և, եթե չլինեին կողմնակի կուսակցական ազդեցությունները, ապա հնարավոր էր խոսել նաև բոլոր սոցիալական մակարդակներում համագործակցության և միասնականության մասին:

ՌԴ անդրկովկասյան բաղաքականության որոշ դրույթների շուրջ

Դեռ 2006թ. մայիսի վերջին ՌԴ ՆԳՆ ներքին զորքերի գլխավոր հրամանատար Ն.Ռոգոժկինը հայտարարեց, որ Չեչենական հանրապետությունում տեղաբաշխված ներքին զորքերի 46-րդ օպերատիվ նշանակության առանձին բրիգադը համալրվելու է 5 հազ. հավելյալ զինծառայողներով: Ըստ գլխավոր հրամանատարի՝ Հյուսիսային Կովկասում ուժային ներկայության ընդլայմանը միտված միջոցառումները կոչված են կատարելագործելու ՌԴ պետական սահմանների պաշտպանությունը Հյուսիսկովկասյան զինվորական շրջանի զորքերի օպերատիվ դասավորվածության ընդհանուր համակարգում: Հատկանշական է, որ ձեռնարկվող քայլերի արդյունավետությունը հաշվարկվում է՝ տարածաշրջանում ռազմական իրադրության չափորոշիչների հիման վրա:

Վերոհիշյալ որոշումը միայն առաջին հայացքից կարող է թվալ զուտ Ռուսաստանի ներքին գործերին վերաբերող «աշխատանքային» մի որոշում, որն, ի դեպ, այնքան էլ համահունչ չէ ռուսաստանյան պաշտոնական աղբյուրների՝ Չեչնիայում հարատև հարաբերական կայունության հաստատման գնահատականների հետ: Իրականում ՌԴ Հարավային դաշնային շրջանի սահմաններում ձեռնարկվող միջոցառումները «դրվագ» են Ռուսաստանի՝ ավելի լայն, բազմաքայլ տարածաշրջանային քաղաքականության համադրույթում (парадигма): Դեռ 2004թ. սեպտեմբերի 11-ին Վլ.Պուտինը ստորագրել էր համապատասխան որոշումներ, ըստ որոնց Հյուսիսկովկասյան զինվորական շրջանի հիմքի վրա ստեղծվում է երկու լեռնային (հրաձգային) բրիգադ Դաղստանի (Բոտլիխ) և Կառաչայևո-Չերկեսիայի (Զելենչուգսկայա) տարածքում: Դրանց առաջնահերթ խնդիրների շարքում էր «անօրինական հանցախմբերի ահաբեկչական գործունեության կասեցումը հարակից տարածքներում: Ուշագրավ մի փաստ. վերոհիշյալ երկու բրիգադների կազմավորման համար ՌԴ դաշնային բյուջեից հսկայական ֆինանսական միջոցներ են դուրս գրվել (12,8 մլրդ. ռուբլի, յուրաքանչյուր զինծառայողի հանդերձանքի և սպառազինման համար՝ 150 հազ. ռուբլի): Ընդ որում հայտարարվեց, որ Վրաստանից դուրս բերվող ռազմակայանների տեխնիկայի և սպառազինության հիմնական մասը տրամադրվելու է կազմավորվող այդ բրիգադներին:

Ընդհանուր առմամբ վերջին շրջանում ռուսաստանյան ռազմական և պաշտպանական քաղաքականության նեոռեալիզմը կովկասյան տարածաշրջանում իր մեջ կրում է ինչպես հակասական տարրեր, այնպես էլ արդեն Վլ.Պուտինի վարչակազմի օրոք նկատվող գերակայությունների հարատևություն: Անդրկովկասում ռուսաստանյան սկզբունքային շահերի նոր ըմբռնումները, որոնք առայժմ միասնական պաշտոնական հայեցակարգի ձև չեն ընդունել, մի կողմից ենթադրում են status quo-ի պահպանման անհրաժեշտությունը և տարածաշրջանում անշրջելի փոփոխությունների զսպումը, իսկ մյուս կողմից պահանջում են ՌԴ արտաքին քաղաքական ռեսուրսի էական մեծացմանը համարժեք առարկայական տեղաշարժերի ապահովում:

Ակնհայտ է, որ նախկինում տիրապետող ռազմավարական համադրույթն այժմ արդեն կիրառական չէ տարածաշրջանում ընթացող գործընթացների համատեքստում: 1990-ական թթ. բնորոշ ռուսաստանյան ազդեցության պահպանման և ամրապնդման կարծր սխեման, որի հիմքում ընկած էր ռազմավարական «եռյակի» (ռազմական ներկայություն, ողջ պարագծով սահմանների համատեղ պաշտպանություն, տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում բացառիկ դիրքերի պահպանում) գործնական քաղաքականության առաջնահերթ գործառույթի նշանակությունը, այժմ նվազելու միտում ունի: Համեմատաբար կոշտ՝ 1990-ական թթ. կեսերին ձևավորված ուժագծերի «կոնսերվացմանը» միտված ուղեգծի փոխակերպման առաջին նախանշաններն ի հայտ եկան Վլ.Պուտինի նախագահության դեռ սկզբնական շրջանում:

ՌԴ անդրկովկասյան քաղաքականության համատեքստում երկու կարևոր գաղափարական և հայեցակարգային տեղաշարժեր գրանցվեցին, որոնք էապես ներազդեցին և այժմ էլ շարունակում են ազդել ողջ հետխորհրդային տարածքում ռազմավարական դասավորվածության պարամետրերի վրա:

Նախ՝ Մոսկվան առարկայական քայլեր ձեռնարկեց Արևմուտքի հետ «մրցակցության բարդույթից» ձերբազատվելու համար: Դեռ 2000թ. ապրիլին ՌԴ Անվտանգության խորհրդի նիստում, որտեղ քննարկվում էին կասպյան տարածաշրջանում ռուսաստանյան քաղաքականության հեռանկարներն ու հիմնախնդիրները, Վլ.Պուտինը բավականաչափ հստակ ակնարկեց, որ Ռուսաստանն ընդունում է մրցապայքարի «համընդհանուր կանոնները»՝ առանց որևէ «բացառիկ» կամ

«առանձնահատուկ» իրավունքներին հղում անելու («դա մրցակցության խնդիր է, և մենք պետք է մրցունակ լինենք»): Հատկանշական փաստ է՝ 2005թ. սեպտեմբերին ՌԴ արտաքին գործերի նախարար Ս.Լավրովն, ըստ էության, պաշտոնապես ընդունեց «հետխորհրդային տարածքում ԱՄՆ-ի օրինական շահերի գոյության» իրողությունը: Ճիշտ է, նաև ընդգծվեց, որ այդ շահերը սփռվում են երկու բավականաչափ առարկայական ոլորտների վրա՝ հակահաբեկչական համատեղ գործունեությանն ու տարածաշրջանի էներգակիրների հասանելիության խնդիրներին: Ինչ վերաբերում էր Համագործակցության երկրներում ծավալվելիք ժողովրդավարացման գործընթացների արդյունավետությանն ու հաջողությանը, ապա ՌԴ ԱԳՆ-ը հստակորեն շեշտեց Ռուսաստանի պարտադիր մասնակցության անհրաժեշտության հանգամանքը՝ իբրև որևէ լուրջ առաջընթացի անխուսափելի նախադրյալ:

Երկրորդ՝ ռուսաստանյան ղեկավար էլիտան փաստորեն հրաժարվեց 1990-ական թթ. Հարավային Կովկասում վարվող քաղաքականությանը բնորոշ «հակասական համադրույթից», որը թեև որոշակի առավելություններ էր տալիս Մոսկվային հետխորհրդային ապասերտաճման նախնական փուլում, սակայն երկարաժամկետ (ռազմավարական) հեռանկարում ակնհայտորեն չէր կարող ապահովել ՌԴ խորքային շահերը:

Անարխիկ աշխարհի օրենքներն ընդունելով հանդերձ՝ ռուսաստանյան ռազմավարների կողմից առաջ քաշվող ՌԴ «հատուկ ազդեցության» գոտու մասին թեզը և դրան համահունչ գործելակերպը չէին կարող դիմանալ արևմտյան համակարգային մրցակցության կանոններին և ուժագծերին: Մինչդեռ Ռուսաստանի կողմից վերջին շրջանում որդեգրված նոր modus operandi-ն հարավկովկասյան տարածաշրջանի պարագայում կարևորվում է նախևառաջ այն առումով, որ հստակեցում է մտցնում տարածաշրջանային գործընթացներում որոշիչ ազդեցություն ունեցող դերակատարների հաշվարկներում:

Ըստ էության, ռուսաստանյան քաղաքականության որոշակիացումը (դաշնային՝ Հյուսիսային Կովկաս, արտաքին քաղաքական՝ Հարավային Կովկաս) շատ առումներով համահունչ է անգլո-սաքսոնյան վաղեմի ռազմավարական կանխադրույթին՝ «ճշգրտել» ՌԴ իրական շահերի սահմանները տարածաշրջանում:

Դեռ 1997թ. տարեսկզբին հաստատագրելով հարավկովկասյան տարածաշրջանն իբրև ԱՄՆ-ի համար «կենսական կարևորության գոտի»՝ կովկասյան երկրներում ընթացող բարեփոխման գործընթացները դասվեցին ամերիկյան ռազմավարական գերակայությունների շարքին:

Սկզբնական շրջանում Վաշինգթոնի կողմից բարեփոխումների ուղեգծի սատարումը ներառում էր չորս հարթություն. ժողովրդավարության ամրապնդում ու շուկայական տնտեսության կառուցում, ճգնաժամային իրավիճակների կարգավորում, էներգետիկայի զարգացում և Արևելք-Արևմուտք տրանսպորտային միջանցքի ստեղծում, համագործակցություն անվտանգության ապահովման ոլորտում:

2001թ. ի վեր տարածաշրջանային համագործակցության ամերիկյան գերակայություններին հավելվեցին համատեղ պայքարն ահաբեկչության դեմ, ինչպես նաև տարածաշրջանի երկրների քաղաքական-դիվանագիտական համակցումն ԱՄՆ-ի ռազմավարությանը մի շարք օրախնդիր հիմնահարցերի լուծման համադրույթում, ինչը միտված էր, այսպես կոչված, Մեծ Մերձավոր Արևելքի վերակառուցման նպատակի իրագործմանը:

Ակնհայտ է, որ ավանդական նորմատիվ-արժեքային բնույթի կողմնորոշումներից բացի, այդ որոշումների հետևում թաքնված են շատ ավելի լուրջ ռազմավարական կարգի նկատառումներ. ռուսաստանյան ազդեցության զսպման հետ մեկտեղ փորձել վերաձևավորել Եվրասիայի կենտրոնում ստեղծվող նոր աշխարհաքաղաքական կոնֆիգուրացիան հարաբերական ավելի հոմոգեն միավորի: Ընդ որում, Վաշինգթոնի ձգտումը Հարավային Կովկասում կերտել պետականակենտրոն փոխգործակցության մոդել շատ առումներով համահունչ է աշխարհակարգի ռեալիստական ընկալման վաղեմի դրույթներին և հստակորեն տեղավորվում է անգլո-սաքսոնական ռազմավարական մտածողության համակարգի մեջ:

Այսպես օրինակ, դեռ 1960-ական թթ., երբ ամերիկյան ռազմաքաղաքական վերնախավը վերջնականապես հակվեց վիետնամական հիմնախնդրի ռազմական հանգուցալուծման տարբերակի օգտին, տիրապետող էին համանման շարժառիթներ. Հարավարևելյան Ասիայում ստեղծել համեմատաբար վերահսկելի պետական միավորներից կազմված աշխարհաքաղաքական մի համադրույթ, որը, նվազագույնը, չեզոք վերաբերմունք կունենար ԱՄՆ-ի նկատմամբ :

Այս համատեքստում համեմատաբար վերջերս ռուսաստանյան քաղաքականության մեջ հայտնված «սոցիալական ԱՊՀ-ի» շրջանակներում գործընթացների արագացման միտումը, ինչպես նաև ՌԴ նախագահի կողմից հայտարարված (ՌԴ նախագահի ուղերձը Դաշնային ժողովին 2005թ.) նպատակը՝ հասնել «հետխորհրդային տարածաշրջանում ընթացող սոցիալ-քաղաքական ու տնտեսական գործընթացների սինխրոնացմանը», անորոշության տարր են մտցնում և որոշակիորեն հակասում են այս տարածաշրջանի ապագայի վերաբերյալ ԱՄՆ-ի ունեցած պատկերացումներին:

Հատկանշական է, որ դեռ 1990-ական թթ. ձևակերպված կովկասյան քաղաքականության «աշխատանքային սկզբունքներից» մեկը, համաձայն որի Հյուսիսային և Հարավային Կովկասը հանդիսանում են մեկ միասնական անվտանգության համակարգ (Կիսլովոդսկ, 1996թ.), ներկայում առանձնապես չի շեշտադրվում: Ավելին, ամենևին էլ չի բացառվում, որ Հյուսիսային Կովկասում «փորձաքննություն» անցած ռուսաստանյան որոշ modus-ներ կիրառվեն նաև Անդրկովկասում:

Հատկանշական է նաև, որ 2006թ. հունիսի 15-ին Ս.Պետերբուրգում Վլ.Պուտինի և Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլու հանդիպման ժամանակ ՌԴ նախագահը պարզորոշ ակնարկեց վրաց-աբխազական և վրաց-հարավօսական հակամարտությունների կարգավորման հնարավորությունը «չեչենական տարբերակով»՝ համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

Այս գործելակերպն առավել ուշագրավ է ՌԴ դաշնային սուբյեկտների միավորման և վարչատարածքային խոշորացման և դաշնային կենտրոնի կողմից այդ գործընթացի մեջ հսկայական քաղաքական ռեսուրսների ներդրման համատեքստում: Մի շարք վերլուծաբաններ չեն բացառում, որ նման զարգացումների բովում Վրաստանի նախկին ինքնավարությունները հայտնվեն որևէ քվազի-դաշնային համադրույթում: Այս առումով, ըստ երևույթին, պատահական չէր նաև Աբխազիայի նախագահ Ս.Բագապշի՝ 2006թ. մայիսի 4-ի հայտարարությունը մինչև տարեվերջ այդ հանրապետության՝ ԱՊՀ-ին միանալու հարցը լուծելու մասին, ինչպես նաև հունիսի 13-ին Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի ղեկավարների հանդիպմանն ընդունված որոշումը՝ համատեղ խաղաղապահ ուժեր ստեղծելու վերաբերյալ:

Դժվար է միանշանակ կանխատեսել, թե Ռուսաստանը վերջնականապես հակվել է Աբխազիան և Հարավային Օսիան ՌԴ-ին միավորելու գաղափարին: Սակայն մի բան ակնհայտ է. Մոսկվան շուտով կարող է բավականաչափ լուրջ տնտեսական, քաղաքական, ռազմական և, միգուցե նաև, միջազգային-իրավական լծակներ ձեռք բերել՝ նվազագույնը լուրջ ներպետական ճգնաժամի հասցնել Վրաստանը: Անշուշտ, նման սցենարն առայժմ «պահուստային» է, բայց վերջերս ՌԴ ԱԳՆ-ի անունից հնչեցված այն հայտարարությունը, թե Վրաստանի տարածքային ամբողջականությունն ավելի շուտ ենթադրյալ կատեգորիա է, քան իրողություն, իսկ մյուս կողմից նույն՝ հունիսի 15-ի հանդիպմանը Վլ.Պուտինի հիշեցումը Վրաստանի արտաքին առևտրում և տնտեսության մեջ Ռուսաստանի ծանրակշիռ ներկայության մասին փաստում է, որ Մոսկվան ավելի լայն տարածաշրջանային օրակարգ ունի:

Հետխորհրդային տարածաշրջանը գնալով կորցնում է իր երբեմնի աշխարհաքաղաքական (ռուսաստանակենտրոն) միասնականությունը, մինչդեռ Ռուսաստանն աստիճանաբար ձգտում է որդեգրել համակարգված և բազմապլան գործելակերպ, այդ թվում՝ Հարավային Կովկասում: Այս տեսանկյունից ամենևին էլ վերացական չէ ռուսաստանյան քաղաքականության դիտարկումը միջազգային հարաբերությունների հետևյալ տեսական չափումներում.

1. *Նեոֆունկցիոնալիզմ:* Միջազգային հարաբերությունների տեսության այս ուղղության հիմնական թեզն այն է, որ պետության արտաքին շահերն ու նրա պետական ինքնությունը համահավասար և համահունչ են միմյանց, ինչն այլ հավասար պայմաններում ինտեգրման առավել արդյունավետ և բարենպաստ նախադրյալներ կարող է ստեղծել: Ռուսաստանյան ղեկավարության կողմից վերջերս ընդունված հայեցակարգային մոտեցումները հիշեցնում են հենց այս մոտեցման սկզբունքները:

2005թ. Դաշնային ժողովին հասցեագրված ուղերձում ՌԴ նախագահը բացահայտորեն մատնանշեց, որ Ռուսաստանի երկարաժամկետ նպատակն է հասնել այդ երկրի և ԱՊՀ մյուս անդամ պետությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների սինխրոնացմանը: 2006թ. Մոսկվան զգալիորեն ակտիվացրել է իր ջանքերը հումանիտար միասնական տարածք ստեղծելու ուղղությամբ՝ դիտարկելով այն իբրև կարևոր մրցակցային խաղաքարտ գլոբալացման դարաշրջանում:

Հատկանշական է, որ հումանիտար ներգրավման և տեղի քաղաքական էլիտաների շրջանում Ռուսաստանի դրական իմիջի ստեղծման ջանքերը զուգադրվում են ակտիվ տնտեսական, որոշ առումով՝ սոցիալ-տնտեսական ներգրավման ռազմավարությամբ, ինչն առավել ակնառու է Հայաստանի և Վրաստանի դեպքում: Կարելի է ենթադրել, որ ռեսուրսային անհամաչափությամբ պայմանավորված՝ այս «ասիմետրիկ» նեոֆունկցիոնալիզմը, որի հեռանկարային նպատակներից մեկն է ձերբազատվել «ծախսատար» արտաքին քաղաքականության ռուսաստանյան ավանդական մոդուսից, կարող է հանգեցնել Անդրկովկասի «լատինամերիկացմանը»: Սակայն խնդիրն այն է, որ չնայած Հարավային Կովկասի երկրներում և Ռուսաստանում վերջին տարիների ընթացքում գրանցված տնտեսական աճին և կապիտալի աշխուժացմանը, մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական մրցակցության հրամայականներն առայժմ ոչ ոք չի վերացրել: Այս առումով, ՌԴ-ի կողմից Հարավային Կովկասի «լատինամերիկացմանը» միտված գործողություններն, անշուշտ, հանդիպում են կազմակերպված արտաքին հակազդեցության:

2. *Նեոռեալիզմը և ուժային հավասարակշռության տեսությունը:* Դեռ 2004թ. Ստենֆորդի համալսարանը հրապարակել էր մի հետաքրքրական աշխատություն, որտեղ անվանի գիտնականները փորձ էին արել հասկանալ երկրագնդի տարբեր մակրոտարածաշրջաններում ուժային հավասարակշռության երևույթի տարբեր ասպեկտներն ու օրինաչափությունները: Ըստ նրանց եզրակացությունների՝ անցած տարիների ընթացքում նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ոչ մի որակական լուրջ փոփոխություն տեղի չի ունեցել ուժերի հարաբերակցության մեջ. նախկին միութենական հանրապետությունների համեմատ Ռուսաստանին բաժին է ընկնում ռազմական ծախսերի մոտ 93%-ը, ՀՆԱ-ի՝ մոտ 90%-ը, զինված ուժերի՝ 58%-ը: Ակնհայտ է, որ նման ռազմավարական համատեքստում արտաքին կոշտ ուժային հավասարակշռմանը դիմելն ընդդեմ ՌԴ-ի ոչ միայն անարդյունավետ կարող է լինել, այլև վտանգավոր: Սակայն, դրա հետ մեկտեղ, Ռուսաստանի ներքին հավասարակշռման և զսպման տարբերակն ամենևին էլ անիրականանալի չէ՝ հաշվի առնելով այն անկայուն և ոչ միանշանակ իրավիճակը, որ բնորոշ էր մինչ այժմ ներռուսաստանյան զարգացումներին: Եվ այս համատեքստում, վերադառնալով ներկայի հարաբերական կայունության պայմաններում ՀԶՇ-ի հզորացման հարցին,

«թիկունքների» ամրապնդման միտումը միանգամայն հասկանալի է թվում: Ի վերջո, դեռ 2005թ. աշնանը Վրաստանում ԱՄՆ-ի դեպան Ջ. Տաֆտը, ակնարկելով տարածաշրջանում անշրջելի գործընթացների հավանականությունը (Վրաստանի մուտքը ՆԱՏՕ և ամերիկյան ռազմական հանգրվանների տեղաբաշխումն այդ հանրապետության տարածքում), Ռուսաստանին օժանդակություն էր առաջարկում «բոլոր այն խնդիրների լուծման գործում, որոնց նա բախվում է ողջ կովկասյան տարածաշրջանում»:

Սիրիան մերձավորարևելյան հաղթականության գործոն

Այսօր Մերձավոր Արևելքը գտնվում է որակապես նոր փուլում՝ փոխակերպվել է միջազգային իրավիճակը, ներտարածաշրջանային իրադրությունը: Տարածաշրջանում նկատվում են ուժային վերադասավորման նորանոր միտումներ և հնարավորություններ:

Մերձավորարևելյան զարգացումների վեկտորներն անմիջականորեն կապված են տարածաշրջանային գործընթացում ներգրավված արտաքին և ներքին ազդեցիկ ուժերի հնարավոր համագործակցությունից: Տարածաշրջանի վրա ազդեցություն ունեցող արտաքին ուժերն են ԱՄՆ, Ռուսաստանը, Եվրամիությունը[42] և որոշակիորեն նաև ՄԱԿ-ը[43]:

Ներքին խաղացողների շրջանում, ի դեմս Սիրիայի, Թուրքիայի և Իրանի նկատվում է նոր ուժային կենտրոնի(ների) ստեղծման հավանականություն: Այլ է Իսրայելի հարցը, որի պարագայում առկա են որոշակի առանձնահատկություններ: Իր աշխարհագրական դիրքով Իսրայելը հանդիսանում է ներքին անկախ ուժային կենտրոն, իսկ հրեական լոբբիստական ինստիտուտների շնորհիվ՝ այն կարող է համարվել արտաքին ազդեցիկ ուժ: Իսրայելը դեռևս կարողանում է ապահովել իր գերակայությունը հարևան պետությունների նկատմամբ և ամեն կերպ ցանկանում է պահպանել status quo-ն: Վերջինի վառ վկայությունն է սեպտեմբերի սկզբին իսրայելական օդուժի կողմից սիրիական ռազմական մի օբյեկտի (ենթադրաբար միջուկային ռեակտորի) ռմբակոծումը:

Պետք է ընդունել, որ այսօր արդեն Մերձավոր Արևելքի ուժային քարտեզի փոփոխության ականատեսներ ենք, ինչը նշված տարածաշրջանում ներքին և արտաքին ուժերի կողմից իրականացվող ասիմետրիկ ռազմավարության/քաղաքականության արդյունք է: Ասիմետրիկ ռազմավարություն ասելով՝ հասկացվում է զաղափարապես տարբեր հիմքեր ունեցող կառավարման մոդելների և կառույցների կարճաժամկետ կամ

[42] Եվրամիության պարագայում պետք է նշել, որ նրա կազմի մեջ մտնող առանձին պետություններ, ինչպիսին են Ֆրանսիան և Գերմանիան, տարածաշրջանի երկրների (մասնավորապես Սիրիայի) նկատմամբ հաջողությամբ իրականացնում են հավակնոտ և ինքնուրույն քաղաքականություն:

[43] ՄԱԿ-ի ազդեցությունն արտահայտվում է տարբեր բանաձևերի ընդունմամբ և խաղաղապահների առկայությամբ:

երկարաժամկետ համագործակցությունն արտաքին վտանգը կանխելու նպատակով, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու համար ավելի ազդեցիկ խաղացողների կողմից տեղական և միջազգային համապատասխան տարատեսակ խմբերին և կազմակերպություններին տարածաշրջանային գործընթացների մեջ ներգրավելու հանգամանքը: Համագործակցության նման կաղապարային օրինակներ են Հիզբուլլահ-Սիրիա-Իրան, Իրան-Սիրիա, Սիրիա-Թուրքիա, Թուրքիա-Իրան ռազմավարական և տնտեսական համագործակցության շղթաները:

Արտատարածաշրջանային և ներտարածաշրջանային ուժերի համար առավել կարևոր և գերակա խնդիր է դառնում «Իրաքյան հարցը»: Հետազոտողների որոշակի հատված իրաքյան հիմնահարցը սահմանում է որպես «Նոր արևելյան հարց», որի բաղկացուցիչ մասն է կազմում «Քրդական հարցը»: Դժվար չէ նկատել այս հետազոտողների՝ ժամանակին օսմանյան կայսրության տարածքների ապագան կանխորոշած «Արևելյան հարցի» և դրա անբաժանելի մաս կազմող «Հայկական հարցի» միջև զուգահեռներ անցկացնելու ցանկությունները: Սակայն պետք է նշել, որ այսօր պատմաքաղաքական իրավիճակն սկզբունքորեն տարբերվում է 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի իրավիճակից: Այս համեմատության նշանակետն ավելի խորն է, քան կարող է թվալ: Իրականում գործ ունենք «Կորցված կայսրության» միֆոլոգեմի հետ, որի բարդույթից Թուրքիան չի կարողանում կամ էլ չի ցանկանում ազատվել:

Ներկա իրավիճակում աննախադեպ լուծումների հնարավորությունը և հավանականությունը գնալով մեծանում է: Այդ լուծումների իրագործման հավանականությունը մեծ է նաև այն պատճառով, որ դուրս են գալիս ԱՄՆ-Իսրայել ռազմավարական համադրույթի շրջանակից: Մասնավորապես, իրաքյան հիմնահարցի լուծումն առաջարկվում է կատարել ֆեդերալիզմի շրջանակներում, ինչը նշանակում է, որ Իրաքի տարածքում պետք է ստեղծվեն սուննիական, շիական և քրդական պետականակենտրոն դաշնային սուբյեկտներ:

Վերջին հանգամանքն ստիպում է վերոնշյալ երեք պետություններին՝ Թուրքիային, Սիրիա և Իրանին, կոնսոլիդացվել և այդ հարցում փորձել վարել միասնական քաղաքականություն: Տարբեր իրարամերժ աղբյուրների համադրությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ այսօր Թուրքիայում ապրում է առավել քան 20

մլն. քուրդ, ինչն ավելի է քան Իրաքի (5-6 մլն.), Սիրիայի (մոտ 2 մլն.) և Իրանի (ընդհանուր բնակչության մոտ 7% կամ 4.5-5 մլն) քրդերի քանակը միասին վերցված: Այս տվյալներից պարզ է, որ նշված պետությունների շահերին հակասում է իրաքյան անկախ Քուրդիստանի առկայությունը, քանի որ այն իր հերթին կարող է խթան հանդիսանալ Սիրիայի, Իրանի և Թուրքիայի քրդական փոքրամասնությանը մոբիլիզացնելու հարցում:

Պետք է ենթադրել, որ անկախ իրաքյան Քուրդիստանի վտանգը Թուրքիայի, Սիրիայի և Իրանի համախմբման միակ նախապայմանը չէ, սակայն հարաբերությունների սերտացումը տեղի է ունենում հենց այս վտանգը կանխելու շուրջ:

Հետագա զարգացումները հասկանալու և կանխատեսելու համար կարևոր է հստակ պատկերացում կազմել Սիրիայի ներքին զարգացումների վերաբերյալ:

Ըստ էության, նոր կայացող Մերձավորարևելյան տրիումվիրատի թույլ օղակը, այնուամենայնիվ, մնում է Սիրիան, իսկ որոշակի օբյեկտիվ տեղեկատվության պակասն ավելի է սրում հետաքրքրությունն առարկայի հանդեպ: Հարցն այն է, թե Սիրիայում ներքին զարգացումների ինչ վեկտորներ կան, և դրանք ինչպես կարող են ազդել տարածաշրջանային գործընթացների վրա:

Ընդհանուր առմամբ, այն, ինչ այսօր տեղի է ունենում Մերձավոր Արևելքում[44], թույլ է տալիս ենթադրել, որ գործ ունենք տարբեր ինքնությունների բախման հետ: Կարելի է տարբերակել ինքնության երկու հիմնական մոդել, որից մեկում դոմինանտ է իսլամական/իսլամիստական տարրը, իսկ մյուսում՝ ազգայնականը (արաբական):

Մերձավոր Արևելքում նոր ցնցումների հավանականությունը մեծ է, և ըստ ամենայնի, դրանք ընթանալու են արաբական ազգայնականության և իսլամիզմի միջև՝ գերիշխանություն հաստատելու նպատակով: Հասկանալու համար Սիրիայի ներքաշվածության աստիճանն այս գործընթացների մեջ, նախ պետք է ուսումնասիրել սիրիական ինքնության տարրերը և սիրիական հասարակության կառուցվածքը:

[44] Իսլամիստական գործոնը կարևոր դեր է կատարում Իրաքի կառավարման համատեքստում, Պաղեստինյան ճակատում ՀԱՄԱՍ-ՖԱԹԱՀ պայքարում հաջողությունները դեռ գրանցվում են առաջինի օգտին, իսկ Լիբանանում Հիզբուլլահը դաշտի մյուս խաղացողների նկատմամբ հավասարազոր ուժեր ձեռք բերելու հավակնություններ և հնարավորություններ ունի :

Սիրիայի Արաբական Հանրապետության անվան մեջ արաբականությունն ավելի շատ պաշտոնական իմաստ ունի. իրականում Սիրիայի հասարակությունը կազմված է տարատեսակ կրոնական և էթնիկ խմբերից[45]:

Սիրիան կազմում է Լեվանտի կամ «Մեծ Սիրիայի» հիմնական բաղկացուցիչ մասը: Ինչպես նշվեց, այս տարածքն աչքի է ընկնում իր էթնիկ և մշակութային բազմազանությամբ և զերծ չէ նաև սոցիալական բևեռացումից:

Այսպես, ոչ բոլոր սիրիացիներն են արաբ: Սիրիայում են ապրում քրդերի, ասորիների, հայերի և չերքեզների էթնիկ փոքրամասնություններ: Նմանապես, ոչ բոլոր սիրիացիներն են մուսուլման: Նրանց մի մասը քրիստոնյա է, կան նաև եզդիներ և փոքրաթիվ քանակությամբ հրեաներ: Ինչ վերաբերում է մուսուլմաններին, ապա ոչ բոլորն են հանդիսանում միևնույն ուղղության հետևորդներ: Այսօր Սիրիայում ներկայացված են իսլամի առնվազն հինգ ուղղություններ իրենց համապատասխան համայնքներով: Դրանք են սուննիական, շիական, ալավիական, դրուզական և իսմայիլական համայնքները[46]: Պետք է նաև ընդունել, որ այս համայնքների ներկայացուցիչներից ոչ բոլորն են անկեղծ հավատացյալներ (մու'մինուն): Բացի այդ, Սիրիայում առկա է անհավատների որոշակի քանակ, որոնց թիվն անհնարին է հաշվել: Նրանց մի մասի համար անընդունելի է կրոնի գաղափարն ինքնին:

Մյուս կողմից, առկա է մեկ խնդիր ևս՝ ոչ բոլոր հավատացյալներն են (մուսլիմուն) կատարում կրոնական պատվիրանները: Նրանցից շատերը դրանք ընդհանրապես չեն կատարում, իսկ մյուսները՝ մասամբ: Բացի վերը նշված տարրերից, սիրիական հասարակության մեջ կան նաև պետության աշխարհիկության կողմնակիցներ, որոնք հավատում են պետության և կրոնի տարանջատմանը:

Ինքնաբերաբար հարց է առաջանում, արդյո՞ք սիրիական հասարակության տարատեսակ և բազմաբնույթ այս զանգվածների ներկայացուցիչներից բոլորն ունեն սիրիական քաղաքացիություն: Իրականությունն այն է, որ այսօր Սիրիայում ապրող

[45] Այս կտրվածքով Սիրիան տարբերվում է այնպիսի արաբական երկրներից, ինչպիսին են Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Արաբական Միացյալ Էմիրությունները, Եմենը կամ Լիբիան:

[46] Ալավիները հայտնի են նաև ան-նուսայրիյա անվամբ: Այս ուղղությունը շիական իսլամում ձևավորվել է 10-րդ դարում: Նրանց ուսմունքը հիմնված է իսմայիլականության վրա՝ համեմված գնոստիկ քրիստոնեության և աստրալային կուռքերի որոշակի տարրերով: Նույն շիական միջավայրում է 10-րդ դարում Ֆաթիմյան Եգիպտոսում ձևավորվել դրուզական ուղղությունը: Շիական իսլամում ձևավորված այս ուղղություններն իրականում լուրջ դավանաբանական հակասություններ ունեն իրար հետ:

քրդերի ավելի քան քառորդ միլիոնը[47] չունեն սիրիական քաղաքացիություն, ինչը ներքին քաղաքական ծրագրերի իրականացման արդյունք է:

Կարելի է ենթադրել, որ «սիրիական ինքնությունը» վերոնշյալ բոլոր համայնքների համար կարող է լինել միակ ընդհանուր հայտարարը, և, բնականաբար, նրանց միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման հիմնական ճանապարհն է սիրիական իրականության մեջ նրանց տեղի և դերի ճիշտ գնահատումը: Վերը նշվածից տրամաբանորեն ծագում է հաջորդ հարցը. ո՞րն է այսօր «սիրիական ինքնությունը»:

Պետք է ընդունել, որ այսօր սոցիոմշակութային իրավիճակը Սիրիայում տարբերվում է մի քանի տասնամյակ առաջ եղածից: Փորձագիտական միջավայրում տարածված կարծիքի համաձայն՝ այսօր Սիրիան ավելի կրոնականացված է, քան այն ժամանակ, երբ բաասականներն առաջին անգամ եկան իշխանության: Երկրորդ կետով նշվում է, որ Սիրիայի տարատեսակ կրոնական և էթնիկ համայնքներն այսօր ավելի են սերտաճել տարբեր տնտեսական կապերով: Միևնույն ժամանակ ներկայի Սիրիայում հասարակության սոցիալական բևեռացումը քաղաքականության մեջ էլ ավելի նշանակալի գործոն է դարձել: Խնդիրն այն է, որ Սիրիայի ղեկավարող վերնախավը որոշումներ ընդունելուց հաճախակի, կարելի է ասել գրեթե միշտ, անտեսում է այդ հանգամանքը:

Բավական է նշել, որ սիրիական ինքնությունը խճճված բաղկացուցիչներից կազմված մի համակարգ է, և անգամ այդ համակարգի մի տարրի անտեսումը կամ թերագնահատումը հղի է լուրջ խնդիրներով: Ցանկացած պետության կայունությունը (Սիրիան այս պարագայում բացառություն չէ) ուղիղ համեմատական է կառավարող համակարգի կողմից հասարակական տեղաշարժերի ճիշտ գնահատմանը և այդ արդյունքների կիրառմանը կառավարման գործում:

Արտատարածաշրջանային ոչ իսլամական և իսլամական ուժային կենտրոններից պարբերաբար շրջանառության մեջ են դրվում Սիրիայի իսլամական ինքնության կամ այդ ինքնության համար իսլամի առանցքային դերի վերաբերյալ վերլուծություններ, ինչպես նաև նախաձեռնվում են այդ հարցի շուրջ քննարկումներ: Այս դիսկուրսի

[47] Քրդական աղբյուրների համաձայն՝ այս թիվը տատանվում է 850 հազ. - 1մլն. միջև, որն, ըստ էության, ուռճացված է:

անբաժանելի մաս են կազմում երկրի ներսում գոյություն ունեցող իսլամիստական[48] և որոշ իսլամական կենտրոնները: Նրանց գործունեության հիմնական նպատակն է ցույց տալ և ապացուցել սիրիական ինքնության իսլամական տարրի գերակայությունն այլ բաղկացուցիչների հանդեպ:

Սիրիական հասարակության կառուցվածքը պատկերելու համար պետք է դիտարկել այն հորիզոնական և ուղղահայաց հարթությունների մեջ:

Հորիզոնական հարթության մեջ սիրիական հասարակությունը տարանջատվում է ըստ կրոնական և էթնիկ բաղադրատարրի: Սիրիայում այսօր կան հետևյալ հիմնական կրոնական համայնքները՝ սուննիական, ալավիական, դրուզական, իսմայիլական և քրիստոնեական[49], ինչպես նաև էթնիկ փոքրամասնություններ՝ քրդեր, չերքեզներ, հայեր, ասորիներ և այլն:

Կրոնական համայնքների այս խճանկարում մեծամասնություն են կազմում մուսուլման սուննիները, որոնք կազմում են Սիրիայի ընդհանուր բնակչության մոտ 74%: Հաջորդն ալավիներն են՝ մոտ 12%: Քրիստոնյաները մոտ 10% են, իսկ դրուզներն ու իսմայիլիները՝ համապատասխանաբար 3% և 1.5%[50]:

Ուղղահայաց հարթության մեջ՝ սիրիական հասարակությունը մերձավորարևելյան շատ երկրների օրինակով դարեր շարունակ բաժանված է եղել քաղաքական և կացութաձևային կազմակերպման երեք տարբեր համակարգերի՝ պայմանավորված քաղաքով, գյուղով և ցեղով: Չնայած այն հանգամանքին, որ այս համակարգերը շատ փոխկապակցված են միմյանց հետ, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը հաղիսանում է արաբական մշակույթի ուրույն տեսակի կրողը:

Մերձավոր Արևելքում քաղաքային մշակույթն ունի շատ հին պատմություն, իսկ քաղաքային կյանքը եղել է տարածաշրջանի հասարակական կյանքի անբաժանելի

[48] Սիրիայի պարագայում իսլամիստական շրջանները հիմնականում ընդհատակյա գործունեություն են ծավալում: Բավական է նշել այն հանգամանքը, որ մինչև այսօր գործում է 1980-ականների սկզբի հայտնի դեպքերից հետո ընդունված № 49 օրենքը, որով մահապատիժ է սահմանվում բոլոր նրանց հանդեպ, ովքեր կանդամագրվեն «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը:

[49] Քրիստոնեական փոքրամասնությունն իր հերթին միատարր չէ: Այն հիմնականում ներկայացված է ուղղափառ, կաթոլիկ և հայ առաքելական եկեղեցիներով:

[50] ԱՄՆ Պետքարտուղարության կողմից հրապարակված տվյալներ:

մասը: Հասարակական կյանքի կազմակերպման գործում քաղաքաբնակների գերակայող դերը հայտնի է եղել հասարակության բոլոր հատվածներին:

Չնայած 20-րդ դարի կեսերին ազգային պետությունների առաջացմամբ պայմանավորված անդառնալի փոփոխություններին, որոնց հետևանքով միևնույն ցեղի անդամները հայտնվեցին սահմանների տարբեր կողմերում՝ ցեղային համայնքի ներկայացուցիչները՝ բեդվինները, շարունակում են հասարակության կազմակերպման գործում կարևոր և նշանակալի դերակատարություն ունենալ:

Հաջորդ խումբը գյուղաբնակներն են կամ ֆելահները, որոնք միջին օղակ են կազմում քաղաքաբնակների և բեդվինների միջև:

Սիրիական հասարակության այս երեք հատվածների ներկայացուցիչների միջև առկա են ցայտուն սոցիալական տարբերություններ, որոնք արտահայտվում են հագուստի, սննդի, տների ինտերիերների, խոսակցական բարբառների և սովորությունների հեշտությամբ նշմարելի զանազանության մեջ: Պետք է նշել, որ քաղաքաբնակների, գյուղաբնակների և բեդվինների միջև ամուսնությունները սովորաբար անընդունելի են համարվում:

Չնայած իրենց սոցիալական տարբերություններին՝ այս խմբերն իրար հետ կապված են ապրանքների փոխանակման և ծառայությունների մատուցման գործնական կապերով: Անհրաժեշտ է նաև նշել, որ ուրբանիզացման միտումները թեև գերակա են սիրիական հասարակության մեջ, սակայն ավանդական հանդիսացող տարբերությունները հասարակական այս խմբերի միջև դեռ կարևոր դեր են կատարում հասարակության կազմակերպման գործում:

Այս խմբերից առանձին հետաքրքրություն են ներկայացնում ցեղախմբերը, որոնք իրենց թվաքանակով և աշխարհագրական տարածվածությամբ անկյունաքարային դեր կարող են կատարել պետության կառավարման համակարգում: Սիրիայում այսօր ապրում են ամբողջությամբ քոչվոր ընդամենը ութ ցեղեր, որոնք տեղաշարժերի ժամանակ ստիպված են լինում երբեմն անտեսել միջպետական սահմանները:

Այդ ցեղերն են՝ Սիրիական անապատում ապրող Ռուվալա և Հասսանա ցեղերը, Հիմս կենտրոնական նահանգում (հիմնականում Պալմիրայի շրջակայքում) են հիմնավորվել Բութայնաթ և Աբադա ցեղերը, Ֆադան Վալադ, Ֆադան Խարսա ցեղերը

գտնվում են Եփրատամերձ անապատում, իսկ Շամար ազ–Զուր և Շամար ալ–Խարսա ցեղերը ապրում են Դեր ազ–Զուր նահանգում։

Վերը նշված բազմաբովանդակ և բազմաշերտ սիրիական հասարակության գոյության փաստն ինքնին ենթադրում է այս հասարակության առջև լուրջ մարտահրավերների առկայություն, մինչդեռ դրանց հաղթահարումը պահանջում է նոր մեխանիզմների մշակում։ Այդուհանդերձ հասարակության տարբեր շերտերի և խմբերի մշակութային տարբերությունները խնդիրներ չեն առաջացնում։ Դրանք առաջանում են միայն այն ժամանակ, երբ քաղաքական համատեքստը և կառավարման համակարգում սոցիալական ներկայացվածությունը չեն համապատասխանում իրականությանը։

Սիրիայի կառավարման համակարգը կարելի է բնութագրել որպես մեկ՝ ալավիական համայնքի ձեռքում կենտրոնացած բռնապետություն։ Ինչպես վերն արդեն նշվել էր, ալավիական համայնքը կազմում է բնակչության մոտ 12%-ը, որի վերնախավն իր ձեռքում է կենտրոնացրել ֆինանսատնտեսական, առևտրային, ռազմական և անվտանգության համակարգերի լծակները։ Սիրիայի կառավարման համակարգում երկրորդ օղակը Բաաս կուսակցության որոշում ընդունող մարմինն է, որը հայտնի է «Տարածքային ղեկավարություն» անվամբ։ Երրորդ կարևոր օղակը ռազմական և անվտանգության համակարգերի վերնախավի ներկայացուցիչներն են։ Սիրիայի կառավարման գործում մասնակցություն ունի նաև սուննիական բիզնես էլիտան[51]։ Ըստ էության, հիշյալ մասնակցությունը երկրի տնտեսական կյանքում հանդիսանում է այն գործիքը, որով ալավիական փոքրամասնությունը կարողանում է հավասարակշռել մեծամասնություն հանդիսացող սուննիական համայնքի հավակնությունները։ Պետք է նշել նաև, որ սուննիական համայնքն իր մեծամասնությամբ ներկայացված է վերը նշված ցեղերով, այսինքն՝ նրանք ակտիվ մասնակցություն չունեն քաղաքական գործընթացներին, եթե ակտիվություն չհամարենք ընտրություններին մասնակցելու պարտադրանքը։

[51] Սիրիայի առաջին տիկինը՝ Ասմա Բաշարը, սերում է Հոմսի ազդեցիկ սուննիական տոհմերից մեկից։

Առանձին ուշադրության է արժանի Սիրիայի էթնիկական քարտեզի ուսումնասիրությունը: Սիրիայի բնակչությունը երկրի տարածքում համաչափ չէ տեղաբաշխված: Սիրիայի կենտրոնական Հիմս, առ–Ռակկա և Դայր ազ–Զուր նահանգներում (մուհաֆազա) 1կմ² տարածքի վրա ապրում է 25-30 մարդ: Պատճառն, ըստ էության, այդ նահանգների բնակլիմայական պայմաններն են, որոնք մոտ են կիսաանապատային կամ տափաստանային կլիմային: Այս տարածքները հիմնականում բնակեցված են քոչվոր և կիսաքոչվոր ցեղերով: Բնակչության ստվարաքանակությամբ երկրորդ տեղում են աս–Սուվայդա և ալ–Հասաքա նահանգները՝ 1կմ² 30-55 մարդ, ի համեմատություն՝ Դառ'ա, Դիմաշկ և Համա նահանգներում 1կմ²-ին ընկնում է 55-100 մարդ: Ամենախիտը բնակեցված են Միջերկրականի ափին գտնվող ալ–Լազակիյա և Տարտուս, ինչպես նաև Իդլիբ և Հալաբ նահանգները, որտեղ բնակչության խտությունը կազմում է 100-300 մարդ/1կմ²: Ընդհանուր պատկերից դուրս են մնում մեգապոլիսներ Հալեպը (մոտ 3 մլն) և Դամակոսը (մոտ 5 մլն), ուր բնակչության թիվը 1կմ² համար հասնում է մինչև 10 հզ. մարդ:

Հետաքրքիր է նաև Սիրիայի էթնոկրոնական քարտեզը: Կարևոր նշանակություն ունեցող նահանգներում կարևոր ռազմավարական բնակավայրերը, ինչպիսին են դեպի Միջերկրական ծով ելք ապահովող ալ–Լազակիա և Տարտուս մուհաֆազաները, ինչպես նաև Հիմս և Համմա նահանգները, բնակեցված են ալավիներով և գտնվում են նրանց վերահսկողության տակ: Ալավիական որոշակի ներկայություն առկա է նաև Դիմաշկ նահանգում: Այս նահանգում ապրում է նաև ոչ մեծաքանակ դրուզական զանգված: Դրուզ բնակչության մեծամասնությունը տեղակայված է հարավային աս–Սուվայդա նահանգում:

Սիրիայի քարտեզի վրա քրդերը տեղաբաշխված են հիմնականում թուրք-սիրիական և իրաքասիրիական սահմանի երկայնքով՝ Հալաբի և ալ-Հասաքայի նահանգներում: Բնակչության հիմնական սուննիական հատվածը տեղաբաշխված է ողջ երկրով մեկ, որի գերակշռող մասը հանդիսանում են բեդվինները, որոնք բնակվում են երկրի կենտրոնական նահանգներում[52]:

[52] Տեղաբաշխվածությունն ավելի մանրամասն տե՛ս սույն հոդվածի վերևում:

Երկու մեգապոլիսներից պայթունավտանգ կենտրոն է հանդիսանում Հալեպը, քանի որ, ի հակադրություն Դամասկոսի, ուր ալավիական և սուննիական ներկայությունները կարողանում են հավասարակշռել միմյանց, այստեղ գերակա է սուննիական տարրը, որին հավասակշռելու նպատակով Հալեպը ժամանակին վերաբնակեցվել էր քրդական զգալի զանգվածով:

Իսմայիլական փոքրաթիվ համայնքը տեղաբաշխված է հիմնականում Սալամիյա բնակավայրում և նրա արվարձաններում:

* * *

Պատմականորեն ձևավորված խորքային տարաձայնություններն ալավիների, իսմայիլիների, դրուզների և սուննիների միջև, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումներն ու արտաքին ճնշումները, Սիրիայի կառավարող վերնախավի վրա որոշիչ են լինելու թե սիրիական ինքնության որ տարրն սկզբունքային դեր կստանձնի: Խոսքը երկու բաղկացուցիչ մասերի՝ իսլամականի, որն առանցքի դերում հանդես գալու պարագայում անխուսափելիորեն վերածվելու է իսլամիստականի՝ իր ծայրահեղ դրսևորումներով, և ազգայնականի (սիրիական ազգայնականություն) տարրերի մասին է:

Ինքնության իսլամական տարրի ուժեղացումը հղի է մի շարք հետևանքներով, որոնցից առնվազն երկուսը կանխատեսելի են.

1. Կարող է ավելի խորանալ Սիրիայի մեկուսացվածությունը միջազգային հանրության կողմից, քանի որ զարգացման այդ վեկտորը համահունչ չէ ժամանակակից գլոբալիզացվող աշխարհի պահանջներին:
2. Այդպիսի զարգացումն անմիջականորեն սպառնում է Սիրիայի ամբողջականությանը, քանի որ այնտեղ ներկայացված իսլամը միատարր չէ: Ի հավելումն, կրոնական համայնքների միջև ֆինանսական կապիտալի և տնտեսական լծակների անհամաչափ բաշխվածությունը՝ փոքրաթիվ ալավիական համայնքի կողմից զգալի ֆինանսատնտեսական ռեսուրսների տնօրինման պայմաններում, և արդեն նշված խորքային տարաձայնություններն (որոշ դեպքերում բացահայտ թշնամանքը) ակնհայտ են դարձնում միջհամայնքային բախումներից անխուսափելիությունը:

Ներքին քաղաքական դաշտում ուժային վերադասավորման կողմնակից, ըստ էության, պետք է լինի սուննիական մեծամասնությունը: Սակայն Սիրիայի էթնոկրոնական վերոնշյալ պատկերը վկայում է, որ երկրի անկայունության պարագայում սուննիները կարող են անջատված լինել ռազմավարական ճանապարհներից: Այս համատեքստում անկանխատեսելի է մնում Հալեպ քաղաքի և նրա արվարձանների սուննիական տարրի հարցը: Մի կողմից այս իրավիճակը օբյեկտիվորեն գնահատվում է սուննիական բիզնես և քաղաքական էլիտայի կողմից, իսկ մյուս կողմից նրանց սահմանափակ մասնակցությունը քաղաքական կյանքում գրեթե չեզոքացնում է այդ վտանգը. այնուամենայնիվ այս խաղաքարտը հիմնականում շահարկվում է արտաքին ուժերի կողմից:

Ազգայնականության առանցքի շուրջ սիրիական ինքնության կառուցումը հանդիսանում է, ըստ էության, այն ճանապարհը, որը հնարավորություն է ընձեռում պահպանել երկրի ամբողջականությունը և տարբեր համայնքների ու էթնիկ խմբերի համեմատ խաղաղ փոխհարաբերությունները: Այսօր նման զարգացման համար բարենպաստ իրավիճակ է ստեղծվել: Ուղղակի և անուղղակի նպաստող պայմաններ կարելի է դիտարկել լիբանանյան ճակատում անհաջողությունները, ինչպես նաև նոր ձևավորվող մերձավորարևելյան տրիումվիրատը Սիրիայի, Թուրքիայի և Իրանի մասնակցությամբ: Ակնհայտ է, որ այս համագործակցությունը հնարավոր է կարճաժամկետ հեռանկարում: Սիրիայի համար երկարաժամկետ ռազմավարության տեսանկյունից այս համագործակցությունը կարող է ուժեղացնել և ամրապնդել «Սիրիական ազգայնականության» տարրը Սիրիայի տարածքում բնակվող էթնիկ և կրոնական բազմատարր զանգվածի շրջանում:

Ամբողջական Սիրիայի գոյությունը՝ միավորված սիրիական ազգայնականության առանցքի շուրջ, բխում է Հայաստանի Հանրապետության շահերից, քանի որ այս պարագայում մի կողմից հնարավոր է լինելու ապահովել նշանակալի սիրիական հայ համայնքի անվտանգությունը, իսկ մյուս կողմից՝ սիրիական հասարակական և քաղաքական կյանքում համայնքի դերի բարձրացումը: Այս ամենը համապատասխան հստակ և հավասարակշռված քաղաքականության պարագայում կարող է զգալիորեն բարելավել վերջին շրջանում ոչ այնքան ակտիվ հայ-սիրիական հարաբերությունները:

Իրաք 2003-2007
Իրաքյան հարցին նվիրված ամերիկյան նորագույն հոդվածների տեսություն

Հնարավոր դաշինք բեն Լադենի ու Սադդամ Հուսեյնի միջև[53]

Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումից 4 տարի անց շատ մասնագետներ ու քաղաքական գործիչներ եկան այն եզրակացությանը, որ Իրաքի և ալ-Կաիդայի միջև համագործակցություն չի եղել:

2003թ. մարտի 17-ին ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը հայտարարեց՝ եթե Իրաքի նախագահը 48 ժամվա ընթացքում չլքի իշխանությունը, ԱՄՆ–ը կանցնի հարձակման: ԱՄՆ-ը հայտարարում էր, որ Իրաքը տիրապետում է զանգվածային ոչնչացման զենքի, որին ի վերջո կարող են տիրանալ նաև ահաբեկչական խմբավորումները, այդ թվում՝ ալ-Կաիդան: Ալ-Կաիդայի ու Իրաքի միջև դաշինքի ձևավորման վախն Իրաքի դեմ պատերազմն արդարացնելու հիմնական փաստարկն էր՝ Ալ-Կաիդայի կողմից Նյու Յորքի ու Վաշինգտոնի վրա կազմակերպած հարձակումների թարմ հիշողությամբ: Բուշի վարչակազմը պարբերաբար հայտարարում էր, որ այդ համագործակցությունն արդեն սկսվել է: Մասնավորապես, ԱՄՆ փոխնախագահ Ռիչարդ Չեյնին հայտարարեց, որ ահաբեկչական խմբավորումների ու անօրինական ռեժիմների միջև համագործակցությունն ուղղված է ԱՄՆ-ի դեմ:

Իրաքի ազատագրման գործողությունից 4 տարի անց վերոնշյալ փաստարկները մնում են չհիմնավորված. նախ՝ հայտնաբերված չեն զանգվածային ոչնչացման զենքի պաշարներ, երկրորդ՝ 9/11 կոմիտեի հայտարարության համաձայն՝ ալ-Կաիդայի ու Իրաքի իշխանությունների միջև կապը հաստատող շատ թույլ ապացույցներ կան, թեև ցածր մակարդակի շփումներ եղել են, սակայն հովանավոր-հովանավորյալ հարաբերությունը նրանց միջև չի եղել:

Այս կապի բացակայությունը հիմնականում բացատրվում է Սադդամի ու բեն Լադենի միջև գաղափարական սուր տարբերություններով: Բեն Լադենի ելույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա խիստ քննադատաբար է մոտենում Մերձավոր Արևելքի մի շարք բռնապետություններին, հատկապես Իրաքի

[53] Navin A.Barat, Daniel Ertley, Chansonette Hall, Mark Lancaster, “Perfect Allies? The Case of Iraq and Al Qaeda”, *International Studies Perspectives (International Studies Association)*, Volume 8, Issue 3, August 2007: 272-287.

բա'ասիստական իշխանությանը: Բեն Լադենն այնքան թշնամաբար էր մոտենում Սադդամին, որ 1990թ. Քուվեյթի պատերազմից հետո նրա դեմ սուրբ պատերազմ սկսելու կոչ արեց: Նա Սադդամին համարում էր խոչընդոտ իսլամական խալիֆաթի կառուցման ճանապարհին: Սադդամի ու բեն Լադենի միջև տարաձայնությունները հարց են առաջացնում. ինչպե՞ս կարող էին գաղափարապես երկու տարբեր կողմեր համաձայնության գալ այնպիսի կարևոր խնդրի շուրջ, ինչպիսին ռազմական դաշինքն է:

Բայց պատմությունը վկայում է, որ գաղափարապես հակադիր կողմերը, երբեմն իսկապես ձևավորում են դաշինքներ: Դրա վառ օրինակն ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի համագործակցությունն էր 2-րդ աշխարհամարտի ժամանակ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ ֆաշիստական Գերմանիայի: Նույն կերպ Ադոլֆ Հիտլերը դաշինք կազմեց Ճապոնիայի հետ՝ չնայած որ ճապոնացիներին արիացիներ չէին համարում: Նման օրինակները թեև բազմաթիվ չեն, սակայն փաստորեն գոյություն ունեն: Օրինակները բազմաթիվ են, երբ գաղափարապես տարբեր երկու կողմերից կազմված դաշինքի մի կողմը պետություն կամ պետական գործիչներ չեն. օրինակ՝ ԱՄՆ-ը հրապարակայնորեն օժանդակում էր աֆղանական մուջահիդներին ընդդեմ սովետական ուժերի՝ չնայած որ այդ խմբավորումների մեծ մասն, ըստ էության, հակաամերիկյան էր:

Այս օրինակներից ելնելով՝ կարելի է հարցադրել. արդյո՞ք բեն Լադենը, չնայած գաղափարական խորը հակադրությունների, չէր կարող դաշնակցել Սադդամի հետ: Չէ՞ որ կար ընդհանուր թշնամի: Բեն Լադենի համար գլխավոր նպատակն ԱՄՆ-ին Մերձավոր Արևելքից դուրս հանելն էր, իսկ Սադդամի համար ԱՄՆ-ի ներկայությունն սպառնում էր թե՛ իր ազգային ինքնիշխանությանը, թե՛ տարածաշրջանային հիմնական ուժ լինելու իր ցանկությանը: Երկու կողմերի համար էլ ԱՄՆ-ի հեռացումը տարածաշրջանից նշանակում էր դիրքերի ամրապնդում:

Այսպիսով, թվում է՝ երկու կողմերն էլ ունեին համագործակցության դրդապատճառներ, այդուհանդերձ Սադդամ Հուսեյն-բեն Լադեն դաշինքը ձախողվեց, և դրա համար կային լուրջ պատճառներ:

Մինչև դրանք քննարկելը, փորձենք հստակեցնել՝ ինչ է նշանակում ահաբեկչությանը պետական հովանավորություն տրամադրել: Տվյալ դեպքում գործ

ունենք դաշինքի այն ձևի հետ, որի մի կողմը ոչ պետական գործիչ է, այսինքն՝ համագործակցում են տարբեր կարգավիճակ ունեցող ուժեր: Կարելի է ասել, որ պետական հովանավորչությունն այս դեպքում նպատակ ունի ռազմական կարողությունը հզորացնելուն ուղղված համատեղ գործունեություն իրականացնել: Ենթադրենք՝ ահաբեկչական գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ է երկու պայման՝ ռազմիկներ և զենք: Հնարավոր է՝ ահաբեկչական խմբավորման առաջնորդներն ավելի հաջող են գործում զինվորներ հավաքագրելու, քան զինարտադրության գործում: Հովանավոր պետությունն էլ, հակառակը, զինարտադրության մեջ արդյունավետ է գործում, սակայն դժվարանում է զինվորներ հավաքագրել: Եթե խմբավորումն ու պետությունը գործեն որպես համատեղ արտադրողներ, ապա կկարողանան և՛ ավելի շատ զենք արտադրել, և՛ ավելի շատ կռվողներ ձեռք բերել: Երբ ահաբեկչական խմբավորումը ձեռք է բերում մեծ քանակությամբ զենք ու ահաբեկիչներ, ավելի հեշտությամբ է զիջումներ ձեռք բերում պետությունից, որն արդեն թիրախ է արտաքին ուժի կողմից: Հովանավորի ու հովանավորյալի միջև աստիճանաբար ձևավորվում է «անվտանգություն-վերահսկողություն» փոխզիջումային կապը: Հովանավոր պետությունն ահաբեկչական խմբի համար ապահովում է անվտանգություն, երբեմն՝ ինֆորմացիա և մարզումներ: Փոխարենը հովանավոր պետությունը որոշակի հսկողություն է սահմանում ահաբեկչական գործողությունների վրա: Քանի որ պետությունն ինքն է տրամադրում զենք ու մարզումների հնարավորություն տալիս, ապա այն կարող է որոշել նաև, թե երբ և որտեղ պետք է իրականացվեն գործողությունները, որն է լինելու թիրախը և այլն:

Չնայած նմանատիպ համաձայնությունները շահավետ են երկու կողմերի համար էլ, պատմությունը ցույց է տալիս, որ նման դաշինքները շատ հաճախ տխրահռչակ ավարտ են ունենում: Շատ դեպքերում կողմերը հրաժարվում են ստանձնած պարտավորություններից: Մի օրինակ. երբ Կուբայում Ֆիդել Կաստրոն վերցրեց իշխանությունը, շատ կուբացիներ անցան ԱՄՆ՝ ապաստարան գտնելու: Կենտրոնական հետախուզական վարչությունը վտարվածներին ապահովեց զենքով ու մարզումներով՝ հուսալով, որ նրանք կկարողանան իշխանությունը ետ վերցնել Կաստրոյից: 1961թ. ապրիլի 15-ին նրանք փորձեցին ներխուժել Կուբա: Երբ Կաստրոյի

հակառակորդները թվային առավելություն ձեռք բերեցին, ԱՄՆ-ից օդային ուժ պահանջեցին՝ համոզված լինելով, որ վերջինն անպայման օգնություն կուղարկի: Սակայն Ջոն Քեննեդին չգնաց այդ քայլին, որի արդյունքում Կաստրոյին հեռացնելու ջանքերը ձախողվեցին:

Այս օրինակը վկայում է՝ ոչ մի երաշխիք չկա, որ կողմերը չեն խախտելու համաձայնության պայմանները: Երկու կողմերն էլ իրենց պարտականությունները խախտելու համար դրդապատճառներ կարող են ունենալ: Ահաբեկիչների համար գործում է այն ռիսկը, որ պետությունը կարող է խզել համագործակցությունը, երբ այն շատ թանկ է կամ երբ ավելի հարմար առիթներ են ստեղծվում խնդիրների լուծման համար: Սակայն պետությունը ևս, հովանավորելով ահաբեկիչներին, մեծ ռիսկի է դիմում: Մինչև հովանավորություն ստանալը, ահաբեկչական խումբը կարող է շատ թույլ լինել, սակայն պետական հովանավորչության շնորհիվ այն կարող է հզորանալ և չափազանց ագրեսիվ դառնալ թիրախի նկատմամբ՝ դուրս գալով պետության վերահսկողությունից: Մի օրինակ ևս. 1967թ. վեցօրյա պատերազմի արդյունքում Իսրայելը Հորդանանից գրավեց Արևմտյան Ափն ու Արևելյան Երուսաղեմը: Այս պարտությունից հետո Հորդանանը կարգադրեց Պաղեստինի ազատագրման կազմակերպությանը դադարեցնել ահաբեկչական գործողությունները՝ վախենալով Իսրայելի կողմից նոր հարձակումներից: ՊԱԿ-ը (Պաղեստինի ազատագրական կազմակերպություն), գիտակցելով, որ հարվածները, միևնույն է, կրելու է Հորդանանը, ազատ իրականացնում էր իր գործողությունները՝ Հորդանանին ներքաշելով Իսրայելի հետ նորանոր կոնֆլիկտների մեջ: Այսպիսով, սկզբնապես սատարելով ՊԱԿ-ին՝ Հորդանանը նրան հզորացրել էր այն չափ, որ կառավարելն այլևս անհնար էր դարձել:

Վստահելիության չափորոշիչներ:

Պատասխանելու այն հարցին, թե ինչու բեն Լադենն ու Սադդամ Հուսեյնը չեն դաշնակցել, ուսումնասիրենք այն գործոնները, որոնք խոչընդոտում էին միմյանց նկատմամբ վստահության ձևավորմանը: Վստահության աստիճանը որոշելու համար պետք է հաշվի առնել հետևյալ 4 հիպոթեզը:

Ընդհանրապես միջազգային ասպարեզում համագործակցությունների հավանականությունը մեծ է, եթե կողմերը գիտեն, որ իրենց համագործակցությունն

ունի ապագա: Այդ դեպքում միմյանց հետ աշխատում են հաստատուն ու կայուն ուժեր: Այն, որ ահաբեկչական խմբավորումները հաճախ երկար կյանք չեն ունենում, և՛ պետությանը, և՛ խմբավորումներին ստիպում է հետապնդել կարճաժամկետ նպատակներ և ոչ թե աշխատել երկարաժամկետ ծրագրերի վրա:

Հիպոթեզ 1. *Ալ–Կաիդայի ու Իրաքի միջև համագործակցության հավանականությունը մեծ կլիներ, եթե կողմերը համոզված լինեին միմյանց կենսունակության ու կայունության մեջ:*

Համագործակցության երկրորդ գործոնը հեղինակությունն է: Խաղացող կողմերը շատ հաճախ հենվում են միմյանց նախկին վարքի վրա: Կարևոր է, թե ինչպես են նրանք նախկինում վարվել իրենց գործընկերների հետ: Սադդամի հետ համագործակցության նպատակահարմարությունը որոշելիս բեն Լադենն անպայման հաշվի կառներ՝ արդյո՞ք նա հավատարիմ է եղել իր նախկին դաշնակիցներին: Նույն մտավախությունը պետք է ունենար նաև Սադդամը: Եվ եթե նրանցից որևէ մեկը նախկինում խախտել է պարտականություններն իր դաշնակցի նկատմամբ, ապա համագործակցելու հավանականությունը նվազում է:

Հիպոթեզ 2. *Ալ–Կաիդայի ու Իրաքի միջև համագործակցության հավանականությունը մեծ կլիներ, եթե բարձր լիներ վստահելի գործընկեր լինելու նրանց հեղինակությունը:*

Երբեմն համագործակցությունը շատ թանկ է արժենում երկու կողմերի համար էլ: Օրինակ՝ համագործակցելով իրաքյան պետության հետ՝ ալ–Կաիդան կկորցներ իր ինքնիշխանությունը, որը թույլ կտար Սադդամին ինֆորմացիա տալ ԱՄՆ-ին կամ ճնշել ալ-Կաիդային՝ փոխարենը զիջումներ ստանալով ԱՄՆ-ից: Այս ռիսկը հաշվի առնելով՝ բեն Լադենը չէր համագործակցի Սադդամի հետ: Իրաքն, իր հերթին գիտակցելով, որ ալ-Կաիդան այնքան մոլի է իր գործողություններում, որ չի ենթարկվելու իր կարգադրություններին՝ կոնֆլիկտներ առաջացնելով ԱՄՆ-ի հետ, չէր համագործակցի ալ-Կաիդայի հետ: Մի կողմը կորցնում է իր ինքնիշխանությունը, մյուսը՝ վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս խախտել պարտավորությունները միմյանց նկատմամբ:

Հիպոթեզ 3. *Ալ–Կաիդայի ու Իրաքի միջև համագործակցության հավանականությունը փոքր էր, քանի որ մեծ էր միմյանց նկատմամբ պարտավորությունները խախտելու հավանականությունը:*

Համագործակցության հավանականությունը հաշվարկելիս՝ հարկ է հաշվի առնել կողմերի պահանջն այդ համագործակցության նկատմամբ: Եթե հակառակորդին միայնակ հակադրվելու գինը երկու կողմերի համար էլ շատ ծանր է, ապա նրանք, ամենայն հավանականությամբ, կփորձեն դաշնակցել, նույնիսկ եթե այդ համագործակցությունը վստահելի չի համարվում:

Բեն Լադենը, հայտնվելով անելանելի վիճակում, կարող էր դաշնակցել Սադդամի հետ: Նմանապես Սադդամը կարող էր համագործակցել բեն Լադենի հետ՝ չեզոքացնելու ԱՄՆ-ի հետ հնարավոր կոնֆլիկտը:

Հիպոթեզ 4. *Դաշնակցելու հավանականությունը մեծանում է, եթե ալ-Կաիդայի ու Իրաքի համար չափազանց ծանր է վճարել status quo-ի գինը:*

Մինչ այս հիպոթեզերն Իրաքի ու ալ–Կաիդայի դեպքում առանձին քննարկելը, դիտարկենք համագործակցության արդյունավետությունը կողմերի համար: Իրաքն ալ-Կաիդային կարող էր օգտագործել իր արտաքին քաղաքականության նպատակներն իրականացնելու համար: Իրաքին խանգարում էր ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը Սաուդյան Արաբիայում և հատկապես Իրաքի թռիչքային գոտում գործելու ԱՄՆ-ի կարողությունը: Սադդամը միայնակ չէր կարող լուծել այս հարցը: Նա հնարավորություն չուներ իր ուժերը սաուդական սահմանին մոտեցնել: Ալ–Կաիդան նրան կարող էր օգնել ոչ միայն ուղղակի ռազմական ուժով, այլև սաուդական կողմի վրա ճնշում գործադրելով, որպեսզի վերջինը հրաժարվի ԱՄՆ-ի ներկայությունից, մանավանդ որ այդ ներկայությունն այնքան էլ ընդունելի չէ սաուդական հասարակության համար: Բեն Լադենը կարող էր օգտագործել այս զգացական կողմը՝ ռազմական համալրման գործն ավելի ինտենսիվ դարձնելու համար: Եթե բեն Լադենի կոչերի շնորհիվ ըմբոստության ալիքն ուժեղանար, ապա սաուդական իշխանությունը գուցե ստիպված լիներ վերանայել իր ամերիկամետ դիրքորոշումը:

Բեն Լադենի համար ևս համագործակցությունը շահավետ կողմեր ուներ: Նախ՝ նրա գործունեության համար Իրաքը շատ հարմար էր՝ գտնվելով աշխարհաքաղաքական-ռազմավարական հարմար դիրքում՝Մերձավոր Արևելքի ու արևմտյան Ասիայի խաչմերուկում: Իրաքի տարածքն օգտագործելով՝ բեն Լադենը հեշտությամբ կարող էր ներթափանցել Սաուդյան Արաբիա: Բացի այդ, օգտագործելով իրաքյան ռազմական կարողությունը՝ բեն Լադենը կարող էր զարգացնել իր արշավն ԱՄՆ-ի դեմ: Չնայած անձնական միջոցների առկայությանը՝ բեն Լադենին լրացուցիչ միջոցներ էին անհրաժեշտ զինապաշար ձեռք բերելու, ռազմական ճամբարներ ստեղծելու համար: Թույլտվություն ունենալով օգտագործել Իրաքի տարածքն ու համատեղ ճամբարներ հիմնել՝ ալ–Կաիդան ձեռք էր բերում անվտանգ գոտում գործելու հնարավորություն:

Այդուհանդերձ, որքան էլ այս դաշինքը կարող էր երկկողմանի շահավետ լինել, վերոնշյալ հիպոթեզերն ուսումնասիրելով՝ գալիս ենք այն եզրակացությանը, որ ալ–Կաիդայի ու Իրաքի միջև համագործակցությունը քիչ հավանական էր:

Նայենք առաջին հիպոթեզը երկարատև համագործակցության վերաբերյալ: Սաուդյան Արաբիայից վտարվելուց հետո բեն Լադենը կանգնեց կազմակերպչական ճգնաժամի առաջ: Նա անցավ Սուդան, ուր դարձավ մեկը տասնյակ ռազմական գործիչներից: Լինելով փորձված կազմակերպիչ և տարբեր շարժումների հետ աշխատելու ունակ՝ նա վտանգավոր գործիչ էր մրցակիցների համար: 1994թ. նրա դեմ մահափորձ կազմակերպվեց: Բեն Լադենը հասկացավ, որ Սուդանը վստահելի չէ և կարող է վաճառել իրեն Արևմուտքից զիջում ստանալու համար: Ակնհայտ էր, որ բեն Լադենը թույլ ու անվստահելի էր երկարատև գործունեության համար:

Վստահության հարցում ևս գործոնները հօգուտ դաշինքի չէին խոսում (հիպոթեզ 2): Բեն Լադենը լավ հիշում էր Սադդամի դավաճանությունը Աբու Նիդալին: Այսինքն՝բեն Լադենն ավելի շատ կնախընտրեր գործել միայնակ: Սակայն նա ուժեղ ճնշման տակ էր Սուդանի կողմից և բավական ծանր դրության մեջ էր, ինչը ստիպում էր նրան համագործակցության եզրեր փնտրել Սադդամի հետ (հիպոթեզ 4): 1990-ականներին բեն Լադենը բավական մեծ համբավ ուներ մուսուլմանների շրջանում, սակայն շարունակում էր մնալ մեկը շատերի մեջ: Սադդամը պատճառ չուներ

մտածելու, որ բեն Լադենն ու նրա գործունեությունը երկար կյանք կունենան, տպավորությունն այն էր, որ բեն Լադենը կարճաժամկետ նպատակներ է հետապնդում, ուստի կանխատեսելի էր, որ դաշինք կազմելուց անմիջապես հետո նա կարող է դավաճանել:

1990-ականներին ծանր էր նաև Սադդամի դրությունը: Ճնշումն ԱՄՆ-ի կողմից գնալով ուժեղանում էր: Ավագ Բուշի վարչակազմի կողմից Սադդամի դեմ ապստամբության կոչից հետո Բաաս կուսակցությունն առճակատվեց շիական ու քրդական փոքրամասնությունների ընդվզումներին: ԱՄՆ-ը երկու ոչ թռիչքային գոտի սահմանեց Իրաքի հյուսիսում ու հարավում: Դա նշանակում էր, որ Սադդամը չէր կարող օգտագործել իր ամբողջ ռազմական կարողությունն ըմբոստներին ճնշելու համար: Սա հնարավորություն տվեց քրդերին Բաղդադից անկախ տարածքային միավոր ստեղծելու: Որոշ տվյալների համաձայն՝ Ծոցի պատերազմից հետո Սադդամը կորցրել էր վերահսկողությունն Իրաքի տարածքի 25-50%-ի վրա: Սադդամի իշխանությունն անկման շեմին էր: Իրաքը պատժամիջոցների էր ենթարկվում նաև ՄԱԿ-ի կողմից: Սահմանվեց առևտրային էմբարգո, թույլատրվում էր միայն սննդի ու դեղորայքի առևտուրը: Իրաքի տնտեսությունը քայքայվում էր: ԱՄՆ-ի հաջորդ նախագահ Բիլ Քլինթոնը ևս Սադդամին զսպելու քայլեր էր ձեռնարկում: Մասնավորապես, Քլինթոնը հրթիռակոծեց Սադդամի պալատներն՝ ի հատուցում նախկին նախագահ Բուշ ավագին սպանելու ահաբեկչական ծրագրի: Սադդամը հստակորեն գիտակցում էր, որ ԱՄՆ-ն ունի բոլոր հնարավորություններն իր իշխանությունը տապալելու: Այս պայմաններում ահաբեկիչների հետ համագործակցելը միայն կօգներ ԱՄՆ-ին հիմնավորել իր պահանջներն Իրաքի նկատմամբ: 2006թ. բացահայտված մի քանի ձայնագրություններ, որոնք կատարվել են Սադդամի ու նրա կառավարության ներկայացուցիչների հանդիպման ժամանակ, վկայում են՝ Սադդամն իրոք հաշվի է նստել այն փաստի հետ, որ ահաբեկիչների հետ համագործակցության դեպքում ԱՄՆ-ը լայնամասշտաբ հարձակում կարող է սկսել: Սադդամը մասնավորապես ասել է. «Ահաբեկչությունը մոտ է: Ես հայտնել եմ ամերիկացիներին և նաև բրիտանացիներին, որ ապագայում ահաբեկիչները կտիրապետեն զանգվածային ոչնչացման զենքի: Սակայն այս ամենն Իրաքից չէ գալիս»:

Այս ընթացքում փոխվում էր բեն Լադենի վիճակը: Տեղափոխվելով տալիբների կողմից կառավարվող Աֆղանստան՝ նա սկսեց կայունանալ: Ռազմական ու ֆինանսական օգնության դիմաց նա Աֆղանստանում ստացավ այն ազատությունը, որ հնարավորություն տվեց ստեղծել իր կազմակերպությունը: 1996թ. նա պատերազմ հայտարարեց ԱՄՆ-ին: 1998-ին Քենիայում ու Տանզանիայում ԱՄՆ-ի դեսպանատների պայթեցումը, որին Քլինթոնը պատասխանեց հրթիռային հարձակմամբ, ոչ թե զսպեց, այլ ավելի մեծ ժողովրդականություն բերեց բեն Լադենին: Նրա կազմակերպության անդամներն արդեն 1998թ. հասնում էր մի քանի հարյուր հազարի: Բեն Լադենի գործունեությունը դառնում էր հեռանկարային ու կենսունակ:

Մինչ այդ Սադդամի վիճակն ավելի էր վատթարանում: Սադդամը մերժեց կասկածելի զենքի շուրջ հետազոտություններ անցկացնելու ՄԱԿ-ի պահանջը: ԱՄՆ-ն սպառնում էր ռազմական գործողություններով: 1998թ. նոյեմբերի 16-ին ԱՄՆ-ն Իրաքի դեմ իրագործեց «Աղվեսն անապատում» գործողությունը, որն օդային մասսայական հարձակում էր՝ ուղղված միջուկային զենք արտադրելու՝ Իրաքի հնարավորությունների ոչնչացմանը:

Որոշ տվյալների համաձայն՝ 1999թ. իրաքյան մի քանի պաշտոնյաների ու բեն Լադենի միջև հանդիպում է տեղի ունեցել: Երկու կողմերն էլ իրենց ատելությունն են արտահայտել ԱՄՆ-ի նկատմամբ: Այնուամենայնիվ, 9/11 կոմիտեի զեկույցի համաձայն՝ այս հանդիպման արդյունք հանդիսացող համագործակցության ոչ մի ապացույց չկա: Հանդիպման ժամանակ ուժեղ կողմը բեն Լադենն էր իր հզորացող կազմակերպությամբ: Իր դիրքերը հաստատելու համար նա այլևս Իրաքի օժանդակության կարիքը չուներ:

Բեն Լադենը հաշվի էր նստում Սադդամի անվստահելիության հետ: Նա չէր կարող Իրաքին զիջել իր ինքնիշխանությունը: Այս ամենը ցույց է տալիս, որ նա հրաժարվում էր համագործակցել Սադդամի հետ ոչ թե քաղաքական գաղափարների համար, այլ պարզապես չէր վստահում նրան:

2001թ. 9/11-ը կտրուկ բարձրացրեց բեն Լադենի հեղինակությունն իսլամիստական շրջանակներում: Նա հայտարարվեց ԱՄՆ-ի թիվ մեկ թշնամի: Այս շրջանում Սադդամի համար համագործակցությունը բեն Լադենի հետ կնշանակեր հրավերք ԱՄՆ-ին Իրաք ներխուժելու համար: Los Angeles Times-ի համաձայն՝

Սադդամն ուղղակիորեն կարգադրում էր բոլորին որևէ գործարքի մեջ չմտնել ալ-Կաիդայի հետ:

2003թ. մարտին ԱՄՆ-ը ներխուժեց Իրաք, կարճ ժամանակում տապալեց իրաքյան բանակը և ապրիլի 9-ին Բաղդադի իշխանությունն իր ձեռքը վերցրեց: Հետագա ամիսներին, սակայն, ԱՄՆ-ն առճակատվեց համառ դիմադրության նախկին բաասիստների ու ֆիդայինների կողմից: Սադդամն իր կողմնակիցներով սկսեց դիմադրական ցանց ձևավորել, որին աստիճանաբար միանում էին մուջահիդներ տարբեր վայրերից: Նրանցից շատերը բացահայտորեն համակրում էին Օսամա բեն Լադենին, շատերն էլ ներկայանում էին որպես ալ-Կաիդայի անդամներ: Դժվար է ասել, թե ինչ չափով էին Սադդամն ու բեն Լադենը վերահսկում նրանց գործողությունները, այդուհանդերձ, հետաքրքրականն այն է, որ պարտիզանական պատերազմի սկզբնական շրջանում վախ հարուցող դաշինքն սկսեց գործել: Բաասիստներն ու ալ-Կաիդան վերջապես, կարծես, համագործակցում էին: ԱՄՆ-ի դեմ կռվելու Սադդամի հնարավորությունն այնքան էր փոքրացել, որ նա ստիպված էր համագործակցել մուջահիդների հետ (հիպոթեզ 4): Այս անգամ status quo-ի գինը շատ թանկ էր Սադդամի համար: Սակայն հաշվի առնելով առաջին հիպոթեզը՝ հարկ է նշել, որ այս համագործակցությունը հիմնված չէր երկարատևության ու երկարաժամկետ նպատակների վրա, այլ պարզապես՝ անհրաժեշտության:

Պետականության կառուցումն ու անցումային քաղաքականությունն Իրաքում[54]

2003թ. ԱՄՆ-ի ներխուժումից հետո Իրաքը մտավ քաղաքական նոր գործընթացների փուլ, որ նպատակ ուներ բարեփոխել Իրաքի պետությունը և ստեղծել ժողովրդավարական կառույցներ: Իրաքի պետությունն արմատապես փոխելուն ուղղված քայլերը, սակայն, ԱՄՆ-ի ու նրա իրաքյան դաշնակիցների կողմից իրականացվեցին որպես վերից վար անցումային և ոչ որպես արմատական գործընթացներ: 2003թ. հունիսին ստեղծվել էր ամերիկացիներից ու իրաքցիներից կազմված Ժամանակավոր կոալիցիոն իշխանություն, որը 2004թ. իշխանությունը հանձնեց Իրաքի կառավարող խորհրդին: Մինչև 2005թ. խորհրդարանական ընտրությունները քաղաքական գործընթացներն իրականացվում էին ԱՄՆ-ի ու նրա իրաքյան դաշնակիցներից կազմված Կառավարող խորհրդի ու ժամանակավոր կառավարության կողմից:

Անցումային գործընթացների ոչ ճիշտ կառավարման արդյունքը եղավ երկրի ներսում քաղաքական և տնտեսական ուժերի բաժանման վերաբերյալ համաձայնության ձախողումը:

Նախ՝ 2005թ. հունվարին խորհրդարանական ընտրություններին հիմնական առաջնորդներն ու ընտրազանգվածը համաձայնության չեկան, թե ինչպես պետք է կառավարվի երկիրն անցումային շրջանում: Սուննի առաջնորդները բոյկոտեցին ընտրությունները, իսկ սահմանադրության մշակման գործընթացին մասնակցեցին միայն մեկ ամիս: Երկրորդ՝ այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին էին դաշնայնությունը, կրոնը, պետությունը և կանանց իրավունքները, համընդհանուր քննարկման առարկա չդարձան: Որպես արդյունք՝ երկիրը սահմանադրության ստեղծման ձևավորման գործընթացն սկսեց առանց այս հիմնարար սկզբունքների շուրջ լուրջ քննարկումների ու եզրակացությունների: Երրորդ՝ համընդգրկուն քննարկումների բացակայությունը նշանակում էր, որ ազգային նոր ֆիգուրների վերհանման համար չէին ստեղծվել անհրաժեշտ պայմաններ: Չորրորդ՝ ընտրական ցուցակներն արտահայտում էին ոչ թե ընդհանուր հասարակական, այլ առանձին կրոնական ու էթնիկ ներկայացվածություն:

[54] Katia Paragianni, “The Building and Transitional Politics in Iraq: The Perils of a Top-down Transition”, *International Studies Perspectives (International Studies Association)*, Volume 8, Issue 3, August 2007: 253-271.

Ժամանակավոր ադմինիստրատիվ օրենքի համաձայն՝ ազգային ժողովի ընտրությունները պետք է տեղի ունենային 2005թ. հունվարի 31-ին: Կոալիցիոն իշխանությունը հրապարակեց թիվ 96 հրամանը՝ «Ընտրական օրենքը», որն արդյունք էր Իրաքում ՄԱԿ-ի անցկացրած կոնսուլտատիվ աշխատանքների: Ըստ օրենքի՝ Իրաքում գործելու էր ընտրական միասնական ձև՝ համամասնական ներկայացվածության սկզբունքով: Արդար ընտրությունների վերաբերյալ խորը կասկածներ ունեին սուննիները. նրանք պնդում էին, որ սուննի ընտրազանգվածի համար անվտանգությունն ապահովված չէ, ինչն արգելում էր նրանց հոսքն ընտրամաս: Սուննի առաջնորդների կողմից ընտրությունները բոյկոտվեցին, որի արդյունքում սուննի ընտրողները չնչին տոկոս կազմեցին: Իրաքի ընտրազանգվածը քվեարկեց հիմնականում էթնիկ սկզբունքից ելնելով: Արդյունքում խորհրդարանում շիաները զբաղեցրին 48%, քրդական կոալիցիան՝ 27%, ժամանակավոր կառավարության վարչապետ Իյադ Ալաուիի խմբակցությունը՝ 14%: Սուննիները խորհրդարանում զբաղեցրին ընդամենը 17 աթոռ:

Նախընտրական շրջանում քաղաքական գործընթացների բացակայության արդյունքում խորհրդարանը չկարողացավ համաձայնության գալ նաև հետընտրական շրջանում: Միայն երեք ամիս անց իրաքյան լիդերները համաձայնության եկան ժամանակավոր կառավարություն ստեղծելու հարցում: Սուննիները հայտարարեցին, որ մասնակցելու են սահմանադրության մշակման պրոցեսին և առաջիկա ընտրություններին: Սահմանադրության մշակման աշխատանքներին, սակայն, սուննիներին չտրվեց ակտիվ մասնակցության հնարավորություն: Սկզբում 55 անդամից բաղկացած սահմանադրական կոմիտեում կար ընդամենը երկու սուննի ներկայացուցիչ, հետագայում նրանք տասնհինգն էին: Սակայն մինչ նրանց միանալը կոմիտեին, շիա և քուրդ ներկայացուցիչներն արդեն համաձայնության էին եկել փակ դռների ետևում՝ առանց սուննի ներկայացուցիչների: Սահմանադրության նախագիծը, որ հենված չէր փոխզիջումային համաձայնության վրա, մերժվեց սուննիների կողմից: Այն քննարկման դրվեց երկրորդ անգամ, և սուննիները կրկին հավանություն չտվեցին: Միայն հանրաքվեից մի քանի օր անց համաձայնություն ձեռք բերվեց, որ նորընտիր խորհրդարանը հետագայում կբարեփոխի սահմանադրությունը: Այս

համաձայնությունից հետո սուննի առաջնորդները կոչ արեցին իրենց հետևորդներին քվեարկել հօգուտ սահմանադրությանը: 2005թ. հոկտեմբերի 15-ին քվեարկողների 78.6 %-ը կողմ քվեարկեց սահմանադրությանը, իսկ 21.4%-ը՝ դեմ: Սուննիական Անբար և Սալահեդդին մարզերում քվեարկողների մեծամասնությունը դեմ էր սահմանադրությանը: Այս հանրաքվեն ավելի սրեց հարաբերությունները մի կողմից արաբների ու քրդերի, մյուս կողմից՝ սուննիների ու շիաների միջև: 2005թ. հոկտեմբերին ընդունված սահմանադրությունը չապահովեց երկրի ապագայի վերաբերյալ փոխզիջումային մոտեցում: Իրաքի առաջնորդները համաձայնության չեկան նաև այնպիսի կարևոր հարցի շուրջ, ինչպիսին է բնական ռեսուրսների շահագործումը:

Շատերի կարծիքով երկարատև քննարկումներն ու համատեղ աշխատանքն այլ արդյունք կարող էին ապահովել սահմանադրական հանրաքվեի համար: Իրականում սուննիներն այնքան էլ կոշտ դիրքորոշում չէին որդեգրել, որոշ սուննի առաջնորդներ նույնիսկ հավանություն էին տվել ֆեդերալիզմի որոշակի մոդելի: Սակայն նրանց ժամանակ ու հնարավորություն չտրվեց շատ սկզբունքներ ըմբռնելի ու ընդունելի դարձնել ընտրողների համար:

Ի՞նչ է անհրաժեշտ կոնֆլիկտային կամ ետկոնֆլիկտային երկրներում պետական կառույցների ստեղծման համար: Ըստ փորձագետների՝ նախ վստահելի ու համոզիչ երաշխիքներ պետք է առաջարկվեն բոլոր քաղաքական ուժերին առ այն, որ նրանց շահերը նոր համակարգում պաշտպանվելու են: Փորձագետները պնդում են նաև, որ խաղաղության ու պետության ստեղծման գործընթացն ավելին է, քան առաջին ընտրություններին պատրաստվելը: Նրանց պնդմամբ պետական կառույցները դիմակայուն են, եթե ներկայացնում են իրական շահեր և շահերի իրական բախում: Ուստի՝ պետական կառույցները չեն կարող պարզապես պարտադրվել արտաքին ուժի կողմից, դրանք պետք է բխեն, զարգանան ու հասունանան տեղական իրականությունից: Ընտրություններից առաջ անհրաժեշտ է անցկացնել խորհրդակցական բարձր մակարդակի աշխատանքներ և ապահովել հասարակական օժանդակություն, որը լեգիտիմություն կապահովի պետական նոր համակարգի համար: Սա երկարատև գործընթաց է, որում արտաքին ուժն, անշուշտ, մեծ դեր ունի հասարակական անվտանգություն, ծառայություն ապահովելու և ազգային առաջնորդներին անհրաժեշտ

փոխզիջումների դրդելու գործում: Սակայն նրա ազդեցությունը պետք է սահմանափակ լինի:

Մի կողմից քաղաքացիական հասարակության ու ժողովրդավարական ուժերի թուլությունը ստիպում է արտաքին խաղացողներին ազգային առաջնորդներից իշխանությունն ամբողջությամբ իրենց ձեռքը վերցնել: Մյուս կողմից՝ պետական նոր կառույցների պարտադրումն արտաքին ուժերի կողմից խոցելի հետևանք է ունենում: Նման կառույցներն անմիջական ազդեցություն չեն կարող ունենալ հասարակության վրա, քանի որ չեն բխում նրա ներքին պահանջներից, այլ պարզապես պարտադրվում են:

Փորձագետներն այս խնդիրը հաղթահարելու մի քանի տարբերակներ են առաջադրում: Ոմանք պնդում են, որ մի երկրում, ուր պետական ապարատն այլևս գոյություն չունի, ՄԱԿ-ը պետք է ստանձնի կառավարման հստակ գործառույթներ: Նրա հանդես գալը զուտ որպես միջնորդող ու կարգավորող ուժ անհամապատասխան է ստեղծված իրավիճակին: Ոմանք պնդում են, որ մինչև մրցակցային քաղաքականությանն անցնելը պետք է ձևավորել ինստիտուցիոնալ համակարգ, քանի որ շուտափույթ լիբերալիզացիան կարող է նոր կոնֆլիկտներ առաջացնել: Սակայն այս ձևակերպումները չեն պատասխանում հետևյալ հարցին. ինչպե՞ս պետք է պետական կառույցները ձեռք բերեն ազգային ու էլիտար զանգվածի օժանդակությունը: “Ելքի”, քիչ թե շատ ձևավորված պետական կառույցների հանձնումն ազգային առաջնորդներին մնում է չլուծված խնդիր: Բացի այդ, երբ տեղական ուժերը չեն մասնակցում այս գործընթացներին, նրանք ավելի են հակադրվում արտաքին ուժերին:

Անցումային շրջանը ղեկավարելու մեթոդի վերաբերյալ մյուս առաջարկը համաձայնության գալն է տեղական իշխանական էլիտայի ու արտաքին ուժերի միջև: Համատեղ անցումային վարչակազմը երկիրն առաջնորդում է դեպի առաջին ընտրություններ, ինստիտուտների վերակառուցում ու սահմանադրության շուրջ բանակցություններ: Ենթադրվում է, որ օտար ռազմական ուժերի, միջազգային վարչակազմի ու տեղական էլիտայի ոչ մեծ խմբի համատեղ աշխատանքը կապահովի հասարակության օժանդակությունը, կիրականացվեն լայնածավալ քննարկումներ երկրի ապագայի շուրջ, և ընտրությունների արդյունքում իշխանության կգան լեգիտիմ

ուժեր: Այս տարբերակը, սակայն, ետկոնֆլիկտային երկրներում կողմերի անհամաձայնության պատճառով այնքան էլ արդյունավետ չի գործում:

Երրորդ այլընտրանքն անցումային շրջանն անմիջականորեն տեղական քաղաքական ուժերի կողմից ղեկավարելն է: Իհարկե, արտաքին ուժերի օգնությունը, հատկապես ռազմական ոլորտում, անհրաժեշտ է: Սակայն տեղական քաղաքականությունն անմիջապես պետք է գործարկվի, իսկ արտաքին ուժերը պետք է հնարավորին չափ շուտ հեռանան երկրից: Պետականության կառուցման գործում արտաքին օժանդակությունը չի կարող փոխարինել տեղական միջոցներին: Նոր պետական կառույցները պետք է ներքին քաղաքական գործընթացներից ծնվեն:

Խնդիրն այն է, որ երկրի սահմանադրությունը չի կարող և չպետք է պարտադրված լինի դրսից: Ուստի՝ սահմանդրության ընդունման հարցում կարևոր է ոչ միայն փաստաթուղթը որպես արդյունք, այլև այն գործընթացները, որոնք տանում են այդ փաստաթղթի ձևավորմանը: Արտաքին ուժերը պետք է նպաստեն, որպեսզի սահմանադրությունը մշակվի ընդգրկուն քննարկումների, տեղական ուժերի ու հասարակության համաձայնության արդյունքում: Դրանով պետք է սահմանափակվի արտաքին ուժերի միջամտությունը սահմանադրության մշակման ու ընդունման գործում: Արտաքին ուժերը պետք է նպաստեն նաև հասարակության մեջ կարգուկանոնի հաստատմանն ու հասարակական ծառայությունների ապահովմանը:

Իհարկե, լայնածավալ քննարկումներ, խորհրդակցություններ կազմակերպելը դյուրին գործ չէ: Ետկոնֆլիկտային երկրներում մշտապես մեծ է լարվածությունը, սակայն փորձը ցույց է տալիս, որ դրանք ամենից արդյունավետ միջոցն են նույնիսկ այն երկրներում, որտեղ բռնությունները դեռևս սպառնալիք են:

Իրաքում անցումային գործընթացի յուրաքանչյուր փուլ զուրկ էր կոնսեսուսային համաձայնություններից, խորհրդակցություններն անցկացվում էին միայն նեղ շրջանակներում: Մինչդեռ ԱՄՆ-ի ու իրաքյան էլիտայի ընտրած կուրսը, որ մինչ օրս իրեն չի արդարացրել, ուներ այլընտրանք: 2003թ. ամերիկյան ներխուժումից անմիջապես հետո կարելի էր ստեղծել Իրաքյան ժամանակավոր կառավարություն Իրաքի կառավարող խորհրդի փոխարեն, իսկ Ժամանակավոր ադմինիստրատիվ օրենքի փոխարեն, որն ընդունվել էր փակ դռներից այն կողմ և չէր ապահովում որևէ

ընդգրկուն քննարկում ընտրազանգվածի համար, կարելի էր կազմակերպել լայնածավալ քննարկումներ, բանավեճեր: Ընտրական օրենքը հաշվի էր առնում ոչ թե ազգային միասնական ընտրազանգվածը, այլ Իրաքի առանձին մարզերը: Ազգային կոնֆերանսը կարող էր բարեփոխել ժամանակավոր ադմինիստրատիվ օրենքը, և վերջապես, սահմանադրության շուրջ բանակցությունները պետք է շարունակվեին սուննիների հետ՝ թույլ տալով նաև միջազգային միջնորդների, հատկապես ՄԱԿ-ի միջամտությունն այս հարցին:

Այսպիսով, հիմնական գործողներն էին ԱՄՆ-ն ու իրաքյան էլիտայի մի նեղ շրջանակ, ինչը թույլ չտվեց հաշվի նստել այլ գործիչների կարծիքի հետ և տալ նրանց երաշխիք իրենց շահերի պաշտպանման վերաբերյալ: Արդյունքում յուրաքանչյուր փուլ մեկ այլ փուլի էր անցնում առանց լուծում տալու հիմնական մարտահրավերներին:

Ռազմավարություն և հետևանքներ[55]

Այսօր Իրաքում կայունությունն ու անվտանգությունն ապահովված չէ: Սա դրդում է քննադատներին այլընտրանք առաջ քաշել Բուշի վարած ռազմավարությանը, քանի որ դրանով է պայմանավորվում Իրաքում ընդվզումների հավանականությունը, դրա աճն ու կանխարգելումը:

2007թ. հունվարին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը ներկայացրեց Իրաքի իրավիճակը կայունացնելու ծրագիրը, որի հիմնական կետն Իրաքում ամերիկյան զինված ուժերի ավելացումն էր[56]: Նպատակը Բաղդադի փողոցներում խաղաղության հաստատումն էր ու դեմոկրատիայի հաջողության ապահովումը: Այս ռազմավարության քննադատները պնդում էին, որ ամերիկյան զինվորական ներկայությունը 21.500 զինվորներով ավելացնելը միայն կուժեղացնի հակաամերիկյան տրամադրությունը, կնպաստի նոր բռնություններին:

Կանխատեսումների համաձայն՝ Իրաքում ամերիկյան ուժերի փոքրաքանակ ավելացումը չի ծառայելու իրավիճակի կայունացմանը: Ըմբոստությունները գրեթե նույն տեմպով շարունակվելու են:

Աճի ռազմավարությանն այլընտրանք է էսկալացիայի ռազմավարությունը: Սա նշանակում է զինված ուժերի մեծաքանակ ավելացում, որը պետք է իրականացվի երկու փուլով՝ սկզբում մինչև 500.000, ապա՝ 1.000.000, ինչն ընդվզումները կկրճատի 16%-ով:

Մյուս այլընտրանքն է ամերիկյան ու բրիտանական զինված ուժերի դուրսբերումն Իրաքից: Սա նշանակում է, որ Իրաքում գործելու է զուտ իրաքյան 134 հազարանոց զորքը, կամ այն ևս կրճատվելու է մինչև 65.000: Սակայն կանխատեսումների համաձայն՝ այս ռազմավարությամբ ընդվզումների 51 ու 53% հավանականություն է լինելու համապատասխանաբար: Այն իր արդյունավետությամբ շատ քիչ է տարբերվելու զորքի փոքրաքանակ ավելացման ռազմավարությունից:

Վերոնշյալ ռազմավարությունների հաջողությունը մեծապես կախված է այն բանից, թե երբ և ինչ պայմաններում են դրանք գործադրվում: Կանխարգելիչ քայլերն

[55]Andrew J. Enterline, J. Michael Greig, " Surge, Escalate, Withdraw, and Shinseki: Forecasting and Retro-casting American Force Strategies and Insurgency in Iraq", *International Studies Perspectives (International Studies Association),* Volume 8, Issue 3, August 2007: 245-253.

[56] Բուշի այս ելույթը տեղադրված է Սպիտակ տան կայքի արխիվում՝ http://www.hitehouse,gov/news/releases/2007/01/200701107.html

ավելի արդյունավետ են, երբ ընդվզումները դեռ նոր են սկիզբ առնում, քան երբ դրանք արդեն հասուն բնույթ ունեն:

Չորրորդ ռազմավարությունը «Շինսեկիի» ռազմավարությունն է: Այն կոչվում է ԱՄՆ զինված ուժերի գեներալ Էրիկ Շինսեկիի անունով: Նա դեռ 2003թ. Իրաք ներխուժելուց առաջ պնդում էր սենատի Զինված ծառայությունների կոմիտեին, որ մի քանի հարյուր հազարանոց բանակ է անհրաժեշտ ետպատերազմյան Իրաքը կայունացնելու ու վերականգնելու համար: Շինսեկիի այս առաջարկը հրապարակայնորեն քննադատվեց հատկապես պաշտպանության փոխքարտուղար Փոլ Վուլֆովիցի կողմից: Բոսնիայում փորձ ձեռք բերած գեներալի պնդմամբ Իրաքում խաղաղություն հաստատելու համար առավել կարևոր էր զինված ուժերի ճիշտ օգտագործումը ետպատերազմական շրջանում, և որ 2003թ. զանգվածային ներխուժումն Իրաք անհամեմատ կնվազեցներ ընդվզումների հավանականությունը 2007թ.:

Փխրուն խոստումները և արտաքին քաղաքականության աղբյուրները. անդամակցության սահմանափակ ազդեցությունը և տեղական ընտրախավի առաջնահերթությունը:

(Թարգմանվում է կրճատումներով)

Այս հոդվածը քննարկում է միջազգային կազմակերպությունների ազդեցությունը տարբեր պետությունների արտաքին քաղաքականության վրա: Որպես օրինակ օգտագործվում են երկու ուժեղագույն միջազգային կազմակերպությունները՝ ՆԱՏՕ-ն և ԵՄ-ն, և նրանց ազդեցությունն անդամակցության ձգտող երկրների քաղաքականության ընտրության հարցում: Մինչ այժմ գիտնականները պնդել են, որ Հյուսիս–ատլանտյան դաշինքի և Եվրամիության անդամակցության դիմորդ երկրներն այս կազմակերպությունների անդամ դառնալու նպատակով ձևափոխել են իրենց թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունները: Մենք փաստարկում ենք, որ պոտենցիալ անդամ երկրների առջև դրված պայմաններն ավելի քիչ են ազդում, քան սովորաբար ներկայացվում է. պատճառն այն է, որ և՛ դիմորդ, և՛ անդամ երկրները, հակառակ ընդունված պնդումների, իրականում այդքան ուշադրություն չեն դարձնում ֆորմալ չափանիշներին: Փոխարենը, մենք փորձում ենք հիմնավորել, որ ներքին քաղաքականությունը, մասնավորապես՝ ընտրախավի նախապատվությունները, թե՛ տրամաբանության, թե՛ էմպիրիկ տեսանկյունից գերապատվելի դիրք ունի արտաքին պայմանների նկատմամբ: Իհարկե, որոշ առումներով թե՛ ՆԱՏՕ-ն, թե՛ Եվրամիությունը բավականին հաջողակ էին, քանի որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում, բայց ոչ բոլորում, ներքին պայմանները համընկնում էին «Եվրոպական» ակնկալիքների հետ:

Հոդվածում մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք փոքրամասնությունների իրավունքների և սահմանային հարցերի շուրջ ընթացած բանակցությունների վրա, քանի որ սրանք ոչ միայն շատ ակնառու խնդիրներ են, այլև հսկայական կարևորություն ունեցող գործոններ քաղաքական կայունության համար: Մենք, մասնավորապես, դիտարկում ենք պայմանադրության (conditionality) տեսաբանների կողմից մեջբերվող անկյունաքարային օրինակներից մի քանիսը, և մեր եզրահանգումները կատարում՝

հաշվի առնելով հնարավոր հետևանքները թե՛ տեսության, թե՛ քաղաքականության մշակման տեսանկյունից:

Քաղաքական գործիչները և գիտնականները գտնում են, որ ՆԱՏՕ-ին և Եվրամիությանն անդամակցելու գործընթացներն արժեքավոր մեխանիզմ են ոչ միայն միասնական՝ «ամբողջական և ազատ» Եվրոպա ստեղծելու, այլև անդամակցության դիմորդ երկրների քաղաքականությունները սահմանափակելու համար:

Հոփֆի[57] փաստարկներից մեկը վերաբերում է Խորհրդային Միության հետնորդ պետությունների առջև դրվող պայմաններին. առաջարկվում էր ստեղծել մի համակարգ, որը պարգևներ կառաջարկեր լավ պահվածքի դիմաց: Հիմնական գաղափարն այն է, որ ՆԱՏՕ-ն և Եվրամիությունը բավականին մարտահրավերներ են ունեցել ընդարձակման ներկա փուլին նախորդած ժամանակահատվածում. օրինակներից մեկը Հունաստանի և Թուրքիայի միջև եղած տարաձայնություններն էին: Ավելին, ընդարձակումը դիտարկվեց իբրև անդամակցության գրավչությունը կիրառելու հնարավորություն, որի միջոցով հնարավոր կլիներ ստիպել կամ համոզել կոմունիստական բլոկի փլուզման արդյունքում ծնված պետություններին իրենց պահվածքն առավել մոտեցնել Արևմտյան Եվրոպայի երկրների օրինակին: Եթե այս փաստարկները ճիշտ են, ապա Եվրոպան ապագայում պետք է քիչ թե շատ զերծ լինի կոնֆլիկտներից, քանի որ անդամակցության հարցը լուծվում է խոստացված բարեփոխումներով: Դժբախտաբար, պայմանադրության տեսաբանների պնդումները ուռճացված են: Արևելյան Եվրոպայի երկրներում քաղաքական գործընթացներն, իհարկե, կենտրոնացված են եղել ՆԱՏՕ-ին և Եվրամիությանն անդամակցելու նպատակի շուրջ, սակայն վիճարկելի է այն պնդումը, ըստ որի դրանք գերակայող են եղել այլ հնարավոր շահերի նկատմամբ:

Մենք փաստարկում ենք, որ անդամակցության հետ առնչվող գործընթացներն՝ իբրև արտաքին և ներքին քաղաքականության վրա ազդող գործիքներ, իրենց էությամբ սահմանափակ են: Նախ, քանի որ անդամակցությունն ինքնին քաղաքական է, որևէ երկրի՝ որևէ կազմակերպության անդամակցությանը վերաբերող վերջնական որոշումն ավելի շատ պայմանավորված է անդամ երկրների համար սպասվելիք օգուտներով, քան թե դիմորդ երկրների կողմից ֆորմալ չափանիշների պահպանմամբ: Երկրորդ, ՆԱՏՕ-ի

[57] Hopf, Tedd. (1992) Managing Soviet Disintegration: A Demand for Behavior Regimes. *International Security.* 17 (1) Summer: 44-75.

և Եվրամիության անդամակցությունը կոմպլեքս գործընթաց է, այնպես որ, պայմանների բազմազանությունը թուլացնում է դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը: Երկրներն անդամակցության իրավունք են ստացել, թեև թերացել են հիմնական պայմանները բավարարելու հարցում: Երրորդ, երկրները կարող են պայմանագրեր ստորագրել և նույնիսկ օրենքներ ընդունել՝ ստեղծելով արտաքին կառույցների սահմանած չափանիշներին համապատասխանելու տպավորություն, սակայն այդ չափանիշների գործադրումը կարող է այդպես էլ տեղի չունենալ: Չորրորդ, հենց որ ավարտվում է անդամակցության գործընթացը, և երկիրը միանում է տվյալ կազմակերպությանը, նա կարող է խախտել խոստումները և վերադառնալ իր կողմից նախընտրած գործողությունների ուղուն: Չնայած այն հանգամանքին, որ որոշ երկրներ ընդամենը վերջերս են անդամակցության իրավունք ստացել, նրանց վարքն այնպիսին է՝ կարծես անդամակցությունը սահմանափակումներ չի էլ ենթադրում: Հինգերորդ, պայմանադրության ժամանակի ընտրության և պետությունների վարքագծի միջև հստակ կորելյացիա չկա. որոշ երկրներ չափավոր պահվածք էին ցուցաբերում նախքան այն պահը, երբ հստակ դարձավ անդամակցության իրական լինելը, և երբ առաջադրվեցին չափորոշիչները: Այս ամենը միասին վերցրած, լուրջ տրամաբանական և էմպիրիկ մարտահրավեր է ներկայացնում այն տեսակետներին, որոնք շեշտը դնում են պայմանադրության ազդեցությունների վրա:

Մենք չենք վիճարկում անդամակցության գործընթացների նշանակությունը, պարզապես փաստարկում ենք, որ ներքին քաղաքական զարգացումներն ինչպես տրամաբանության, այնպես էլ էմպիրիկ տեսանկյուններից ավելի առաջնահերթ են: Եթե քննելու լինենք դիմորդ պետություններում որոշում կայացնողների համար ամենամեծ կարևորություն ունեցող գործոնները, ապա արտաքին լսարանը՝ նույնիսկ այնպիսի հզոր կառույցներ, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն և ԵՄ-ը, առաջնահերթությունների ցանկում քաղաքական կենսունակության խնդրից շատ ավելի ցածր տեղ են զբաղեցնում: Մինչդեռ արտաքին կառույցի կողմից ստացված հավանության գնահատականը կարող է հիմք ստեղծել քաղաքական գործչի՝ իր պաշտոնում մնալու համար, ազդեցությունն անուղղակի է՝ ներքին գործընթացների միջոցով: Այդ պատճառով, ինչպես կքննարկենք ստորև, ներքին շահերն ու գործընթացներն են, որ ձևավորում են քաղաքական

գործիչների կողմնորոշումները՝ կապված տարածաշրջանային կազմակերպությունների խոստումների և սպառնալիքների հետ: Ստորև կանդրադառնանք նաև այն իրողությանը, որ խնդրո առարկա երկրներում հիմնական իրադարձությունները զարգացան, իսկ շահերն ի հայտ եկան նախքան ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի պահանջադրության քաղաքականության մեկնարկը և, անշուշտ, մինչև դրա հավաստի դառնալը:

Այս հոդվածում մենք ցույց ենք տալիս, որ միջազգային ինստիտուտների դերը գերագնահատված է: Չնայած արտաքին դերակատարների կարևորությունն անժխտելի է, մասնավորապես եվրաատլանտյան ընդարձակման գործընթացի համատեքստում, ներքին քաղաքական դինամիկան առաջնային է: Սա կարող է ակնհայտ թվալ, բայց պայմանադրության հետ կապված բանավեճերի մեծ մասը կենտրոնացած է միջազգային կողմի վրա՝ հանգեցնելով պայմանադրության արդյունավետության վերաբերյալ սխալական ակնկալիքների: Նախ, մենք ընդգծում ենք ներքին քաղաքականության մի քանի կարևորագույն ասպեկտներ, որոնք իբրև ուղեցույց են հանդիսանում Սառը պատերազմից հետո Արևելյան Եվրոպայի երկրներում կատարված իրադարձությունները դիտարկելու համար: Երկրորդ, մենք անդրադառնում ենք պայմանադրության տեսաբանների այն պնդումներին, ըստ որոնց, ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի անդամակցության գործընթացները վճռական դերակատարություն են ունեցել Արևելյան Եվրոպայի երկրների վարքագծի ձևավորման գործում, մասնավորապես՝ փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականության և սահմանային վեճերի բնագավառներում: Երրորդ, մենք քննարկում ենք, թե ինչով է պատճառաբանված պայմանադրության սահմանափակ բնույթն ազդեցություն գործելու հարցում:

Ներքին քաղաքականության առաջնահերթությունը

Ակնհայտ է, գուցե նույնիսկ տրիվիալ, այն պնդումը, ըստ որի քաղաքական գործիչներն ավելի շատ հոգում են ներքին քաղաքականության, քան արտաքին ազդեցությունների մասին, և սխալ կլիներ պայմանադրության տեսաբաններին ներկայացնել որպես ներքին քաղաքականությունն անտեսող մարդիկ: Մենք ցանկանում ենք վերահաստատել, որ ներքին քաղաքականությունը թե՛ տրամաբանորեն, թե՛ էմպիրիկ տեսանկյունից առաջնային է: Միջազգային ուժերը ֆիլտրվում են պետության

ներսում առկա շահի և ուժի համակարգերի միջով, և սրանից բխող հետևանքները կարևոր են հասկանալու համար ոչ միայն ոչ վաղ անցյալը, այլև ապագան:

Մենք սկսում ենք այն դասական ենթադրությունից, ըստ որի քաղաքական գործիչների հիմնական շարժառիթը քաղաքական պաշտոնի հասնելու ձգտումն է, քանի որ սա նպատակների մեծ մասի իրագործման նախապայման է հանդիսանում: Սա հանգեցնում է մեկ այլ կարևոր հարցադրման. ո՞վ կամ ի՞նչն է ամենահավանական սպառնալիքը քաղաքական գործչի պաշտոնին: Թեև ԱՄՆ-ի ներխուժումն Իրաք և Աֆղանստան թույլ են տալիս պնդել, որ արտաքին ուժերը կարող են քաղաքական գործիչներին և կուսակցություններին հեռացնել իշխանությունից, սրանք շատ արտասովոր օրինակներ են: Սովորաբար քաղաքական գործիչների համար սպառնալիք են ընտրությունները, պետական հեղաշրջումները, ինչպես նաև այն գործընթացները, որոնք արտաքին ուժերի ճնշման արդյունք լինելով, իրենց բնույթով գլխավորապես ներքին են: Խնդրո առարկա ժամանակահատվածին և տարածաշրջանին առավել հատուկ է ընտրությունների դինամիկան, քան թե հեղափոխությունների հնարավորությունը. այդ իսկ պատճառով, մենք մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք դրանցից առաջինի վրա: Այսպիսով, քաղաքական գործիչների համար առաջնահերթություն պետք է լինի իրենց ուշադրության կենտրոնացումն ընտրողների նախասիրությունների և դժգոհությունների վրա: Ընտրողների նախապատվությունները ձևավորում են այն հնարավորությունները, խթանները և պարտավորությունները, որոնք քաղաքական գործիչները պարտավոր են կա՛մ լուծել, կա՛մ անտեսել՝ աչքի առջև ունենալով իրենց իսկ պաշտոնը կորցնելու վտանգը:

Սահմանային հարցերը և փոքրամասնությունների իրավունքները

Այս հոդվածում մենք անդրադառնում ենք սահմանային տարածքներին և փոքրամասնություններին առնչվող պայմանադրությանը մի քանի պատճառով: Նախ, պայմանադրությունների շուրջ քննարկումների մեծ մասը վերաբերում է այս ոլորտներին: Երկրորդ, անդամակցության ողջ գործընթացը եղել և մնում է չափազանց խճճված մի համակարգ: Երրորդ, ամենապարզ ձևակերպումով կարելի է ասել, որ խնդիրների այս խումբն ամենակարևորն է Եվրոպայի անվտանգության տեսանկյունից՝ չհաշվելով օրենքի ուժի և ժողովրդավար կառավարումից խուսափելու

հնարավորությունները: Սահմանային վեճերը պատերազմի հիմնական պատճառներից են: Փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունները միջպետական կոնֆլիկտների նշանակալի աղբյուր են հանդիսանում:

Հաշվի առնելով Հարավսլավիայի տարրալուծումով պայմանավորված լոկալ և ռեգիոնալ վնասների չափը՝ այս բնույթի պայմանադրությունների առաջնային խնդիրն է կանխել միջպետական և ներպետական բռնությունը: Մեր կարծիքով, այս հարցերն առավել կարևոր են, քան ֆիսկալ պահանջները կամ ֆինանսական կարգավորումները:

Եվրոպայի գայթակղությունը: Պայմանադրություն և ինտեգրում

Քելլին[58] տարբերակում է դնում պայմանադրության և սոցիալիզացիայի միջև, ուր առաջինը վերաբերում է այն ջանքերին, որոնք գործադրվում են որոշում կայացնողների կողմից օգուտ-գին հաշվարկների վրա ազդեցություն գործելու համար:

Մենք մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք պայմանադրության և ոչ թե սոցիալիզացիայի վրա՝ պարզության համար և Քելլիի լավ հիմնավորված փաստարկի պատճառով, ըստ որի զոնե կարճաժամկետ առումով պայմանադրությունն ավելի մեծ նշանակություն է ունեցել, քան սոցիալիզացիան: Սոցիալիզացիան երկարաժամկետ գործընթաց է, որը գուցեև սերունդներ տևի. ուրեմն, անկեղծ լինելով պետք է ասել, որ մենք կարող ենք ադեկվատ գնահատական տալ միայն պայմանադրությանը, քանի որ վերջինի ազդեցությունն, ըստ տեսության, տեղի է ունենում գրեթե անմիջապես:

Թե՛ ՆԱՏՕ-ն, թե՛ ԵՄ-ն նոր պետությունների անդամակցությունը կապել են լավ վարքագծի և Եվրոպական չափանիշներին համապատասխանելու հանգամանքի հետ: ՆԱՏՕ–ին անդամագրվելու համար պետությունները պետք է իրականացնեն հետևյալ պահանջները:

- Նրանցից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի ֆունկցիոնալ ժողովրդավարական քաղաքական համակարգ՝ հիմնված շուկայական տնտեսության սկզբունքների վրա:
- Նրանք պետք է փոքրամասնություն կազմող բնակչությանը վերաբերվեն ԵԱՀԿ չափանիշների համաձայն:

[58] Kelley, Judith G. (2004) *Ethnic Politics in Europe: The Power of Norms and Incentives. Princeton:Princeton University Press.*

- Նրանք պետք է լուծած լինեն հարևանների հետ առկա ակնբախ վեճերը և ընդհանուր նվիրում ունենան վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքին:
- Նրանք պետք է հնարավորություն և պատրաստակամություն ունենան Դաշինքին ռազմական օգնություն ցուցաբերելու և մյուս անդամների ուժերի հետ համագործակցելու հարցում:
- Նրանք պետք է նվիրում ունենան առ ժողովրդավարական քաղաքացիական–ռազմական հարաբերությունները և ինստիտուցիոնալ կառույցները:

1993թ. կոպենհագենյան հանդիպման ժամանակ ԵՄ-ը հայտարարեց իր չափանիշները՝

- Ժողովրդավարություն երաշխավորող կայուն ինստիտուտների առկայություն:
- Օրենքի իշխանություն, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանություն և հարգանք նրանց իրավունքների նկատմամբ:
- Ֆունկցիոնալ շուկայական տնտեսության առկայություն:
- Միության շրջանակներում շուկայական ուժերի և մրցակցային ճնշումների հետ համակերպվելու ունակություն:
- Անդամակցության պարտավորությունների կատարում, ներառյալ՝ տնտեսական և ֆինանսական միասնականության պարտավորությունն ստանձնելու ունակություն:

Պայմանադրության հիմնական փաստարկն այն է, որ Արևմտյան Եվրոպան կարողացավ այս հարցերի վերաբերյալ կոնցեսիա ձեռք բերել, քանի որ անդամակցությունը համարվել և համարվում է մեծ հաղթանակ:

Արևելյան Եվրոպայի նոր դեմոկրատական երկրներն անդամակցության էին ձգտում վերջինի հետ կապված օգուտների և Եվրոպայի հետ միասնությամբ պայմանավորված ավելի մեծ ձեռքբերումների համար: ՆԱՏՕ-ին անդամակցությունը մեծապես ամրապնդում է անդամ երկրների անվտանգությունը, քանի որ ավելի քիչ հավանական է, որ արտաքին ուժերը (օրինակ՝ Ռուսաստանը) կսպառնան ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի դաշնակիցներին: Անդամակցությունը ԵՄ-ին համարվում է

տնտեսական հաջողության գրավական: Ավելին, անդամակցությունն այս կազմակերպություններին կարող է նաև կարևոր լինել ազգային ինքնության առումով: Օրինակ՝ կարելի է հայտարարել, որ երկիրը եվրոպական է և ոչ թե բալկանյան, կամ՝ Երկրորդ կամ Երրորդ աշխարհից: Անդամակցությունը կարող է նաև կարևոր լինել ներքին քաղաքականության տեսանկյունից, քանի որ հաջողակ դիմորդների ղեկավարները կարող են հայտարարել, որ հենց իրենց լուրջ քաղաքականության շնորհիվ է, որ երկիրն անդամակացություն է ձեռք բերել: Ինչ խոսք, հաշվի առնելով այս երկու կազմակերպությունների կողմից դրված պահանջները և անդամակցության դիմորդ երկրների հսկայական ջանքերը, կարելի է եզրակացնել, որ անդամակցությունը շատ կարևոր է:

Այնուամենայնիվ, մենք պետք է զգույշ լինենք արտաքին ազդեցությունները չգերագնահատելու համար: Ստորև մենք քննարկում ենք պայմանադրությանը ներհատուկ որոշ սահմանափակումներ:

Անդամակցություն. ի՞նչ է պետք անել և ու՞մ պետք է ճանաչել

Հավատն առ այն, որ Եվրամիությունը հետևելու է հայտարարված չափանիշներին, թույլ էր հենց սկզբից: ԵՄ առաջին ջանքերը փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու հարցում, իր միասնական արտաքին քաղաքականության հետ միասին, անհաջողության մատնվեց Հարավսլավիայում: Բադինթերի հանձնաժողովին տրվեց իրավունք որոշելու, թե Հարավսլավիայի նախկին հանրապետություններից որոնք են արժանի ճանաչման՝ փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականության և այլ գործոնների հիման վրա: Քննարկելով բոլոր այն միավորների հարցը, որոնք ձգտում էին առանձնանալ Հարավսլավիայից՝ հանձնաժողովը համարեց, որ Սլովենիան և Մակեդոնիան ամենից հարմար թեկնածուներն են՝ հիմք ընդունելով նրանց քաղաքականությունը փոքրամասնությունների նկատմամբ: Մակեդոնիայի դեպքում կարևորվում էր հատկապես ալբանացի բնակչությունը: Այնուամենայնիվ, հանձնաժողովը քննադատական վերաբերմունք արտահայտեց Խորվաթիայի և Բոսնիայի նկատմամբ՝ առաջարկելով չճանաչել երկուսից և ոչ մեկին: Սակայն ներեվրամիութենական քաղաքականության պատճառով, մասնավորապես հաշվի առնելով Գերմանիայի և

Հունաստանի կողմնակալ վերաբերմունքը համապատասխանաբար Խորվաթիայի և Մակեդոնիայի նկատմամբ, հանձնաժողովի առաջարկներն անտեսվեցին: ԵՄ-ը ճանաչեց Խորվաթիային, բայց ոչ Մակեդոնիային, ինչն ազդանշան էր, որ չափորոշիչներն ավելի քիչ կարևորություն ունեցող առաջնահերթություն են, քան ԵՄ անդամ երկրներին քաղաքականապես առնչվող լսարաններին բավարարելը:

ԵՄ անդամակցության վերաբերյալ 2004թ. ընդունված որոշումների փուլը բացահայտեց այն սխալ պատկերացումը, ըստ որի ԵՄ-ն նոր անդամներ է ընդունում միայն ըստ նրանց արժանիքների: ԵՄ-ն 2002թ. սկզբներին հայտարարեց, որ տարվա վերջը սահմանում է որպես վերջնաժամկետ ընդարձակման հետ կապված բանակցությունների համար, սակայն արդեն հունիսին պարզ դարձավ, որ անդամակցության համար դիմած պետությունները չեն կարողանա բավարարել բոլոր պահանջները: Մինչև նշված ժամկետը թեկնածուների ճնշող մեծամասնությունն անկարող էր եղել իրականացնել շուկայական ռեֆորմները ֆինանսական ոլորտում և մրցակցային քաղաքականության բնագավառում. սա նշանակում էր, որ այս պետությունները թերացել էին ԵՄ-ի «մրցակցային ճնշումներին համակերպվելու» չափանիշին համապատասխանելու հարցում:

Ավելին, ԵՄ-ի ամենանոր անդամները՝ Բուլղարիան և Ռումինիան, ընդունվեցին կազմակերպության շարքերը՝ չնայած այն բացահայտորեն ճանաչված փաստին, որ այս երկրները չեն համապատասխանում հիմնարար չափանիշներին դատական ռեֆորմների, կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցերում: Արդյունքում, ԵՄ-ն ձևավորեց լրացուցիչ ընթացակարգ՝ «ապահովության միջոցառումներ», որի նպատակն է անդամակցությունից հետո Բուլղարիային և Ռումինիային պարտադրել ստանձնած պարտականությունների կատարման հարցում: Այսինքն, նրանք անդամակցեցին՝ չնայած թերացումներին:

«Եթե մերիտոկրատիան գերակայող չէ, ապա ԵՄ-ում ազդեցիկ հովանավոր ունեցող դիմորդը ևս կարող է հատուկ վերաբերմունք ակնկալել»:[59] Հատուկ վերաբերմունքը ճիշտ այն ձևակերպումն է, որով կարելի է բնութագրել Կիպրոսի անդամակցությունը: Չնայած հատկացված մեծ ուշադրությանը՝ Կիպրոսը չկարողացավ

[59] Vachudova, Milada Anna. (2005) *Europe Undivided: Democracy, Leverage and Integration After Communism.* Oxford: Oxford University Press.

լուծել իր վեճը կղզու չճանաչված մասի՝ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության հետ:

Եթե անդամակցությունը հիմնված չէ արժանիքների վրա, ապա ինչու՞ են միայն առանձին պետություններ հրավիրվում Միություն: Բացահայտ է, որ պատասխանը քաղաքականությունն է՝ ինչպես ներքին, այնպես էլ միջազգային:

Քաղաքականությունը մի բան է, պարտավորությունների իրականացումը՝ մեկ այլ

Երկրները կարող են խոստանալ, որ կբարեփոխեն իրենց երկրների թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությունը՝ մինչև անգամ օրենքների և կանոնադրությունների ընդունման և հրապարակման մակարդակով: Վերջին հաշվով, պայմաններին համապատասխանելը կախված է այն բանից, թե որքանով է երկիրն իրականացնում բարեփոխումները: Խնդիրն այն է, որ իրականացման ծավալները բավականին տարբեր են եղել, և համաձայնագրերով որոշված շատ պայմանավորվածություններ ընդհանրապես չեն էլ իրականացվել: «Ռումինիայում միջազգային նորմերի ներքին տեղայնացման ընթացքում պրոբլեմներն ի հայտ եկան հենց գործադրման փուլում, երբ ակնհայտ դարձավ որոշակի նորմատիվ կանոնների վերաբերյալ կոնսենսուսի բացակայությունը»:[60]

Անդամակցությունը ՆԱՏՕ-ին ենթադրում էր փոփոխություններ պաշտպանության բնագավառին կատարվող հատկացումներում. օրինակ՝ երկրները պետք է իրենց ծախսերը կատարեին որոշակի սահմաններում: Սակայն, «անդամի կարգավիճակ ստանալուց հետո, բոլոր նոր երկրների շրջանում նկատվեց նախապես ստանձնած պարտավորությունները շրջանցելու և նախնական պաշտպանական նպատակները փոխելու միտում»:[61]

Անդամակցությունը ենթադրում է արտոնություններ

Եվրոպայի ապագայի կարևորագույն հարցերից է՝ արդյո՞ք նոր անդամները, հայտնվելով ակումբում, կշարունակեն համապատասխան վարք ցուցաբերել: Այս

[60] Freyberg-Inan, Annette. (2002:131) Which Way to Progress? Impact of International Organizationsin Romania. In *Norms and Nannies: The Impact of Internatioanl Organizations on the Central and East European States,* edited by Ronald H. Linden. Lanham, MD: Rowman&Littlefield.

[61] Kamp, Karl-Heinz. (2003:192) The Dynamycs of Nato Enlargement. In *Ambivalent Neighbors: The EU, NATO, and the Price of Membership,* edited by Anatol Lieven, and Dimitri Trenin. Washington, DC: Carnegie Endowment for International Peace.

կապակցությամբ երկու խնդիր կա: Առաջին, անդամ երկրների համար փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքի ԵՄ ստանդարտներ գոյություն չունեն, և շատ քիչ հավանական է, որ այս առնչությամբ լուրջ օրենսդրություն կընդունվի: Երկրորդ, վատ անդամներին ակումբից հեռացնելու հեռանկարը կամ անհավատալիության աստիճան դժվար է կամ անհնար:

Ներկայում լայնորեն քննարկվում է երկակի ստանդարտների հարցը. ԵՄ օրենսդրությունը չի նախատեսում, որ անդամակցության համար հայտ ներկայացրած երկրները պետք է ռեֆորմներ անցկացնեն իրենց՝ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության հարցում: Այսինքն՝ ներկա անդամները պարտավոր չեն կատարել այն պահանջները, որոնք ներկայացված են անդամակցության հայտ ներկայացնող երկրներին: ԵՄ-ն չունի մի մեխանիզմ, որը կվերահսկի, թե ինչպես է Գերմանիան վերաբերվում իր թուրք բնակչությանը, Իսպանիան՝ բասկերին, Մեծ Բրիտանիան՝ Հյուսիսային Իռլանդիային և այդպես շարունակ:

Բացի այդ, գոյություն չունի որևէ ֆորմալ գործընթաց կամ նախադեպ, որի միջոցով անդամ երկրները կհեռացվեն ՆԱՏՕ-ից կամ ԵՄ-ից: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չի լինի բացառել նոր անդամների կողմից այս կառույցների նորմերի խախտումը (օրինակ՝ Թուրքիան և Հունաստանը՝ անցյալում Կիպրոսի հարցերում ներգրավված լինելու համար) ՝ շատ քիչ հավանական է թվում, որ իրականում հեռացման որևէ գործընթաց կսկսվի: Քանի որ երկրների հեռացումը հնարավոր չէ, անդամակցություն ստանալուց հետո նոր անդամների նկատմամբ ազդեցության միջոցներն արագորեն նվազում են:

Եզրահանգումներ

Մենք չենք պնդում, թե միջազգային կառույցները կարևոր չեն: Նրանք կարևոր են և ազդեցիկ, սակայն նրանց առաջադրած պայմանների դերը բավականին սահմանափակ է: Ուստի, շեշտը դնելով պայմանադրությունների վրա, մենք կարող ենք միջազգային կազմակերպությունների ազդեցության վերաբերյալ շատ ավելի լավատես լինել, քան հարկավոր է:

Մինչդեռ ամենամեծ կարևորություն ունեցող գործոնը քաղաքականություն արարողների շահն է: Ճշմարիտ է, որ միջազգային ինստիտուտները կարող են ձևավորել շահերը, սակայն, վերջիվերջո, քաղաքական գործիչները պետք է կենտրոնանան իրենց համար ամենամեծ կարևորություն ներկայացնող լսարանի վրա՝ այն լսարանի, որ կարող է հեռացնել նրանց իշխանություններից: Եթե ընդարձակումը և անդամակցությունը փոփոխություն է բերում որոշումների կայացման գործընթացներում, ապա այդ դեպքում ազդեցությունը կարող է նշանակալի լինել, քանի որ համապատասխանաբար կփոխվեն նաև համապատասխան ընտրախավերը և շահերը: Այնուամենայնիվ, շատ դեպքերում առանձին պետությունների առաջնորդներ զանազան արտաքին հնարավորություններին և սահմանափակումներին պատասխան տալու ժամանակ առաջնային կհամարեն իրենց ընտրազանգվածների ակնկալիքները:

Թարգմանության աղբյուրը՝

Stephen M. Saideman, “Pie Crust Promises and the Sources of Foreign Policy: The Limited Impact of Accession and the Priority of Domestic Constituencies.”*Foreign Policy Analysis*, Volume 3, Issue 3, July 2007.

ՔՄՀԿ կազմ

Դավիթ Հովհաննիսյան
Տաթևիկ Մկրտչյան
Վահագն Ագլյան
Հայկ Քոչարյան
Հովհաննես Հովհաննիսյան
Տիգրան Մաթոսյան
Սոնա Գրիգորյան

15 նոյեմբեր 2007

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական համալսարան
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ. (37410) 551674
էլ.փոստ cccs@ysu.am